

17786

Հ. Շ. ԱՅՎԱՆ
Վ. Ս. ՄԱԼԻԳԱՆ
Լ. Ա. ԿԱՊՈՒՏՅԱՆ
Կ. ՅԵ. ՎՈՐՃԻՆՅԱՆ
Ս. Ի. ԿԱԼԿԻՆ
Ա. Ա. ԱՆԴՐԵՅԵՎ
Ա. Բ. ԱԿԿՈՎՅԱՆ

Ա. Ա. ԳԴԱՆՑՈՎ
Ն. Ի. ՅԵԺՈՎ
Ն. Ա. ԽՐԱԻԵԶԵՎ
Գ. Ս. ԴԻՄԻԵՐՈՎ

ՃԱՌԵՐ՝ ԱՐՏԱՊԱՆՎԱԾ
Խ Ա Հ Մ
ԳԵՐԱԳՈՒՔՆԵՐՆ ԽՈԲՀՐԴԻՒ
ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ

324(47)

6-32

24

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՆԻ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՐ

15 JAN 2010
26 SEP 2006

324 (47)
Փ-32

Ի. Գ. ԱՏԱԼԻՆ
Վ. Մ. ՄՈՒՍՈՎ
Լ. Մ. ԿՈՎԱՆՈՎ
Գ. ՅԵ. ՎՈՐՈԽԻՆ
Մ. Ի. ԿՈՒՖԻՆԻ
Ա. Ա. ԱՆԴՐԵՅԵՎ
Ա. Ի. ՄԻԿԱՅՈՎ
[REDACTED]
Ա. Ա. ԺԴԱՆՈՎ
Ե. Ի. ՅԵՖԻՆ
Ա. Ա. ԽՐԱՅՇՉԵՎ
Գ. Մ. ԳԵՂԻՄԻՐՅԱՆ

ՃԱՌԵՐ ԱՐՏԱՍԱՆՎԱԾ
ԽԱՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈԲՀՐԴԻ
ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ



ՊԵՏՀԱՆԱԿ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1938

X250X
1137

20 JUN 2013

17886



4250-91

3321
38

РЕЧИ НА СОБРАНИЯХ ИЗБИРАТЕЛЕЙ
В ВЕРХОВНЫЙ СОВЕТ СССР

Армгиз—Издательство полит. литературы
Ереван, 1938

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ
(ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ) ԿՈԽԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵՅԻ ԴԻՄՈՒՄԸ

ԲՈԼՈՐ ԸՆՏՐՈՂՆԵՐԻՆ, ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ, ԲԱՆՎՈՐՈՒՀԻՆԵՐԻՆ,
ԳՅՈՒՂԱՅԻՆՆԵՐԻՆ ՅԵՎ ԳԵՂԱԿՈՒՀԻՆԵՐԻՆ, ԿԱՐՄԻՐ, ԲՄՆԱԿԻՆ,
ԽՈՐՃՐԴԱՅԻՆ ԽՆՏԵԼԻԳԵՆՅԻԱՅԻՆ

ԸՆԿԵՐՆԵՐ

1937 թվի դեկտեմբերի 12-ին Խորհրդային Միության աշխատավորները մեր սոցիալիստական Սահմանադրության հիման
վրա ընտրելու յեն ԽՍՀ Միության Գերագույն Խորհրդի պատգամավորներ :

Բոլշևիկների կուսակցությունն ընտրություններին հանդիսանքալիս ԲԼՈԿ կազմած, ԴԱՇԻՆՔ կնքած անկուսակցական բանվորների, գյուղացիների, ծառայողների, ինտելիգենցիայի հետ :
Ընտրական ոկրուգներում ցուցակագրված՝ Գերագույն Խորհրդի պատգամավորթյան—ինչպես կոմունիստ, այնպես և անկու-

սակցական—քեկնածուներն առաջադրված էն բանվորների ու ծառայողների ընդհանուր ժողովների կողմից՝ ըստ գործարանների, կարմիր-բանակայինների ժողովների կողմից՝ ըստ գորամասերի, կոլտնտեսականների ու մենատնտեսների ժողովների կողմից՝ ըստ գյուղերի, կոմունիստների ու անկուսակցականների ընտրական դաշինքի հիման վրա: Այդ քեկնածությունները միահամուռ կերպով պաշտպանեցին աշխատավորների բազմարիվ միտինգներն ըստ ընտրական ոկրուգների ու տեղամասերի:

Բոլշևիկների կուսակցությունը չի անջրպետվում անկուսակցականներից, այլ, ընդհակառակը, դեպի ընտրություններն է գնում անկուսակցականների հետ բլոկ կազմած, դաշինք կնքած, գնում է բանվորների ու ծառայողների պրոֆեսիոնալ միությունների հետ, կոմյերիտմիության և անկուսակցականների մյուս կազմակերպությունների ու ընկերությունների հետ բլոկ կազմած:

Հետևապես, պատգամավորության քեկնածուները կլինեն ընդհանուր՝ ինչպես կոմունիստների, այնպես և անկուսակցականների համար, ամեն մի անկուսակցական պատգամավոր պատգամավոր և լինելու նաև կոմունիստների կողմից, նիշտ այնպես, ինչպես ամեն մի կոմունիստական պատգամավոր լինելու յեղատգամավոր անկուսակցականների կողմից:

Բոլշևիկների կուսակցությունը կոչ և անում բոլոր կոմունիստներին ու համակրողներին համերաշխ կերպով, մեկ մարդու պես ձայն տալ ինչպես կուսակցական, այնպես և անկուսակցական քեկնածուների ոգտին:

Բոլշևիկների կուսակցությունը վստահ է, վոր անկուսակցական ընտրողները նույնպես համերաշխորեն ձայն կտան կոմունիստ քեկնածուների ոգտին, ինչպես անկուսակցական քեկնածուների ոգտին:

Ընտրողները հիմք ունե՞ն արդյոք ֆվերկելու բոլշևիկյան կուսակցության քեկնածուների ոգտին:

Բոլշևիկների կուսակցությունը արժանի յև արդյոք ժողովրդի այն վստահությանը, վորը նա նկատի ունի առաջիկա ընտրություններում:

Ի՞նչ եր մեր հայրենիքն առաջ և ի՞նչ դարձավ նա խորհրդային իշխանության տարիների ընթացքում, բոլշևիկյան կուսակցության դեկավարության որով:

Ի՞նչ եր մեր հայրենիքը կալվածատերների ու կապիտալիստ-

ների տիրապետության որով և ինչի՞ հասալ նա բանվորների ու գյուղացիների իշխանության որով, բոլշևիկյան կուսակցության դեկավարության որով:

Խորհրդային իշխանության տարիների ընթացքում մեր յերկրի կերպարանքը փոխվեց արմատապես: Հետամնացության ու միջնադարի, խավարի և անկուտուրականության, աղքատության, աշխատավորների իրավագրկության ու ննշման յերկրից, ինչպիսին եր հեն Ռուսաստանը, մեր յերկիրը վերածվեց առաջավոր, կուտուրական, հզոր սոցիալիստական տերության:

Այդ հաջողություններին մեր ժողովուրդը հասավ բոլշևիկների կուսակցության դեկավարությամբ:

Ով գգտում է այն բանին, վոր մեր հայրենիքն այսուհետև ևս լինի հզոր, կուլտուրական ու ազատ սոցիալիստական տերություն, նա ձայն կտա կոմունիստների ու անկուսակցականների բլոկ քեկնածուների ոգտին:

Մեր յերկրում ընդմիշտ լիկվիդացիայի յեն յերարկված սնտեսության կապիտալիստական սխսեմն ու շսհագործող գասակարգերը, վերացված և արտադրության գործիքների ու միջոցների մասնավոր սեփականությունը և վոչնչացլած և մարդու շահագործումը մարդու կողմից: Վորպես մեր խորհրդային հասարակության անխախտ հիմք՝ հաստաված և արտադրության գործիքների սոցիալիստական սեփականություններին:

Մեր ժողովուրդն այս համաշխարհային-պատմական հաղթանակը ձեռք բերեց բոլշևիկների կուսակցության դեկավարությամբ:

Ով գգտում է այն բանին, վոր Խորհրդային Միության աշխատավորներն ընդմիշտ ազատ լինեն շսհագործման լծից, նա խատավորներ տարդիմիշտ ազատ լինեն շսհագործման լծից, նա ձայն կտա բոլշևիկների կուսակցության ոգտին, նա ձայն կտա կոմունիստների ու անկուսակցականների բլոկ քեկնածուների ոգտին:

Սոցիալիզմի հաղթանակը ԽՍՀՄ մեջ ապահովեց արդյունաբերության ծաղկումը: Յերկու հնգամյակների տարիների ընթացքում սուեղծված և առաջնակարգ արդյունաբերություն, վոր բացքաված և ժամանակակից տեխնիկայով: Մեր սոցիալիստական հագեցված և ժամանակակից տեխնիկայով: Մեր սոցիալիստական գեղարդիկաների ու գործարանների արտադրության ծավալը գեղարդիկաների ու գործարանների արտադրության ծավալը գե-

րագանցում ե նախապատերազմյան ժամանակվա արդյունաքեռության արտադրության ծավալից ավելի քան ութն անգամ:

Մեր ժողովուրդն այս հաջողությունները ձեռք բերեց բոլշևիկյան կուսակցության դեկավարությամբ:

Ով ճգուտմ ե այն բանին, վոր մեր ինդուստրիան առաջիկայում ևս զարգանա, առաջ անցնելով կապիտալիստական յերկրության, նա ձայն կտա բոլշևիկների կուսակցության ոգտին, նա ձայն կտա կոմունիստների և անկուսակցականների բլոկի քեկնածուների ոգտին:

Մեր յերկրի գյուղատնտեսության մեջ ավելի քան յերկու տասնյակ միլիոն մանր ու մանրագույն անհատական գյուղացիական տնտեսությունների փոխարեն, վորոնք ունեյին քույլ տեխնիկա և յենթարկված եյին կալվածատիրոջ և կուլակի ննջման, անել և ամրապնդվել են կալվածատերերից ու կուլակներից ազատ խոշոր սոցիալիստական տնտեսություններ— ավելի քան 243 հազար կոլտնտեսություններ, վորոնց առատորեն մատակարարվել են սրակտորներ, կոմբայններ ու ժամանակակից գյուղատրնտեսական այլ մեթենաներ։ Մեր կոլտնտեսային գյուղատնտեսությունը խորհունտեսությունների հետ միասին, յերեւ նկատի ունենանք նրա բոլոր նյուղերը, այժմ արտադրում է յերկու անգամ ավելի մքերեններ, քան նախապատերազմյան ժամանակվա գյուղատնտեսությունը։

Մեր ժողովուրդն այս համաշխարհային-պատմական հաղթանակը ձեռք բերեց բոլշևիկների կուսակցության դեկավարությամբ։

Ով ճգուտմ ե այն բանին, վոր մեր կոլտնտեսություններն ու խորհունտեսություններն առաջիկայում ևս ծաղկեն, մեր յերկրին տպավու գյուղատնտեսական մթերքների լիառատություն, նա ձայն կտա բոլշևիկների կուսակցության ոգտին, նա ձայն կտա կոմունիստների և անկուսակցականների բլոկի քեկնածուների ոգտին։

Սոցիալիզմի հաղթանակը ԽՍՀՄ մեջ ապահովեց աշխատավորների դրության արմատական բարելավումը։ Ցարական Ռուսատանում միշտ յեղել է գործազուրկների հսկայական մասսա, ինչպես վոր այն կա ամեն մի կապիտալիստական պետության մեջ նաև այժմ։ Նյութական անապահովություննը, անվատական վագվա որվա նկատմամբ, աղքատությունը բանվոր դասակարգի մշտական բաժինն եյին։ Խորհուրդների իշխանության

որով ընդմիջու վոչնչացված ե գործազրկությունը։ Աշխատել ցանկացող խորհրդային բաղադացու առջև վաղվա որվա նկատմամբ անվատական հարց յերբեք չի ծառանա։ Մեր յերկրի բոլոր բաղադացիների համար որենինվ տպահովված է աշխատանիքի, հանգստի, ծերության ժամանակ նյութական ապահովության իրավունքը։

Մեր ժողովուրդն այս հաջողությունները ձեռք բերեց բոլշևիկյան կուսակցության դեկավարությամբ։

Ով ճգուտմ ե այն բանին, վոր մեր յերկրի աշխատավորներն առաջիկայում ևս զարա լինեն ամեն տեսակ գործազրկությունից և վաղվա որվա նկատմամբ անվատական բաղադացիների ու ծառայողների նյութական-կենցաղային դրության հետագա բարելավում, նա ձայն կտա բոլշևիկների կուսակցության ոգտին, նա ձայն կտա կոմունիստների և անկուսակցականների բլոկի քեկնածուների ոգտին։

Ի՞նչ եր գյուղացին կալվածատերերի ու կապիտալիստների իշխանության որով։ Նա ամենալիշագուրկ, ամենաիրավագուրկ մարդն եր։ Նախահեղափոխական գյուղում կար ավելի քան 40 միլիոն չքավոր բնակչություն՝ մարդիկ, վորոնց բաժինն եր սպի ու աղքատությունը։ Խորհրդային կարգերը, վոր լիկվիդացիայի յենթարկեցին կալվածատերերին, վոչնչացրին կուլակյային սորկությունը, գյուղացիներին հաճանեցին ավելի քան 150 միլիոն հեկտար կայութափական ու կուլակյային հողեր և ապահովեցին կոլտնտեսային կարգերի հաղթանակը, ընդմիջու ազատեցին գյուղացիությունից չքավորությունից ու աղքատությունից և ապահովեցին նրա համար ունենք ու կուլտուրական կյանքի հեարագորությունը։

Մեր ժողովուրդն այս նվաճումները ձեռք բերեց բոլշևիկյան կուսակցության դեկավարությամբ։

Ով ճգուտմ ե այն բանին, վոր մեր գյուղացիությունն ընդմիջու ապահովված լինի աղքատության ու սովի վտանգից, ով ուզում է գյուղի ունենող կյանքի հետագա վերելք, նա ձայն կտա բոլշևիկների կուսակցության ոգտին, նա ձայն կտա կոմունիստների և անկուսակցականների բլոկի քեկնածուների ոգտին։

Ցարական Ռուսաստանը խավար եր ու տգես։ Բնակչության ճնշող մեծամասնությունն անզրագետ եր։ Խակ խորհրդային յերկրում արդեն իրականացված է ընդհանուր պարտադիր ուսումը—մեր դպրոցներում սովորում է 30 միլիոն յերեխա։ Կըր-

Պուրյան իրավունքը բոլոր ժաղաքացիների համար նվաճված և գրի յեւ առնված մեր Սահմանադրության մեջ: Բնակչության գրագիտությունը յերկրում 90 տոկոսից ավելի յեւ: Շուտով յերկրում չի լինի վոչ մի անզրագետ ժաղաքացի: Գիտությունը, գրականությունը, քատրոնը, արվեստը մեր յերկրում այնպէս են զարգանում, ինչպէս յերբէ՛ք: Գիտության և արվեստի նվաճումները բոլոր ժաղաքացիների սեփականությունն են համդիսանում:

Մեր ժողովուրդն այս հաջողությունները ձեռք բերեց բոլշևիկների կուսակցության դեկավարությամբ:

Ով ճգում ե մեր յերկրում լուսավորության հետագա անման, ով ցանկանում ե խորհրդային Միության ժողովուրդների գիտության, գրականության և արվեստի հետագա ծաղկումը, նա ճայն կտա բոլշևիկների կուսակցության ոգտին, նա ճայն կտա կոմունիստների և անկուսակցականների բլոկի թեկնածուների ոգտին:

Կինը ստրուկ եր ցարական Ռուսաստանում և ստրուկ ե մնում բոլոր կապիտալիստական յերկրներում: Միայն ԽՍՀՄ մեջ ե նա ազատ ու լիիրավ: Ինչպէս ժաղանում, այնպէս և գյուղում կինը գնում է տղամարդու հետ ձեռք-ձեռքի տված՝ սոցիալիզմի կառուցման և պետության կառավարման գործում: Ապահոված ու յերջանիկ մայրության համար պայմաններ ստեղծված են միայն մեր յերկրում: Խորհրդային որենքները պաշտպանում են մոր իրավունքներն ու մասնիկների առողջությունը:

Մեր ժողովուրդն այս հաջողությունները ձեռք բերեց բոլշևիկների կուսակցության դեկավարությամբ:

Ով ճգում ե այն բանին, վոր մեր խորհրդային կինն առաջիկայում ևս ազատ ու լիիրավ լինի տնտեսության ու կառավարման բոլոր բնագավառներում, նա ճայն կտա բոլշևիկների կուսակցության ոգտին, նա ճայն կտա կոմունիստների և անկուսակցականների բլոկի թեկնածուների ոգտին:

Յարական Ռուսաստանը ժողովուրդների բանտ եր, ազգային ննշման ու կոտորածի յերկիր նիշտ այնպէս, ինչպէս վոր բոլոր կապիտալիստական յերկրները համդիսանում են ազգային ննշման ու զարդութային ստրկացման յերկրներ: Անցյալում ննշված ժողովուրդները միայն խորհրդային Միության մեջ ձեռք բերին լիակատար ազատագրում ազգային ննշումից ու անիրավակառությունից: Ներկայումս խորհրդային Միության մեջ ԽՍՀՄ

ժողովուրդները միավորված են միասնական Միութենական պետության մեջ՝ հավասարության ու կամավորության սկզբունքներով: Խորհրդային Միությունն աշխարհում միակ յերկիրն է, վորտեղ վերջնականացես վերացված և փոխադարձ անվտանությունը ժողովուրդների միջև, և վորտեղ ժողովուրդների հարաբերությունները կառուցվում են փոխադարձ վստահության, յեղայրական միության ու բարեկամական համագործակցության սկզբունքներով:

Այս համաշխարհային-պատմական հաղթանակը մեր հայրենիքը ձեռք բերեց բոլշևիկների կուսակցության դեկավարությամբ:

Ով ճգում ե այն բանին, վոր խորհրդային Միության ժողովուրդներն առաջիկայում ևս ազատ ու իրավահավասար լինեն, ով ճգում ե ԽՍՀՄ ժողովուրդների բարեկամության հետագա ամրապնդման, նա ճայն կտա բոլշևիկների կուսակցության ոգտին, նա ճայն կտա կոմունիստների ու անկուսակցականների բլոկի թեկնածուների ոգտին:

Մեր հայրենիքի նվաճումները նոր ազատ կյանքի կառուցման բնագավառում իսկապէս մեծ են: Դրանք ԽՍՀՄ ժողովուրդների կողմից նվաճնել են ներքին ու արտաքին քշնամիների դեմ մղված պայքարում՝ բոլշևիկյան կուսակցության դեկավարությամբ: ԽՍՀՄ ժողովուրդների բարեկամներն ուրախ են այդ նվաճումների համար և վողզունում են դրանք: Բայց խորհրդային Միությունն ունի վո՞չ միայն բարեկամներ. նա ունի նաև քշնամիներ: Այդ, նայս՝ լիկվիդացիայի յենթարկված շահագործող դասակարգերի մնացորդներն են յերկրի ներսում: Այդ, յերկրորդ՝ կապիտալիստական յերկրների ունակցիոն-ֆաշիստական ուժերն են խորհրդային Միության սահմաններից դուրս: Յերեւ ներքին քշնամիները փոքրաբիկ են ու անզոր, ապա նրանց աշակցող արտաքին քշնամիները մեր հայրենիքի սպատության ու անկախության համար լուրջ փտանց են ներկայացնում: Մեր հայրենիքն այդ վտանգից ապահովելու համար հարկավոր է ունենալ, նաև՝ լավ կազմակերպված պատմիչ որդաններ, վորոնք ընդունակ լինեն անվճառ դարձնելու լրտեսներին, վեասարաթներին, դիվերսանտներին և խորհրդային ժողովրդի մյուս քշնամիներին. հարկավոր ե ունենալ, յերկրորդ՝ լավ կազմակերպված ու տեխնիկապէս սպառագինված Կարմիր Բանակ, վորն ընդունակ լինի խորհրդային սահմանները պաշտպանելու արտաքին հարակումից.

հարկավոր է ունենալ, վերջապես՝ լավ մտածված ու հետևողականության կիրառվող խաղաղության բաղաքականություն, վորոնցունակ լինի մերկացնելու կապիտալիստական յերկրների ուղարմատենչ շրջանների հափշտակողական բաղաքականությունը։ Միշարք տարիների ընթացքում խորհրդային իշխանությունը կարողացավ ճեռք բերել այն, վոր մեր հայրենիքն այժմ իր տրամադրության տակ ունի ինչպես ստուգված պատմիչ որգաններ ու լավ սպառագինված Կարմիր Բանակ, այնպես ել հետևողականություններին կիրառվող խաղաղության բաղաքականություն՝ արտաքին հարաբերությունների բնագավառում։ Միայն այս նվաճումների առկայությամբ է բացատրվում այն փաստը, վոր խորհրդային ժողովուրդն ահա արդեն 16 տարի յեն, ինչ ազատված է ուազմական ընդհարություններից, վայելում է խաղաղ կյանքի բարիքները և հնարավորություն ունի շարունակելու իր խաղաղ աշխատանքը։

ԽՍՀՄ ժողովուրդները մեր հայրենիքի ազատության ու անկախության պաշտպանության բնագավառում այս հաջողությունները նվաճել են բոլշևիజյան կուսակցության դեկավարությամբ։

Ով ճգուտ է այն բանին, վոր ԽՍՀՄ աշխատավորներն առաջիկայում ևս վայելեն խաղաղ աշխատանքի բարիքները, ով ցանկանում է մեր հայրենիքի ազատությունն ու անկախությունը, նա ձայն կուսակցության ոգուին, նա ձայն կուսակցության նաև կուսակցության դեկավարությամբ։

Սրանք են մեր հայրենիքի նվաճումները հեղափոխության տարիների ընթացքում, վորոնք ճեռք են բերված բոլշևիկների կուսակցության դեկավարությամբ։

Սրանք են բոլշևիկների կուսակցության գործերն ու պայքարի արդյունքները, կուսակցություն, վորի խոսքը յերեք չկտարք տարբերվել գործից, և վորի խոստումները յերբեք դատարկ երնչյունի չեն վերածվել։

Ահա՛ թե ինչու բոլշևիկների կուսակցությունն իրեն քույլ է տալիս առաջիկա ընտրություններում հալատացած լինել ժողովրդի վատահության նկատմամբ։

Ահա՛ թե ինչու բոլշևիկների կուսակցությունն իրավունք ունի հուսալու, վոր ընտրողները միահամուռ կերպով ձայն կումունիստների և անկուսակցականների բլոկի թեկնածուների ոգուին։

ԸՆԿԵՐ ԸՆՏՐՈՂՆԵՐ

Ընտրական կամպանիայի ընթացքում յերեան յեկալ միքանիկունիստների և անկուսակցականների գործումը՝ ձայն տալու անպայման և միայն լիդերների ոգուին, կուսակցության ու կառավարության դեկավարների ոգուին, անկախ այն բանից, թե նրանի վո՞ր ընտրական ոկրուգումն են ցուցակագրված։ Այդ ընկերներն, ըստ յերեան լիդերների, չեն համարական ու ոկրուգումն են ցուցակագրված։ Այդ ընկերներն, ըստ յերեան լիդերների, չեն համարական ամեն մի թեկնածու կարող է բվեարկվել միայն մեկ ընտրական ոկրուգում։ Այդ ընկերներն, ըստ յերեան լիդերների, չեն համարական ու ոկրուգում, վոր բոլշևիկների կուսակցության և անկուսակցականների պաշտպանությունը գուած այս կամ այն թեկնածուի ոգուին բվեարկվելը նշանակում է բվեարկվել վոչ միայն ովյալ թեկնածուի ոգուին, այլ, նաև և առաջ, բվեարկվել այն բաղաքականության ոգուին, վոր վարում է բոլշևիկների կուսակցությունն անկուսակցականների հետ միասին, և վորը պարտավորվում է իրականացնել ովյալ թեկնածուն։ Խնդիրը կայանում է նրանում, վոր թեկնածուները լինեն կայուն ու ժողովրդի գործին նվիրված մարդիկ և վոր ընտրողները համերաշխ կերպով ձայն տան բոլոր թեկնածուների ոգուին, յերեն նույնիսկ նրանցից վոմանք ներկայում իրենց յերիտասարդության պատճառով ընդհանուրի կողմից նաև չվագած դեկավարներ չեն հանդիսանում։ Խորհրդային կարգերի առանձնահատկությունն ել հենց այն է, վոր նա ապահովում է մարդկանց, նրանց ընդունակությունների, նրանց տաղանդների արագ անումը, վոր յերեկ դեռ ֆիշ հայտնի մարդիկ կարող են կարն ժամանակամիջոցում դառնալ ընդհանուրի հարգանքին արժանի հանրածանոք գործիներ։

Համամիութենական կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության կենտրոնական կոմիտեն կոչ է անում բոլոր կոմունիստներին ու համակրողներին՝ ձայն տալ անկուսակցական թեկնածուների ոգուին նույնական միահամուռությամբ, ինչպես նրանք պետք է ձայն տան կոմունիստ թեկնածուների ոգուին։

Համամիութենական կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության կենտրոնական կոմիտեն կոչ է անում բոլոր անկուսակցական ընտրողներին՝ ձայն տալ կոմունիստ թեկնածուների ոգուին նույնական միահամուռությամբ, ինչպես նրանք ձայն տան անկուսակցական թեկնածուների ոգուին։

Համամիութենական կոմունիստական (բոլշևիկների) կուսակ-

ցուրքյան կենտրոնական կոմիտեն կոչ և անում բոլոր ընտրողներին, վոր 1937 թվի դեկտեմբերի 12-ին բոլորը մեկ մարդու պես ներկայանան ժվեատուիերի մոտ՝ Միուրյան Խորհրդի և Ազգուրյունների Խորհրդի պատգամավորներ ընտրելու համար։

Զպետք ե լինի վոչ մի ընտրող, վորը չոգտագործի Խորհրդային պետուրյան գերագույն որգանի պատգամավոր ընտրելու իր պատվավոր իրավունքը։

Զպետք ե լինի վոչ մի ակտիվ քաղաքացի, վորն իր քաղաքական պարտքը չհամարի աջակցել առանց բացառուրյան բոլոր ընտրողների մասնակցուրյանը՝ Գերագույն Խորհրդի ընտրուրյուններին։

1937 թվի դեկտեմբերի 12-ի որը պետք ե դառնա Լենինի—Ստալինի հաղը-ական դրոշի շուրջը ԽՍՀՄ բոլոր ժողովուրդների աշխատավորների միասնուրյան մեծ սոնի որ։

ԲՈԼՈՐԸ ԴԵՊԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ։

ԹՈՂ ԿԵՑՑԵ՛ ՈՒ ԱՄՐԱՊՆԴՎԻ ՄԵՐ ՀԶՈՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ՝
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՅԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԻՈՒԹՅՈՒՆԸ։

ԿԵՑՑԵ՛ ՄԵՐ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՅԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱ-
ԴՐՈՒԹՅՈՒՆԸ։

ԿԵՑՑԵ՛ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԸ։


ԿԵՑՑԵ՛ ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԻ ՅԵՎ ԱՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆՆԵՐԻ ԴԱ-
ՇԻՆՔԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՈՐԳԱՆԻ Ա-
ՌԱՋԻԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ։

ԿԵՑՑԵ՛ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ։

ԿԵՑՑԵ՛ ՀԱՄԱՍԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ (ԲՈԼԵ-
ՎԻԿՆԵՐԻ) ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ։

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ (ԲՈԼԵՎԻԿՆԵՐԻ)

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ



Ի. Վ. ՍՏԱԼԻՆ

ՃԱՌ ՄՈՍԿՎԱ ՔԱՂԱՔԻ ՍՏԱԼԻՆՑԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՈԿՐՈՒԳԻ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՆԱԽԾՆՏՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՄ
1937 ՔՎԱՂԱՅԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-ԻՆ

Տրիբունի վրա ընկեր Ստալինի յերկալն ընտրողները դիմավորում են ովացիաների փոքրկով, վորը տևում է մի քանի րոպե։ Մեծ քատրանի ամբողջ դահլիճը վոտքի կանգնած վողջունում է ընկեր Ստալինին։ Դահլիճից անընդհատ լսվում են բացականչություններ։ «Կեցցե՛ մեծ Ստալինը, ուռա՛», «Աշխարհում ամենագեմոկրատիկ՝ Խորհրդային Սահմանադրությունն ստեղծող ընկեր Ստալինին ուռա՛», «Կեցցե՛ ամբողջ աշխարհի ճնշվածների առաջնորդը, ընկեր Ստալինը, ուռա՛»։

Ընկերնե՛ր, ճիշտն ասած՝ յԵս մտադրություն չունեյի հանդես դալու։ Սակայն մեր հարդելի նիկիտա Սերգեյիվիչը, կարելի յե առել, զոտով քերեց ինձ այստեղ, ժողովի ասում ե՛ մի լավ ճառ ասա։ Ինչի՞ մասին ասեմ, հատկապես ի՞նչպիսի ճառ։ Այն



ամենը, ինչ վոր ընտրություններից առաջ հարկավոր եր ասել, արդեն ասված ու վերասված և մեր ղեկավարող ընկերներ կալինինի, Մոլոտովի, Վորոշիլովի, Կազանովիչի, Յեժովի և շատ ուրիշ պատասխանատու ընկերների ճառերում: Ել ի՞նչ կարելի յէ ավելացնել այդ ճառերին:

Ասում են, պարզաբանումներ են պահանջվում ընտրական կամպանիայի մի քանի հարցերի վերաբերմամբ: Ի՞նչպիսի պարզաբանումներ, վո՞ր հարցերի վերաբերմամբ: Այն ամենը, ինչ վոր հարկավոր եր պարզաբանել, արդեն պարզաբանված ու վերապարզաբանված ե բոլցեկիների կուտակցության, կոմյերիտմիության, Համամիութենական Արհեստակցական Միությունների կենտրոնական Խորհրդի, Պաշը-Ավիաքիմի, Ֆիզկուլտուրայի դործերի կոմիտեյի հայտնի դիմումների մեջ: Ել ի՞նչ կարելի յէ ավելացնել այդ այլարգաբանումներին:

Իհարկե, կարելի յէր ենպես մի ճառ ասել ամեն ինչի և վոչչի մասին (քերև ծիծաղ): Հնարավոր ե, վոր այդպիսի ճառ կը պեցներ համարակությանը: Ասում են, վոր այդպիսի ճառերի վարպետներ կան վո՞չ միայն այնուեղ, կապիտալիստական յերկրներում, այլև մեղնում, Խորհրդային յերկրում (ծիծաղ, ծափահարություններ): Սակայն, նախ յես այդպիսի ճառերի վարպետ չեմ: Յերկրորդ՝ արժե՞արդյոք, վոր մենք ժամանցի գործերով գրադվենք այժմ, յերբ մենք ամենքս, բոլցեկիներս, ինչպես ասում են, «մինչեւ կոկորդներս խրված ենք աշխատանքի մեջ»: Յես կարծում եմ, վոր չարժե:

Պարզ ե, վոր այսպիսի պայմաններում լավ ճառ չես ասի:

Բայց և այնպես, քանի վոր յես բարձրացել եմ ամբիոն, իհարկե, այսպես թէ այնպես ուետք և թեկուղ վորեւ բան ասել (աղմկալից ծափահարություններ):

Ամենից առաջ յես կուղեյի շնորհակալություն հայտնել (ծափահարություններ) ընտրողներին այն վատահության համար, վոր նրանք ցուցաբերեցին (ծափահարություններ):

Ինձ առաջադրել եք պատգամավորության թեկնածու, և խորհրդային մայրաքաղաքի Ստալինյան ոկրուղի ընտրական Հանձնաժողովն ինձ ցուցակադրել ե վորպես պատգամավորության թեկնածու: Այդ, ընկերներ, մեծ վատահություն ե; Թույլ տվեք բոլցեկիյան խորին շնորհակալություն հայտնել ձեզ այն վատահության համար, վոր դուք ցուցաբերեցիք բոլցեկիների կու-

սակցությանը, վորի անդամն եմ հանդիսանում յես, և անձամբ ինձ, վորպես այդ կուտակցության ներկայացուցչի (աղմկալից ծափահարություններ):

Յես գիտեմ, թէ ինչ ե նշանակում վատահություն: Այդ, բնականաբար, նոր, լրացուցիչ պարտականություններ ե գնում ինձ վրա և, հետեաբար, նոր, լրացուցիչ պատասխանատվություն: Ինչ արած, մեղնում, բոլցեկիների մոտ, ընդունված չե հրաժարվել պատասխանատվությունից: Յես այն ընդունում եմ հոժարությամբ (բուռն, յերկարատև ծափահարություններ):

Իմ կողմից յես կուղեյի հավաստիացնել ձեզ, ընկերներ, վոր գուք կարող եք համարձակորեն հույս զնել ընկեր Ստալինի վրա (բուռն, յերկար ժամանակ չլուզ ովացիա: Բացականչություն դահլիճից: «Իսկ մենք բոլորս հետեւում ենք ընկեր Ստալինին»): Կարող եք վատահ լինել, վոր ընկեր Ստալինը կարողանա կատարել իր պարտքը ժողովրդի հանդեպ (ծափահարություններ), բանվոր դասակարգի հանդեպ (ծափահարություններ), գյուղացիության հանդեպ (ծափահարություններ), ինտելիգենցիայի հանդեպ (ծափահարություններ):

Այնուհետև, յես կուղեյի, ընկերներ, չնորհավորել ձեզ վերահաս համաժողովրդական տոնի առթիվ, Խորհրդային Միության Գերագույն Խորհրդի ընտրությունների որվա առթիվ (աղմկալից ծափահարություններ): Առաջիկա ընտրությունները սոսկ ընտրություններ չեն, ընկերներ: Դա իբրև մեր բանվորների, մեր գյուղացիների, մեր ինտելիգենցիայի համաժողովրդական տոնն ե (բուռն ծափահարություններ): Դեռ յերբեք աշխարհում չեն յեղել այդպիսի իսկական ազատ և իսկական դեմոկրատիկ ընտրություններ, յերբեք: Պատմությունը մի ուրիշ այդպիսի որինակ չէիտէ (ծափահարություններ): Բանն այն չե, վոր մեղնում ընտրությունները կլինեն ընդհանուր, հավաար, դադանի և ուղղակի, թեև այդ բանն ինքնին մեծ նշանակություն ունի: Բանն այն ե, վոր մեղնում ընդհանուր ընտրությունները կանցկացվեն վորպես առավել ազատ և առավել դեմոկրատիկ ընտրություններ՝ աշխարհիս վորեւ այլ յերկրի ընտրությունների համեմատությամբ:

Ընդհանուր ընտրություններ անցնում են և տեղի ունեն նաև միքանի կապիտալիստական, այսպես կոչված, գեմոկրատիկ, յերկրներում: Սակայն Ի՞նչպիսի պայմաններում են անցնում այնտեղ ընտրությունները: Դասակարգային ընդհարումների պայ-



4250 91

մաններում, դասակարգային թշնամանքի պայմաններում, կապիտալիստների, կարվածատերերի, բանկիրների և կապիտալիզմի այլ չնաձկների կողմից ընտրողների վրա ճնշում գործադրելու պայմաններում։ Այդպիսի ընտրությունները, յեթե նրանք նույնիսկ ընդհանուր են, հավասար, դաշտնի և ուղղակի, չի կարելի անվանել լիովին ազատ ու լիովին դեմոկրատիկ ընտրություններ։

Մեզնում, մեր յերկրում, ընդհակառակը, ընտրություններն անցնում են միանգամայն այլ պայմաններում։ Մեզնում չկան կապիտալիստներ, չկան կարվածատերեր, հետեաբար, չկա նաև ճնշում ունեոր դասակարգերի կողմից չունեորների նկատմամբ։ Մեզնում ընտրություններն անցնում են բանկորների, դյուզացիների, ինտելիգենցիայի գործակցության պայմաններում, նրանց փոխադարձ վտահության պայմաններում, յես կասեյի՛ փոխադարձ բարեկամության պայմաններում, վորովհետեւ մեզնում չկան կապիտալիստներ, չկան կարվածատերեր, չկա շահագործում և չկա, իսկապէս, մեկը, վոր ճնշում գործ դնի ժողովրդի վրա՝ նրա կամքը խեղաթյուրելու համար։

Ահա թե ինչու մեր ընտրությունները հանդիսանում են միակ իսկական ազատը և իսկական դեմոկրատիկն ամբողջ աշխարհում (աղմկալից ծափահարություններ)։

Այսպիսի ազատ և իսկական դեմոկրատիկ ընտրություններ կարող են առաջ դալ միայն սոցիալիստական կարգերի հաղթանակի հողի վրա, միայն այն բանի բարյալի վրա, վոր մեզնում սոցիալիզմը վոչ թե հենց այնպես կառուցվում ե, այլ արդեն մտել ե կենցաղի մեջ, ժողովրդի առորյա կենցաղի մեջ։ 10 տարի սրանից առաջ կարելի յեր գիտկուսիա մեկը այն մասին, թե արդյոք կարելի յե մեկ մոտ սոցիալիզմ կառուցել, թե վոչ։ Այժմ այդ արդեն դիսկուսիոն հարց չե։ Այժմ այդ փաստերի հարց ե, կենդանի կրանքի հարց, կենցաղի հարց, վորը թափանցում և ժողովրդի ամբողջ կյանքը։ Մեր Փաբրիկաներում ու գործարաններում աշխատում են առանց կապիտալիստների։ Աշխատանքը դեկարտում են ժողովրդի միջից յերած մարդիկ։ Հենց այս ել մեզնում կոչվում ե սոցիալիզմ դորձնականում։ Մեր դաշտերում աշխատում են հողի աշխատավորներն առանց կարվածատերերի, առանց կուլակների։ Աշխատանքը զեկավարում են ժողովրդի միջից յելած մարդիկ։ Հենց այս ել մեզնում կոչվում ե սոցիալիզմ կենցաղի մեջ, հենց այս ել մեզնում կոչվում ե ազատ, սոցիալիստական կյանք։

Ահա այդ բազայի վրա ել մեզնում առաջ յեկան նոր, իսկական ազատ և իսկական դեմոկրատիկ ընտրություններ, ընտրություններ, վորոնց նմանը չկա մարդկության պատմության մեջ։

Ել ի՞նչպես այդ բանից հետո չչնորհավորել ձեզ համաժողվորական տոնի որվա առթիվ, Խորհրդային Միության Գերագույն Խորհրդի ընտրությունների որվա առթիվ (ամբողջ դահլիճի բաւան ովացիա)։

Այսուհետեւ յես կուզեյի, ընկերնե՛ր, ձեզ մի խորհուրդ տալ, պատգամավորության թեկնածուի խորհուրդ իր ընտրողներին։ Յեթե վերցնենք կապիտալիստական յերկրները, ապա այստեղ պատգամավորների և ընտրողների միջև գոյություն ունեն վորոշյուրակերպ, յես կասեյի, բավականին տարօրինակ հարաբերություններ։ Քանի դեռ տեղի յեն ունենում ընտրությունները, պատգամավորները սիրալիրություն են անում ընտրողների հետ, քծնում են նրանց առաջ, յերգվում են հավատարիմ լինել, տալիս են մի կույտ ամեն տեսակի խոստումներ։ Դուրս ե զալիս, վոր պատգամավորների կախվածությունն ընտրողներից՝ լիակատար ե։ Հենց վոր ընտրությունները կայացան և թեկնածուները դարձան պատգամավորներ, —հարաբերություններն արմատապես փոխվում են։ Պատգամավորների՝ ընտրողներից կախված լինելու փոխարեն ստացվում ե նրանց լիակատար անկախություն։ 4 կամ 5 տարվա ընթացքում, այսինքն ընդհուպ մինչև նոր ընտրությունները, պատգամավորն իրեն զգում ե միանգամայն ազատ ժողովրդից, իր ընտրողներից՝ անկախ։ Նա կարող ե մի բանակից անցնել մյուսը, նա կարող ե ճիշտ ճանապարհից չուռ գալ սիսականապարհի վրա, նա կարող ե նույնիսկ խճճվել վոչ բոլորովին պիտանի բնույթի ունեցող վորոշ մեքենայությունների մեջ, նա կարող ե գլխակոնձի տալ՝ ինչպես իրեն հաճելի յե, —նա անկախ ե։

Կարելի՞ յե արդյոք այդպիսի հարաբերությունները համարել նորմալ։ Վո՞չ մի գեղեցում, ընկերնե՛ր։ Մեր Սահմանադրությունը հաշվի առաջ այս հանդամանքը և նա մի որենք անցկացրեց, վորի ուժով ընտրողներն իրավունք ունեն ժամկետից չուռ հետ կանչել իրենց պատգամավորներին, յեթե նրանք սկսում են խորամանկել, յեթե նրանք չեղիւում են ճանապարհից, յեթե նրանք մոռանում են ժողովրդից, ընտրողներից իրենց կախված լինելու մասին։

Դա սքանչելի որենք ե, ընկերնե՛ր։ Պատգամավորը պետք է իմանա, վոր ինքը ժողովրդի ծառան ե, նրա պատվիրակը Գերա-

գույն Խորհրդում, և նա պետք է ընթանա այն գծով, վորով ժողովուրդը նրան նակաղ է տվել: Շեղվեց ճանապարհից, ընտրողներն իրավունք ունեն պահանջել, վոր նշանակվեն նոր ընտրություններ, և ճանապարհից շեղված պատգամավորին նրանք իրավունք ունեն սև ձի նստեցնել (ծիծաղ, ծափահարություններ): Դա սքանչելի որենք է: Իմ խորհուրդը, պատգամավորության թեկնածուի խորհուրդն իր ընտրողներին հետեւյալն է՝ հիշել ընտրողների այդ իրավունքի մասին, —պատգամավորներին ժամկետից շուտ հետ կանչելու իրավունքի մասին, հետևել իրենց պատգամավորներին, հսկել նրանց և, յեթե նրանց խելքին կփչի շեղվել ճիշտ ճանապարհից, դցել նրանց իրենց ուսերից, պահանջել, վոր նշանակվեն նոր ընտրություններ: Կառավարությունը պարտավոր է նոր ընտրություններ նշանակել: Իմ խորհուրդն է՝ հիշել այս որենքի մասին և հարկ յեղած դեպքում ոգտագործել այն:

Վերջապես, պատգամավորության թեկնածուի ևս մեկ խորհուրդը իր ընտրողներին: Առհասարակ ի՞նչ պետք է պահանջել իր պատգամավորներից, յեթե վերցնենք բոլոր հնարավոր պահանջներից առավել տարրական պահանջները:

Ընտրողները, ժողովուրդն իրենց պատգամավորներից պետք է պահանջեն, վորպեսզի նրանք մնան իրենց խնդիրների բարձրության վրա, վորպեսզի նրանք իրենց աշխատանքում չիջնեն մինչեւ քաղաքական որիվատելների մակարդակը, վորպեսզի նրանք մնան լենինյան տիպի քաղաքական դործիչների պոստի վրա, վորպեսզի նրանք լինեն նույնական պարզ ու վորոշակի դործիչներ, ինչպես լենինը (ծափահարություններ), վորպեսզի նրանք մարտում լինեն նույնպիսի անվախներ և անողոքներ գեպի ժողովրդի թշնամիները, ինչպիսին լենինն եր (ծափահարություններ), վորպեսզի նրանք աղատ լինեն վորեւե խուճապից, խուճապի նման վորեւե բանից, յերբ գործն սկսում և բարդանալ և հորիզոնի վրա ուրվադժվում ե վորեւե վտանդ, վորպեսզի նրանք նույնպես աղատ լինեն խուճապի նման վորեւե բանից, ինչպես աղատ եր լենինը (ծափահարություններ), վորպեսզի նրանք բարդ հարցերի լուծման ժամանակ, վորտեղ պետք է բաղմակողմանի կողմնորոշում և բոլոր պլյուսների ու մինուսների բազմակողմանի հաշվառում, լինեն նույնական իմաստում և չաճապարող, ինչպիսին լենինն եր (ծափահարություններ), վորպեսզի նրանք լինեն նույնական ճշմարտացի ու աղնիվ, ինչպիսին լենինն եր (ծա-

փահարություններ), վորպեսզի նրանք նույնպես սիրեն իրենց ժողովրդին, ինչպես սիրում եր նրան լենինը (ծափահարություններ):

Մենք արդյոք կարո՞ղ ենք ասել, վոր պատգամավորության բոլոր թեկնածուները հենց այդ տեսակ գործիչներ են Հանդիսանում: Յես այդ բանը չեյլ ասի: Աշխարհում ամեն տեսակ մարդիկ լինում են, աշխարհում ամեն տեսակ գործիչներ լինում են: Կան մարդիկ, վորոնց մասին չես կարող ասել, թե նա ուլ է. արդյոք նա լավն է, արդյոք նա վատն է, արդյոք քաջարի յէ, արդյոք վախկոտ է, արդյոք նա մինչեւ վերջը ժողովրդի կողմն ն, արդյոք նա ժողովրդի թշնամիների կողմն է: Կան այդպիսի մարդիկ և կան այդպիսի գործիչներ: Այդպիսիները կան նաև մեզնում, բոլչեկիների մեջ: Ինքներդ գիտեք, լնկերնե՛ր, ընտանիքն առանց այլանդակի չի լինի (ծիծաղ, ծափահարություններ): Անորոշ տիպի այդպիսի մարդկանց մասին, այնպիսի մարդկանց մասին, վորոնք ավելի շուտ հիշեցնում են քաղաքական որիվատեկների, քան թե քաղաքական գործիչների, այդպիսի անորոշ, չձևակերպված տիպի մարդկանց մասին ուսւա մեծ զրող դոգուլը բավականին դիպուկ կերպով ասել է. «Մարդիկ, ասում է, անորոշ են, վոչ այս են, վոչ այն, չես հասկանա, թե ինչ մարդիկ են, վո՛չ քաղաքում բողդան են, վո՛չ դյուզում» Սելիֆան» (ծիծաղ, ծափահարություններ): Այդպիսի անորոշ մարդկանց ուղործիչների մասին նույնական բավականին դիպուկ կերպով ասվում ե մեղնում ժողովրդի մեջ. «Հենց այնպես, մարդ է, ելի, վո՛չ ձուկ է, վո՛չ միս» (ընդհանուր ծիծաղ, ծափահարություններ), «վո՛չ աստծուն ճրագ, վո՛չ սատանային կրակ» (ընդհանուր ծիծաղ, ծափահարություններ):


Յես լիակատար վատահությամբ չեմ կարող ասել, թե պատգամավորության թեկնածուների մեջ (յես նրանց առաջ շատ ներողություն են խնդրում, իհարկե) և մեր գործիչների մեջ չկան այնպիսի մարդիկ, վորոնք ավելի շուտ հիշեցնում են քաղաքական որիվատեկների, վորոնք իրենց բնույթով, իրենց ֆիզիոնմիայով հիշեցնում են այնպիսի տիպի մարդկանց, վորոնց մասին ժողովրդի մեջ ասվում է. «վո՛չ աստծուն ճրագ են, վո՛չ սատանային կրակ» (ծիծաղ, ծափահարություններ):

Յես կուղենայի, լնկերնե՛ր, վորպեսզի գուք սիստեմատիկ կերպով աղղեյիք ձեր պատգամավորների վրա, վորպեսզի ներշնչեյիք նրանց, վոր նրանք պետք է իրենց առջև ունենան մեծ

Լենինի մեծ պատկերը և ամեն բանում նմանվեն Լենինին (ծափահարություններ) :

Ընտրողների Փունկցիաներն ընտրություններով չեն վերջանում : Նրանք շարունակվում են տվյալ գումարման Գերադույն Խորհրդի գոյության ամբողջ ժամանակաշրջանում : Յես արդեն խոսեցի այն որենքի մասին, վորոն ընտրողներին իրավունք ե տալիս ժամկետից շուտ հետ կանչելու իրենց պատգամավորներին, յեթե նրանք չեղվում են ճիշտ ճանապարհից : Հետեապես, ընտրողների պարտականությունն ու իրավունքը կայանում են նրանում, վորպեսզի նրանք իրենց պատգամավորներին ամբողջ ժամանակ պահեն վերահսկողության տակ և վորպեսզի նրանք ներշնչեն նրանց՝ վոչ մի գեպքում չիջնել քաղաքական որիշատելների մակարդակին, վորպեսզի նրանք,—ընտրողներն իրենց պատգամավորներին ներշնչեն՝ լինել այնպիսին, ինչպիսին երմեծ Լենինը (ծափահարություններ) :

Սա յէ, ընկերներ, իմ յէրկրորդ խորհուրդը ձեղ, պատգամավորության թեկնածուի խորհուրդն իր ընտրողներին : (Բուռն, յերկար ժամանակ չլուղ ծափահարություններ, վորոնք փոխվում են ովացիայի : Ամենքը վոտքի յեն կանգնում և իրենց հայցքները դարձնում են դեպի կառավարական որյակը, ուր անցնում ե ընկեր Ստալինը : Լսվում են բացականչություններ . «Մեծ Ստալինին ուռա» , «Ծնկեր Ստալինին ուռա» , «Կեցցե՛ ընկեր Ստալինը, ուռա» , «Կեցցե՛ առաջին լեինինյանը—Միության հորիրդի պատգամավորության քեկնածուն—ընկեր Ստալինը : Ուռա») :



Վ. Մ. ՄՈԼՈՏՈՎ

Ա.ՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԻ
ՈՒՆԵՑԱԾ ԸՆՏԲԱԿԱՆ ԲԼՈԿԻ ՄԱՍԻՆ

ՃԱՌ ՄՈՍԿՎԱՅԻ ՄՈԼՈՏՈՎՅԱՆ ՀԱՏՐԱԿԱՆ
ՈԿՐՈՒԳԻ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԺՈՂՈՎՈՒՄ
գեղարվեստի 8-ին 1937 թ.

I

Ա.ՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ ՄԵՐ
ՈՒՆԵՑԱԾ ԲԼՈԿԻ ԱՐՄԱՏՆԵՐԸ

Ընկերներ, մեր կուսակցությունը հրապարակելով իր «Դիմումը» ընտրողներին, լիովին ծալալեց իր ընտրական դրո-

Այդ դրոշը կոչում ե գեղի սոցիալիզմի նոր հաղթանակ-ներ, կոչում և գեղի աջակցություն գերազույն Խորհրդի մեջ ընտրելու ինչպես կոմունիստ-թեկնածուներին, նույնպես և ան-կուսակցական-թեկնածուներին, վորոնց առաջարկել և բոլշևի-կյան կուսակցությունը անկուսակցական բանվորների, դյուդա-ցիների, ծառայողների ու ինտելիգենցիայի հետ մեկտեղ: Այդ դրոշը կոչում և ստեղծելու կոմունիստների համերաշխ ընտրա-կան բլոկ անկուսակցական բանվորների հետ, անկուսակցական դյուդացիների հետ, անկուսակցական ծառայողների հետ, ան-կուսակցական ինտելիգենցիայի հետ, ստեղծելու կոմունիստների այդպիսի բլոկ անկուսակցականների հետ մեր ամբողջ յերկրում: (Ծափահարություններ):

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միու-թյան գերազույն որդանների ընտրություններն անցկացնել ան-կուսակցականների հետ կոմունիստների ունեցած բլոկի հիման վրա, դաշնքի հիման վրա—այս և մեր խնդիրը:

Կարող եր թվալ, թե դա չառ պարզ է: Իրոք, վորպիսի՞ պարզ միտք, պարզ կոչ, պարզ ու հստակ հրամեր և. կոմու-նիստներ, գործեցեք անկուսակցական աշխատավորների հետ մեկտեղ, կազմակերպեցեք համերաշխ բլոկ ընդհանուր և սուրբ դորձի համար, ձեր հայրենիքի, խորհրդային իշխանության գերազույն որդանների ընտրությունների համար: Այժմ դա մեղ կարող ե թվալ վորպես միանդամայն պարզ ու հստակ դորձ. խորհրդային իշխանության գերազույն որդանների ընտրու-թյունների ժամանակ ստեղծել կոմունիստների ու անկուսակցա-կանների բլոկ: Սակայն դա պարզ ու միանդամայն հստակ դարձավ միմիայն այժմ, Հոկտեմբերի քսանամյակին, յերբ մենք թևակոխեցինք Հոկտեմբերյան հեղափոխության արդեն յերրորդ տասնամյակը: Ժողովրդի անկուսակցական առմբողջ մասսայի հետ կոմունիստական կուսակցության ունեցած այդպիսի բլոկի վոչ մի նման բան ամենեն չեր կարող լինել մեզնում վոչ միայն մինչև հեղափոխությունը, այլև հեղափոխության առա-ջին տարիներին:

Խոկ կարելի՞ յե արդյոք վորեե նման բան, ամբողջ ժողո-վըրդի հետ վորեե կուսակցության ունեցած բլոկի նման բան յերեակայել մի ինչ-վոր, ուրիշ, վոչ խորհրդային յերկրում: Ին-չո՞ւ համար այնտեղ ևս, բուրժուական յերկրներում, վորեե կուսակցուն չդնա այդ պարզ ու հստակ ուղիղով: Թվում ե,

թե դժվար չպիտի լիներ այդ մտքին հասնել, բայց զե չի լի-նում: Վո՞չ, այդպիսի խնդիրը բուրժուական պետության մեջ ամեն մի կուսակցության ուժից վեր ե: Այստեղ, կապիտալիզմի յերկրներում, վոր անխուսավելիորեն բգկաված են դասակար-դային կովով, այդ մասին նույնիսկ յերազել անդամ չի կարելի: Բուրժուական վոչ մի կուսակցության ուժը չի պատի այդ բանին:

Միայն Խորհրդային Միության մեջ Հոկտեմբերյան հեղա-փոխության 21-րդ տարում, միայն բոլշևիկյան կուսակցությու-նը հնարավորություն ստացավ իր առջև դնելու այդ մեծ խըն-դիրը: Սա և՛ պարզ, և՛ հստակ խնդիր ե, բայց մեծ սարեր պետք է շուր տալ, վորպեսզի կարելի լինի իրավունք և հնարավորու-թյուն ստանալ այդպիսի խնդիրներ գնելու: Վորովհետեւ կոմու-նիստական կուսակցության և ժողովրդի անկուսակցական մաս-սանների ընտրական բլոկ ստեղծել և այդ հիման վրա համերաշ-խորեն անցկացնել իշխանության գերազույն որդանների ընտ-րությունները—դա մեծ դորձ ե, դա համաշխարհային-պատմա-կան նշանակություն ունեցող գործ ե:

Վորպեսզի մենք կարողանայինք մոտենալ այդ խնդրին, մենք պետք ե ապրելինք մինչև Հոկտեմբերյան հեղափոխու-թյան 20-ամյակը: Խոկ մինչև այդ 20-ամյակն ապրելը չեր կա-րելի, առանց մինչև հիմքը ջախջախելու Հոկտեմբերյան հեղա-փոխության բոլոր թշնամիներին մեր յերկրում: (Յերկարածե-ծափահարություններ):

Հոկտեմբերի դորձի համար մղած այդ սրայքարում հենց կազմակորիեց կոմունիստների և անկուսակցական բանվորների ու դյուղացիների դաշինքը: Հոկտեմբերյան հեղափոխության բո-լոր ետապներում բոլշևիկները պայքարում եյին հանուն այն բանի, վորպեսզի ամրապնդեն բանվորների ու դյուղացիների դաշինքը, վորպեսզի կուսակցության չուրջը համախմբեն քաղա-քի ու դյուղի անկուսակցական աշխատավորների ամբողջ մաս-սային: Հոկտեմբերի բոլոր և ամեն տեսակի թշնամիների դեմ մղած պայքարի մեջ կովով կոմունիստների այդ դաշինքը ան-կուսակցական բանվորների, դյուղացիների և ինտելիգենցիայի հետ: Այժմ մեզնում արդեն հնարավորություն կա այդ դաշինքը դարձնել յերազույն Խորհրդի ընտրություններն անցկացնելու հիմք:

Անկուսակցական մաստաների հետ բոլշևիկների այդպիսի դաշինք ստեղծելու հնարավորության մասին խոսելու համար

պետք եր Խորհրդային Միության մեջ սոցիալիզմի հաղթանակ ձեռք բերել։ Մենք այդ ձեռք բերինք։ Այժմ սոցիալիզմն եւ վուրոշում մեր յերկրի ամբողջ կյանքը։

Մենք վոչ թե պարզապես ջախջախեցինք թշնամիներին, մենք կառուցեցինք նոր պետություն, ստեղծեցինք նոր հասարակություն, ստեղծեցինք նոր, խորհրդային ժողովաւրդ։ (Ծափահարությունների վորատ)։

Մենք ստեղծեցինք խորհրդային ժողովուրդ, վորտեղ տեղ չկա շահագործողների համար, վորտեղ բոլոր քաղաքացիներն աշխատավորներ են, վորտեղ, հետեւապես, ամբողջ ժողովուրդը մի ընդհանուր շահ ունի։ Այս պատճառով հնարավոր յեղալ խոսել անկուսակցական բանվորների ու գյուղացիների հետ, անկուսակցական ծառայողների ու ինտելիգենցիայի հետ կոմունիստների կնքած ընտրական բլոկի մասին։ Այս նվաճումը նրանով ե մեծ, վոր անկուսակցականների հետ կնքած այդպիսի դաշնքի մասին մենք կարող ենք խոսել ինչպես ամբողջ Խորհրդային Միության մեջ, այնպես ել յուրաքանչյուր խորհրդային հանրապետության մեջ առանձին վերցրած։

Մեր յերկրում Գերագույն Խորհրդի ընտրությունների ժամանակ կոմունիստների ու անկուսակցականների ընտրական բլոկ ստեղծելը նախապատրաստելու համար մենք պետք ե նվաճելինք Ստալինյան Սահմանադրությունը։ Այդ Սահմանադրության, հաղթանակած սոցիալիզմի Սահմանադրության հիման վրա պիտի ընթանան ընտրությունները դեկտեմբերի 12-ին։

Ստալինյան այդ Սահմանադրությունն ստանալու համար մեղինչ եր պետք։

Դրա համար մենք պետք ե, նախ և առաջ, նվաճելինք և ամենքից ու ամեն տեսակի հարձակումներից պատշաճանելինք խորհուրդների իշխանությունը։ Մենք այդ կատարեցինք հաջողությամբ։

Այնուհետև։ Դրա համար մենք պետք ե ունենայինք այնպիսի կուսակցություն, վորպիսին լենինի—Ստալինի կուսակցությունն ե։ (Յերկարատև ծափահարություններ)։

Այդ Սահմանադրությունը նվաճելու համար, վերջապես, մեր ամբողջ գործի գլուխ կանգնած պիտի լիներ նա, ով միշտ գիրքումն ե, ով միշտ իր նախապետական կամըջակի վրա յե, ով իր ձեռքին ունի ճիշտ կողմնացույց, ով կարողանում է բոլշևիզմի գրոշի շուրջը համախմբել բոլոր աշխատավորներին, ում ա-

նունը անխղելիորեն միացած ե սոցիալիզմի հաղթանակների հետ։ Մի խոսքով, մենք Ստալինյան Սահմանադրություն ունենք այն պատճառով, վոր մեր կուսակցությանը և Խորհրդային Միության բարձր աշխատավորներին առաջնորդում ե սոցիալիստական Սահմանադրությունն ստեղծող ընկեր Ստալինը։ (Բուռն ծափահարություններ, «ուռա» բացականչություններ, բոլոր վոտքի յեն կանգնում, բացականչություններ. «Կեցե՛ ընկեր Ստալինը»)։

Սրանից հետո հասկանալի յե, թե ինչպես մեր առջև իր ամբողջ հասակովը մեկ կանգնեց Գերագույն Խորհրդի ընտրությունների հիմնական խնդիրը—մեր պետության գերագույն որդանի պատգամավորների ընտրությունների ժամանակ անկուսակցական բանվորների, գյուղացիների և ինտելիգենցիայի հետ կոմունիստների բարեկամական դաշնան ապահովելու խնդիրը։ Այս խնդիրն իր ամբողջ թափով ծառացալ մեր առջև այն ժամանակ, յերբ մենք ձեռք բերինք խորհրդային ժողովրդի իրոք բարոյական և քաղաքական միասնություն, վորն այժմ հանդիսանում ե վորպես հիմք մեր սոցիալիստական հասարակության, վորը և սոցիալիզմի մարմնացումն ե խորհրդային մեծ ժողովրդի կյանքում։ (Ծափահարություններ)։

Խոսքը վո՞ր բլոկի մասին ե։ Մեր կուսակցության մեջ յերկու միլիոն կոմունիստներ կան և կես միլիոն համակրողներ։ Իսկ Գերագույն Խորհրդի ընտրությունների ժամանակ 90 միլիոնից ավելի ընտրողներ կլինեն։ Կոմունիստներն, ինչպես տեսնում ենք, կազմում են ընտրողների ամբողջ մասսայի վոքքը մաս միայն, սակայն նրանց ուժը նրանում ե, վոր դա ժողովրդի ավանդաբան ե։ Ամբողջ ժողովրդի շահերի տեսակետից ի՞նչ ավելի լավ բան կարող է լինել, ի՞նչ ավելի լավ բան կարող է լինել մեր պարմաններում, քան կոմունիստների ու անկուսակցականների համերաշխան դաշնանքը՝ հանուն սոցիալիզմի հետագա հաղթանակների՝ մեր յերկրության ամենք այդպիսի յերկու միլիոն կոմունիստները այդ 90 միլիոն ընտրողների հետ միատեղ, համերաշխորեն, համաքայլ գնան Գերագույն Խորհրդի ընտրություններին։ (Միահամուռ ծափահարությունների վորպատ)։

Դա փոքր խնդիր չե, ընկերներ։ Զեռք զարկել այդպիսի խնդրի՝ նշանակում ե ձեռք զարկել մեծ գործի։ Սակայն ժողովրդական մասսաների հետ բոլշևիկյան կուսակցության ունե-

շած կապն այնքան հաստատում ե, վոր մենք համոզված փեր այն բանում, վոր մեր կուսակցությունը բոլոր հիմքերն ունի պատվով կատարելու այս մեծ խնդիրը: (Ծափահարություններ):

Այսպիսով, դործը վերաբերում է խորհրդային ժողովրդի ամբողջ մասսայի հետ կոմունիստների ունեցած բլոկին: Գերագույն Խորհրդի ընտրությունների ժամանակ մեզնում, մեր խորհրդային ձեռով, պետք է ստեղծվի ժողովրդական միասնական Փրոնտ, չտեսնված ուժի ու նշանակության ժողովրդական միասնական Փրոնտ: (Ծափահարություններ):

Անկուսակցական մասսաների հետ, ամբողջ ժողովրդի հետ կոմունիստների ունեցած այսպիսի բլոկի մասին այժմ կարող են միայն յերազել մեր արտասահմանյան բարեկամները: Մենք այդ բանին հասել ենք համար պայքարով, չինայելով ուժերը, չվախենալով դժվարություններից, և մենք ամբողջ հոգով մեր արտասահմանյան բարեկամների հետ ենք, վորոնք արդեն այժմ հավատացած կերպով ասում են. կդա ժամանակ, և մեզնում ել այդ բանը դլուխ կդա: (Բուռն ծափահարություններ):

II

ՄԵՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՐՏԱՔԻՆ ՎՏԱՆԳԻ ՀԱՆԴԵՊ

Մեզ վիճակվեց դործն սկսել ու առաջ տանել ծանր պայմաններում: Մինչև այժմ մեզ վիճակված ե սոցիալիզմի կառուցման դործն առաջ տանել միայնակ, կապիտալիստական պետությունների թշնամական ըրջապատման մեջ: Սրանումն ե բանվորների ու դյուլացիների առաջին սոցիալիստական հանրապետության դրության առանձնահատկությունը:

Մեր գործի իրավացիության մեջ համոզված՝ մենք հենց սկզբից փնտում եյինք միայն մի բան—ժողովրդի խաղաղ աշխատանքն ապահովելու հնարավորություն, խորհրդային կարգի ուժը ցույց տալու պարզ հնարավորություն, մի կարգ, վորտեղ ժողովուրդն ազատված ե բոլոր այլ պարոնայք կապիտալիստների, կարգածատերերի ու գեներալ-ուրյադների վոհմակից:

Սակայն և մեր դասակարգային թշնամիներն ել հասկանում եյին, վոր շահագործողներից ազատազրված ժողովուրդը վտանգավոր ուժ ե իրենց համար: Դրա համար ել նրանք ամեն բան

անում եյին, վորպեսզի խափանեն խաղաղությունը, խանդարեն Խորհրդային հանրապետության խաղաղ զարգացումը:

Բանվորական ու գյուղացիական քիչ արյուն չի թափվել՝ խորհրդային իշխանությունը պաշտպանելու համար, թշնամիներից դիրք դիրք հետևից հետ խլելու համար:

Մեզ վիճակվեց միքանի տարի շարունակ տանել ոտարերկրյա ինտերվենտների գոյությունը մեր յերկրի տերիտորիայի վրա, սակայն այնուամենայնիվ մենք նրանց բոլորովին ու ընդմիշտ դուրս չպատեցինք մեր պետությունից: (Ծափահարություններ):

Կապիտալիստական արտաքին շրջապատումը, սակայն, շարունակում ե գոյություն ունենալ: Գրեթե յուրաքանչյուր դարնան մեզ նորից ու նորից վիճակվում եր իմպերիալիստների կողմից ուղղմական հարձակման սպասել: Այսոր սրանք եյին սպասում, վաղը՝ յուսները: Ի՞նչ փորձ առես չեյին անում ձախողելու մեր խաղաղ կարճատե դադարը, վորի համար մենք այնպես պայքարում եյինք: Թե վորքան Խորհրդային Միության համար առանձին մոմենտներում մեծ եր ուղղմական վտանգը, յերեսմ ե այն բանից, վոր խորհրդային իշխանության գոյության առաջին տարիներին լենինը մի անդամ չե վոր դրել ե, վորի վրա պելի ուշ բազմիցս մատնանշել ե նաև ընկեր Ստալինը:

Բոլշևիկյան կուսակցությունն ու խորհրդային իշխանությունն ամեն բան արին, վորպեսզի յերկարաձգեն կյանքի խաղաղ ժամանակաշրջանը, վորպեսզի խորհրդային ժողովրդին ազատեն ուղղմական ընդհարումներից և ժողովրդի համար հնարավորություն ապահովեն շարունակելու խաղաղ աշխատանքը:

Մեզ հաջողվեց հասնել այն բանին, վոր արդեն 16 տարուց ավելի յե, ինչ մեր յերկիրն ապրում ե խաղաղ պայմաններում, և վոչ վոք չի կարող ասել, թե մենք վատ ենք ուղտազործել այդ կարճատե դադարը, թե մենք քիչ բան ենք արել ժողովրդական տնտեսության վերելքի համար, կուլտուրական շինարարության աճման համար, ժողովրդի ամբողջ կյանքը նոր, սոցիալիստական հիմունքով վերանորոգելու համար: (Ծափահարություններ):

Մեր յերկրի ժողովուրդը պատերազմներով տանջված եր: Ռուս-ճապոնական պատերազմի և վերջին խմակերիալիստական պատերազմի միջև, վորին մասնակցում եր Ռուսաստանը, անցել ե ընդամենը ութ տարուց մի քիչ ավելի: 1905 թվականին Ճապոնիայի հետ վարած պատերազմում Ռուսաստանը ջարդվեց: 1914 թվի կեսերից նա մտավ նոր, ել ավելի արյունուշտ պա-

տերազմի մեջ, վորը յերկարաձգվեց մի շարք տարիներ։ Հասկանալի յէ, վոր ժողովուրդը ծարավի յեր խաղաղության, ծարավի յեր պատերազմից կարճատև դադար առնելու։

Խորհրդային իշխանության խոշորագույն արժանիքներից մենք պետք եւ համարել այն բանը, վոր վերջին 16 տարիների ընթացքում մեր ժողովուրդը աղատված ե յեղել ուղղական ընդհարումներից։ (Ծափահարություններ)։

Մենք գիտենք, թե ով ե այժմ շտապում նոր պատերազմների։ Նա, ում տանը ամեն բան կարդին չե, ում գործերը խախուտ են։ (Ծիծաղ)։ Իսկապես ասած, ֆարական կառավարությունն ել խճճվեց 1905 թ. և 1914 թ. պատերազմների մեջ, յերբ նրա վոտքերի տակ հողն այրվում եր։

Մեզ մոտ գրությունն այդպես չե, ուստի և մենք խաղաղություն ենք ցանկանում և համառորեն պայքարում ենք խաղաղության գործի համար։ Մենք չենք կասկածում, վոր խաղաղության այս քաղաքականությունը կարող ե և կծառայի վորպես հիմք անկուսակցական մասսաների հետ կոմունիստների կնքած ընտրական բլոկի համար։ (Բուռն, յերկարատև ծափահարություններ)։

Մենք մեր թշնամիներին գլխովին ջարդեցինք—այդ բանը վոք չի կարող ժխտել։ Սակայն խորհրդային ժողովուրդի դրւիալոր թշնամին գտնվում ե մեր յերկրի սահմաններից գուրս, ուղղատենչ իմպերիալիզմի բանակում, առանձնապես Փաշիստական յերկրներում։ Նա իր համար հենարան չի կարող գտնել մեր ժողովրդի մասսաներում, սակայն այդ պատճառով նա եւ ավելի ջանք է գործադրում, վորպեսզի վնասարարությամբ, դիմերսիաներով, ահարեկելով ու տեսորով մեր շինարարության տակը փորի։ Դրա համար ոտարերկրյա հետախուզություններն ողտագործում են ամեն տեսակի վախիոտ փոքրութիւնների, դրա համար նրանք պահում են ամեն տեսակի լրտես-տրոցկիստներ ու ռեկուլրուխարինյան վնասարարներ ու դիվերսանտներ, վորոնք տակից փորում են մեր յերկրի պաշտպանությունը, ձգտում են իրենց արտասահմանյան սպիտակովարդիտական-մենչեւիկյան աղենաների միջոցով փշացնել, խափանել ոտարերկրյա պետությունների վերաբերմունքը դեպի Խորհրդային Միությունը։ Այդ փաստերը հաշվի չառնել մենք չենք կարող։ Մենք այդ բոլոր մատնիշներին, դավաճաններին, պրովոկատորներին ու լրտեսներին մինչև վերջը պետք ե մերկացնենք։ (Ծափահարություններ)։

Մենք այժմ ավելի լավ գիտենք, քան վորեւ մեկը, թե ինչպիսի սողանցքներով են նրանք մտնում մեր խորհրդացյին տունը, և մենք սովորել ենք ավելի լավ, քան վորեւ մեկը, խիել նրանց հենց ճակատին։ (Բուռն, յերկարատև ծափահարություններ)։

Ոտարերկրյա բուրժուազիայի այս լրտեսներին մենք պետք են հաշվի առնենք այն պատճառով, վոր նրանց սլանները կապված են դրսից սպասվող ուսղմական հարձակումների նախապատրաստման հետ, վոր նրանք յերազում են այն մասին, վորպեսզի ձախողեն մեր ժողովրդի խաղաղ աշխատանքը։

Այս ամենը մեզ ստիպում ե լուրջ միջոցներ ձեռնարկել՝ ամրապնդելու յերկրի պաշտպանությունը։ Այդ միջոցները մենք համառորեն անց ենք կացնում, մենք ամրապնդում ենք կարմիր բանակը, ամրապնդում ենք պաշտպանողական արդյունաբերությունը և ուղում ենք, վորպեսզի մեր ամեն մի գործարան ու ամեն մի կոլտնտեսություն լինեն մեր տնտեսության, կուլտուրայի և պետական պաշտպանության ամրոցներ։ (Բուռն ծափահարություններ)։

Յես կարծում եմ, վոր յերբ մենք այդպես ենք վարվում և յերբ մենք հանուն պաշտպանության կարիքների կրծատում ենք մի քանի այլ կարիքների բավարարումը, ապա մենք ճիշտ ենք վարվում։ (Յերկարատև ծափահարություններ)։

Մենք համոզված ենք, վոր այս բանում ևս մեզ ամբողջությամբ կաջակցի կոմունիստների և անկուսակցական մասսաների բլոկը։ (Բուռն ծափահարություններ)։

Մենք կողմնակից ենք խաղաղության քաղաքականության՝ հանուն մեր քաղաքացիների խաղաղ աշխատանքի ապահովման, հանուն կոմունիզմի, վոր կառուցում ե մեր ժողովուրդը։ Ինչպես հայտնի յէ, միքանի Փաշիստական պետություններ այս բանին պատասխանում են կոմունիզմի դեմ ուղղական յերկյակ և յեռյակ դաշինքներ կնքելով։ Դա այսպես ե արվում։ Վորպեսզի չընկնեն, իրար ձեռք են բռնում, յերկուսով... (Ծիծաղ, ծափահարություններ), իրար ձեռք են բռնում յերկուսով, յերեքով, թերեւս և չորսով, ըստ յերեսութին, այնպիսիները, ովքեր արդեն չեն հավատում իրենց սեփական ուժերին։ Սակայն, իրար ձեռք բռնելով, նրանք իրենց դեռևս չեն փրկում այն վատնգից, վոր նրանք հենց իրենց վոտքերի տակի հողը կորցնում են։ (Ծափահարություններ)։

Մենք պատերազմ չենք ուղում, —ամենքն այդ բանը գիտեն։

ՄԵՆՔ պայքարել ենք ու կպայքարենք հանուն խաղաղության դործի: Այլևս ի՞նչ ապացույցներ են պետք այստեղ:

Տեսէք, թե վորքան խաղաղ են վառվում Կրեմլի մեր հնդաթե աստղերը: Նրանց լույսը հեռու և վատահորեն ե լուսավորում: Ասում են, վոր այդ աստղերը տեսանելի յեն Մոսկվայի բոլոր ծայրերից: Ասում են նաև, վոր նրանք տեսանելի յեն Խորհրդային Միության համարյա թե բոլոր ծայրերից: (Բուռն ծափահարություններ):

Դե՛, իսկ ի՞նչպես կլինի պատերազմի դեպքում, Խորհրդային Միության վրա ուղղմական հարձակում տեղի ունենալու դեպքում:

Դրան մենք կարող ենք ասել, վոր Խորհրդային Միության վրա ուղղմական հարձակում տեղի ունենալու դեպքում հարձակվող կիսործի ի՞նչպես մեր յերկաթյա ինքնապաշտպանության ուժը, այնպես և խորհրդային բոսորագույն աստղերի լույսի ուժը, վորոնք լուսավորում են մեր յերկը սահմաններից շատ հեռու: (Միահամուռ ծափահարությունների վորան):

III

ԱՄԵՆՔԸ ԴԵՊԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս ամենից են յելնում բոլշևիկները՝ առաջարկելով ընտրական բլոկ անկուսակցականների հետ: Սրանից են յելնում բոլշևիկները, կոմունիստներին առաջարկելով Գերադույն Խորհրդի ընտրությունների ժամանակ լիովին աջակցել վոչ միայն կուսակցական, այլև անկուսակցական թեկնածուներին և հույս ունենալով, վոր բոլոր անկուսակցական ընտրողները նույնպես կպաշտպաննեն կոմունիստներին, ինչպես և անկուսակցական թեկնածուներին: (Ծափահարություններ):

Ամենքս դեպի ընտրություններ, ամենքս, վորպես միմարդ, գեկտեմբերի 12-ին ներկայանանք Գերադույն Խորհրդի պատգամավորներ ընտրելու համար: Այս պիտի ասի իր հուժկու ձայնով կոմունիստների և անկուսակցական քաղաքացիների ընտրական բլոկը: Վորքան ավելի լավ կատարենք մենք այս խնդիրը, այնքան ավելի շատ և այնքան ավելի վճռական կլինի անկուսակցականների հետ կոմունիստների կնքած ընտրական բլոկի հաջողությունը:

Խորհրդային յերկրի բոլոր քաղաքացիների համար, —մեր ամեն մի քաղաքացու համար, —մեր ընտրական բլոկում տեղ կա: Մեր բլոկը հիմնված է տասնյակ միլիոնավոր խորհրդային քաղաքացիների դաշինքի վրա, սակայն մենք գիտենք, վոր այդ բլոկի յուրաքանչյուր առանձին մասնակից, յուրաքանչյուր առանձին ընտրող գեկտեմբերի 12-ի ընտրություններին ցուցաբերած իր ժամանակցությամբ ավելացնում ե այդ բլոկի ուժը: (Ծափահարություններ):

Այդ ընտրություններին կմասնակցեն նաև խորհրդային իշխանության թշնամիները: Մենք իրականացնում ենք ընդհանուր, հայաստար, ուղղակի և գաղտնի քվեարկությունն առանց վորեւ սահմանափակումների: Գերադույն Խորհրդի ընտրությունների ժամանակ մեր խնդիրը կայանում է նրանում, վորպեսզի այդ պարոններին թողնենք միայնակ, խորհրդային ամբողջ ժողովրդից խղճալիորեն մեկուսացված վիճակում: (Բուռն ծափահարություններ):

Գերադույն Խորհրդի ընտրությունները նշանակում են, վոր մեր Ստալինյան Սահմանադրությունը գործի յե դրված, վոր նա դարձել ե խորհրդային իշխանության շուրջը, բոլեկիկյան կուսակցության շուրջը, ընկեր Ստալինի շուրջը ժողովրդի նոր համախմբման մի հզոր գործիք, վոր սոցիալիզմ կառուցողները մեր յերկրում գնում են դեպի նոր մեծ հեծ հաղթանակներ: (Ծափահարություններ):

Գերադույն Խորհրդի ընտրությունները մենք նշում ենք ստախանուվյան ուեկորդներով: Մենք կբազմապատկենք այդ ուեկորդները և որ որի վրա կհետևենք այդ հաջողություններին, կուսումնասիրենք այդ հաջողություններն ապահովող պայմանները, կտարածենք այդ հաջողությունները բանվորների միջև: Ստախանուվյան մի որվա հաջողությունները մենք կղարձնենք տեսական հաջողություններ, ամբողջ ցեխերի, ամբողջ գործարանների հաջողություններ: Մեր գործարաններն աշխատում են ամելի լավ ու ավելի արտադրողաբար, քանի արտասահմանյան ամենալավ գործարանները: (Բուռն ծափահարություններ):

Մենք այս ընտրությունները նշում ենք 1937 թվին հացահատիկի նշանավոր բերքով: Մեր յերկիրը գեռես յերբեք չի հավաքել այնքան հացահատիկ, վորքան այս տարի, յերբ բերքը հասալ 7 միլիարդ փթի: (Ծափահարությունների վորան): Մենք համոզված ենք, վոր գյուղատնտեսության մեջ ձեռք բերած այս

Հաջողությունները վոչ միայն կապահպաննենք, այլև կավելացնենք այդախոիները գյուղատեսության բոլոր ճյուղերում և Խորհըրդային Միության բոլոր մարդերում։ (Ծափահարություններ)։

Գերազույն Խորհրդի ընտրությունները մենք նշում ենք կուլտուրական նվաճումների բազմալատկումով։ Վորագեսդի վերջ տանք կապիտալիզմի մնացորդներին մարդկանց գիտակցության մեջ, մենք պետք են ամվալենք հսկայական աշխատանք հանուն մեր կուլտուրայի սոցիալատական բովանդակության իր բոլոր ազգային ձևերով և բոլոր լեզուներով։ (Բուռն ծափահարություններ)։ Թողել ավելի արագ աճեն խորհրդային ինտելիգենցիայի ուժերը։ Լա՛յն ճանապարհ տանք խորհրդային յերկրի ժողովուրդների տաղանդավոր մարդկանց։

Գերազույն Խորհրդի համեմաշխ ընտրությունները, դեկտեմբերի 12-ին ամբողջ 90) միլիոն ընտրողների մասնակցությունն ընտրություններին, ամենաուժեղ կերպով կամրապնդեն Խորհրդային Միության հզորությունը, ե՛լ ավելի կրաքարացնեն խորհրդային իշխանությունը, կիառաբանեն Լենինի—Ստալինի մեծ դրոշը բոլոր յերկրների աշխատավորների միջև։ (Բուռն, յերկարաժև ծափահարություններ)։

Ենք պետք են Գերազույն Խորհրդի ընտրություններն այնպես անցկացնենք, վորագեսդի կրեմլյան աստղերի կարմիր լույսն ե՛լ ավելի պայծառ փայլի ԽՍՀՄ աշխատավորների համար և ամբողջ աշխարհի ճնշվածների համար և վորագեսդի մեր կուսակցությունն ու ընկեր Ստալինն այդ ընտրությունների մասին միայն մի խոսք ասեն. «Լա՛վե»։ (Բուռն, յերկարաժև ծափահարություններ, վոր վեր են ածկում ովացիայի։ Բոլորը վոտքի յեն կանգնում։ Բացականչություններ. «Լենինյան-ստալինյան կերպուա՛», «Ժանուարի մեծ առաջնորդ ընկեր Ստալինին ուռա՛», «Կեցցե՛ Գերազույն Խորհրդի պատգամավորության թեկնածու ընկեր Մոլոտովը, ուռա՛», «Հանուն կոմունիստների և անկուսականների միջև ընտրությունների ժամանակ կնքված բլոկի։ Ամենքս դեպի ընտրություններ, ընկերնե՛ր, ուռա՛»)։



Լ. Մ. ԿԱԳԱՆՈՎԻԶ

ՏԱՐ ՏԱՇՔԵՆԴԻ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՆԱԽԵՆՏՐԱԿԱՆ
200-ՀԱԶԱՐՆՅՈՑ ՄԻՏԻՆԳՈՒՄ
1937 թ. գեկտեմբերի 9-ին

Ընկերնե՛ր, յես Տաշքենդ յերրորդ անդամն եմ գալիս։ Բայց ի՞նչ ահազին տարբերություն կա իմ առաջին յերկու և ներկայիս գալու միջև։ Նրանք քաղաքացիական սլատերազմի տարիներն եյին, քայլքայման, սովոր ու ցրտի տարիներ, խորհրդային իշխանությունն ամրապնդելու համար, սպիտակ-գվարդիականների և ինտելիգենտների մնացորդների դեմ վերջնական

հաղթանակ տանելու համար մզվող պայքարի տարիներ, մանավանդ այստեղ, նախկին թուրքեստանում, վորտեղ խորհրդային իշխանությունը դեռ թույլ եր և դեռ բամաշներն եյին գործում:

Ինձ վիճակվեց ձեզ հետ միասին, կուսակցության և կուսավարության հանձնարարությամբ, նախկին ցարական գաղութում՝ թուրքեստանում դնել խորհրդային յերիտասարդ հանրապետության հիմքերը: Ահա թե ինչու յես մեծ ուրախությամբ համաձայնությունս տվի քիւերկվել Տաշքենդում, Ուզբեկական խորհրդային հանրապետության մայրաքաղաքում, և յես ձեղ, ընկեր ընտրողներ, իմ բոլցեիկյան անկեղծ շնորհակալությունն եմ հայտնում այն մեծ վատահության, այն պատվի համար, վոր դուք իմ ցույց տվիք, առաջադրելով իմ թեկնածությունը ԽՍՀ Միության Գերադույն Խորհրդի պատգամավոր մենելու համար: (Բուռն ծափակարություններ: «Ուռա» բացականչություններ:)

Թե՛ այն ժամանակ և թե՛ հետագա տարիներին յես, ինչպես և յուրաքանչյուր բոլցեիկ, աշխատանքս տարել եմ այնպես, ինչպես վայել և Լենինի-Ստալինի մեր մեծ, անպարտելի կուսակցության անդամին և հայատարիմ վորդում: (Բուռն ծափակարություններ): Յեկ յեթե, ընկերնե՛ր, մեր աշխատանքն արգասավոր դուրս յեկար, ապա դրանով մենք պարտական ենք վոչ այնքան անձնական հատկություններին, վորքան մեր կուսակցության քաղաքականության ճշտությանը, նրա զեկավարող մեծ ուժին՝ կենտրոնական կոմիտեյին և աշխատավորների մեծ ուսուցին և առաջորդին՝ մեր սիրելի Ստալինին: (Ովացիս: «Ուռա» բացականչություններ ի պատիվ ընկեր Ստալինի): Հենց դրա համար ել Գերադույն Խորհրդի պատգամավոր լինելու բոլոր թեկնածությունները, վոր առաջադրվել են կոմունիստների և անկուսակցական բանվորների ու աշխատավորների բլոկով, վաշինջով, առանց աստիճանների տարբերության, առանց պաշտոնների ու դիրքի տարբերության, հայսասարապես արժեքավոր են, հավասարապես կարևոր են: Նրանց արժեքը նրանումն ե, վոր կուսակցությունն անկուսակցականների հետ մեկտեղ վաստակում ե նրանց, վոր նրանք անսահմանորեն հավատարիմ են ժողովրդի շահերին, հավատարիմ են բոլցեիկյան կուսակցության ուժին ու քաղաքականությանը:

Աշխարհում կուսակցություններ շատ կան, բայց մարդկության պատմությունը չի իմացել և չգիտե մի այնպիսի կուսակ-

ցություն, վորակեախն մերն ե: Յեկ սա պարծենկոտություն չե, այլ պատմական ոբյեկտիվ ճշմարտություն, վոր ապացուցված է Լենինի-Ստալինի վարապանծ դրոշի տակ մեր կուսակցության մղած պայքարի տասնյակ տարիներով: (Բուռն ծափակարություններ):

Աշխարհում դոյցություն ունեն շատ կուսակցություններ, վորոնք ընտրությունների ժամանակ հանդեմ են դալիս բազմախոսում, յերեք չկենսագործվող գելալարացիաներով: Այդ կուսակցությունները մասսաների մոտ զնում են միայն ընտրական կամպանիաների որերին, վորպեսզի ստի, խարեւայության և կեղծավորության միջոցով վորքան կարելի յե շատ ձայներ ստանան և ժողովրդի շահերը յենթարկեն տիրող մի բուռ բանկիրներին, ֆարբիկաննաներին և գործարանատերերին: Ել յես չեմ խոսում այնպիսի խարեւաների և սրբկանների մասին, ինչպիսին ֆաշիստներն են: Կապիտալիստական վո՛ր յերկրում ասես, բուռժուական քաղաքագետները պնդում են, թե ժողովուրդը, ընդհանուրը, ուղղակի, հայլասար և գաղտնի ճայնություն ստանալով, «տեր» և դառնում: Իսկ իրոք այդ ճիշտ չե, դունավորված խարեւություն և միայն: Կյանքում այդ դուրս ե դալիս պատրանք, ստապատիր մի շնորհագիր, վորովհետեւ բուրժուական ամենազեմոկրատական յերկրի բանվորը, դյուղացին, աշխատավորը, քիվ տալով ընտրությունների ժամանակ, ընտրական բյուլետենից զատ վոչինչ չունի:

Մենք մի բուրժուական յերկրում բանվորները, գյուղացիները և ինտելիգենցիան, թեպետ և ընտրությունների ժամանակ քվե յեն տալիս, իրականում գտնվում են իսկական տերերի իշխանության տակ, վորոնք տիրում են արտադրության բոլոր միջոցներին, ֆարբիկաններին և գործարաններին և վաստորեն հրամայում են մինիստրություններին, վորոշելով նրանց քաղաքականությունը: Միքանի հարյուր խոչըր միլիոնատեր, բանկիր, ֆարբիկանա և դործարանատեր վորոշում են միլիոնավոր մարդկանց ամբողջ բախտը, կառավարության ամբողջ քաղաքականությունը ուղածդդ, նույնիսկ ամենադեմոկրատական յերկրում: Թող թույլ տրվի ասել, այդ ի՞նչ տեր ե, յերբ նա այսոր ձայն ե տալիս իրրե «տեր», իսկ վաղն իսկական տերը՝ ֆարբիկանտը նրան վողոց ե շպրտում և դարձնում գործազրուրի, աղքատ: Այդ ի՞նչ «տեր» ե, վոր դուրս ե իր

վաղվա որվա համար, յերբ ինքը մատնված կլինի սովի, ցրտի և մահվան:

Բուրժուական ուղածդդ յերկրի այդ պայմաններում արդյոք կարո՞ղ է ժողովրդապետություն լինել: Վո՞չ: Մեր խորհրդային, սոցիալիստական դեմոկրատիայի եյությունը, վորը վառ կերպով արտահայտված է Ստալինյան Սահմանադրության մեջ, այն և, վոր նա խարսխված է մի բոլորովին այլ հիմքի վրա: Մեր դեմոկրատիայի հիմքը դրված է արտադրության միջոցների մասնավոր սեփականատիրության լիկիդացիայի վրա, շահագործող. դասակարգերի՝ կազմակերպության և կալվածատերերի լիկիդացիայի վրա:

Սոցիալիստական պետության ձեռքին, մեր յերկրի աշխատավոր մասսաների ձեռքին են ֆարբիկաները, գործարանները, բանկերը, տալարանները: Մեզանում ինչպես քաղաքում, այնպես ել գյուղում լիկիդացիայի յեն յենթարկված մարդուն մարդու ձեռքով վորեն կերպ շահագործելու սոցիալական հիմքերը և պայմաններ են ստեղծված յերկրի կառավարման գործում բոլոր քաղաքացիների իսկական հավասարության համար: Այդ սոցիալիստական ճշմարիտ դեմոկրատիան մեր ժողովուրդը նվաճել է իր հարազատ բոլշևիկյան կուսակցության դեկալարությամբ: Մեր կուսակցությունը բանվարենքի մոտ, զյուղացիների մոտ, ժողովրդի մոտ և յեկել վոչ թե դրսից, այլ նա անել ե ժողովրդի իսկ ընդերքից և ամենից առաջ ժողովրդի ամենա առաջավոր դասակարգի՝ նրա ավանդարդի ընդերքից, բանվարդի ընդերքից: (Ծափահարություններ):

Մեր կուսակցությունն աճել է բանվոր դասակարգի հետ մեկտեղ ֆարբիկաներում, գործարաններում, դաշտյահների մոտ, հրահալցների մոտ, շոգեկառքերի մոտ, վագոնների մոտ, հանքահարերում: Նրա հավատարիմ վորդիներն ու աղջիկներն աճել են բանվորական գետնահարկերում, իրավագուրք, չքավորության մեջ, վոր բանվորներն ու գյուղացիները կրում եյին հին, անիծված ժամանակները: Կապիտալիստների դեմ բանվորական գործադուլներում, հերոսական բարիկադների վրա, խրամատներում, կալվածատերերի դեմ գյուղացիական ապստամբություններում, ցարական կամացականության և ստրկացման դեմ ճընշված ազգությունների հեղափոխական ապստամբություններում, ժողովրդի բոլոր թշնամիների դեմ մղված արյունահեղ անդուլ

պայքարում աճել, ամբացել ու կոփվել ե մեր կուսակցությունը, գլխավորելով աշխատավոր մասսաների յերթը:

Կուսակցությունը իրականացրեց շահագործման վոչնչացումը, սոցիալական և աղջային դարավոր մնջման վոչնչացումը: Վոչնչացված են դարավոր անկուլտուրականությունը, անդրադեպությունը, խավարն ու տղիտությունը: Կազմակերպելով և համախմբելով մեր հերոսական ժողովուրդը, կուսակցությունը մեր հայրենիքը դուրս բերեց սոցիալիզմի մեծ հաղթանակների լայն ուղին: («Ուտա» բացականչություններ): Բուռն ծափահարություններ):

Բուրժուական գրչակների, բուրժուական քաղաքակետների համար դժվար է հասկանալը, թե ինչումն ե մեր կուսակցության գաղանիքը, վորտեղից և ստացվել այդ ուժը: Կար մի փոքր բիկ կուսակցություն, վորին ցարիզմը ջախչախում եր, նրա ըստ կուսակցություն մարդկանց ուղարկելով տաժանակիր աշխատանքի, Սիրիր, աքսոր, կախաղան: Յեվ ահա այդ կուսակցությունը մի- ավորեց Խորհրդային Միության 170-միլիոնանոց ժողովուրդը և ավորեց Խորհրդային Միության 170-միլիոնանոց ժողովուրդը և ավագելում է հարյուր-միլիոնավոր աշխատավորների սերը, վայելում և հարյուր-միլիոնավոր աշխատավորների սերը, վաստակությունը և հարդանքը աշխարհի բոլոր յերկրներում: (Բուռն ծափահարություններ):

Յուրաքանչյուր անկուսակցական իր գիտակցությամբ, բանականությամբ, հոգով ու սրտով գիտե, վոր միայն բոլշևիկյան կուսակցությունն ե նրա համար ապահովել աղատագրումը ճընկությունը, ապահովել սոցիալիզմի կառուցումը: Նա գիտե, վոր այդ իր կուսակցությունն ե, իր կենտրոնական կոմիտեն ե, վոր կոմունիստները աշխատավոր ժողովրդի մսից ու արյունից են, վորոնք իրենց ամբողջ կյանքը, բոլոր ուժերը, ամբողջ յեռանդը, իրենց ամբողջ արյունը կաթիլ տալիս են ժողովրդի բարիքի համար: Ահա թե վորտեղ են մեր հզոր, փառապանծ և ակտուարդիների կողմից սիրված՝ բոլշևիկների կուսակցության ժողովուրդների կողմից սիրված՝ կուսակցության արմատներն ու ակունքները: (Բուռն ծափահարություններ): «Ուտա» գոյշուններ):

Ժողովուրդը, բանվոր դասակարգն իրենց ամբողջ անսպառութը, իրենց հզորությունը, կուսակցությանը ցույց տրվող անսահման վատահությունը մարմնավորել են մի մեծ, իրենց անսահման վատահությունը մարմնավորել են մի բոլոր աշխատավոր մասսաների համար ամենաքաղաքին անվան մեջ—բոլշևիկների և ամբողջ ժողովրդի համար մերձավոր, հարազատ, սիրելի առաջնորդի՝ ընկեր Ստալինի անվան մեջ:

(Բուռն, յերկար ժամանակ չլոռդ ովացիա: Բացականչություններ՝ «Ռուռա», «Կեցցե՛ մեծ Ստալինը»): Մեր կուսակցությունն աշխատավոր մասսաների վստահությունն արդարացրել ե իր ամբողջ պատմության ընթացքում: Մեր կուսակցության խոսքը յերեք չի տարբերվում գործից—իսկ սա դլասալորն է: Բուռնիկյան նշանավոր լողունդները, Լենինի և Ստալինի 1917 թվականի լողունդները—«իշխանությունը խորհուրդներին», հաշտության, հացի, հողի և ազատության լողունդները—մեր կուսակցությունը վոչ միայն առաջարկել ե, այլև ամբողջովին իրականացրել այդ հոյակար լողունդներն ու պլանները:

Մենք հաղթանակ տարանք քաղաքացիական պատերազմում: Մենք վերականգնեցինք քայլայմած տնտեսությունը: Դրանից հետո մեր ժողովուրդը, բոլշևիկյան կուսակցության կողմից զեկավարվելով, ձեւք զարկեց իր յերկրի սոցիալիստական վերակառուցմանը: Եռուսակցությունը և աշխատավոր մասսաները ձեռք զարկեցին մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու համար մղվող հարձակման ստալինյան դիմալոր պլանն իրականացնելու:

Ստալինյան առաջին և յերկրորդ հնդամյակները վճռողական քննությունն հանդիսացան սոցիալիզմի համար մղվող պայքարում: Կարելի յե առանց չափազանցության ասել, վոր առաջին և յերկրորդ հնդամյակները, ինդուստրացումը և մանավանդ դյուզատնեսության կոլեկտիվացումը—դա մի հոյակապ հեղափոխություն է, վոր աշխարհը յերեք չի տեսել: Մենք լուծել ենք հարյուր-միլիոնավոր մարդկանց դեպի սոցիալիզմը դարձնելու՝ համաշխարհային պատմության մեջ մեծադույն խնդիրը, դյուզատնեսությունը բարեփոխելու. և դյուզացիությանը վերակերտելու, վերադաստիարակելու խնդիրը: Այսոր Գերազույն Խորհրդի ընտրական կամ օլանիային դալիս և մեր նոր դյուզացիությունը՝ կոլտնտեսական դյուզացիությունը, վոր ամրապես և անընդարձ կանդնել ե սոցիալիզմի դրոշների տակ: (Բուռն ծափակարություններ):

Պատմությունը շատ հեղափոխություններ դիտե, վորոնք շատ զոհեր են տվել և ժողովրդական արյուն են թափել, իսկ այդ հեղափոխություններից վերջին հաշվով ժողովուրդը ձեռնունայն ե մնացել: Մեղանում ել այդ եյին ուզում ժողովրդի թշնամիները: Դրա վրա եյին հույս դրել նաև ոտարերկրյա կապիտալիստները: Յեթե մենք առաջին և յերկրորդ հնդամյակները չանցկացնեյինք, յեթե մենք ձեզ հետ ձեռք չղարկեյինք մեր

յերկրի և նրա գյուղատնտեսության սոցիալիստական վերակերտմանը, յեթե մենք ձեզ հետ չկառուցեյինք մետալուրգիական, մեքենաշինական, պղնձի և քիմիական գործարանները, յեթե մենք չամրացնեյինք յերկաթուղային տրանսպորտը, յեթե մենք գյուղատնտեսությանը չտայինք սեփական արտադրության հարյուրհազարավորները և կոմբայններ, ավտոմոբիլներ, ասև մեր հեղափոխության նվաճումները կարող եր պատահել, վոր վոչնչանային: Յեկ մեկ կապանար կապիտալիզմի վերականգնուման վտանգը: Այդ եյին ուզում ֆաշիստական, արոցկիստաբությինական լրտեսները, բուրժուական նացիոնալիստները, մեր հայրենիքի գալաճանները, իմպերիալիստական պետությունների վարձիկան չները, ոտարերկրյա հետախուզությունների, ների գործակալները: Բայց մեր ժողովուրդի յերշանկությունն է, վոր նրա պայքարը զեկավարում և բոլշևիկների կուսակցությունը և քաղաքական մտքի ու անխորտակելի կամքի մի այնպիսի հոկա, հանձար, ինչպես ընկեր Ստալինը: (Բուռն ծափակարություններ: «Ռուռա» բացականչություններ):

Մեր ժողովուրդը, ջախճախելով թշնամիներին, հաղթահարելով դժվարություններն ու պակասությունները, իրականացներելով հոգագործություններն ու առաջանացները, ստեղծեց լով ստալինյան առաջին և յերկրորդ հնդամյակները, ստեղծեց սոցիալիստական հզոր ինդուստրիա, աշխարհում խոչորագույն հոգագործությունը: Այժմ պարզ է, վոր չկապիտական հոգագործությունը: Այժմ պարզ է, վոր սոցիալիզմը հաղթանակել է: Ստալինյան յերկու հնդամյակների հետեանքով մենք ունենք թե՛ պողպատ, թե՛ մոտորներ, թե՛ յերկաթուղային տրանսպորտ, թե՛ պողպատ, թե՛ ինքնաթիռներ—այն ամենը, ինչ անհրաժեշտ է մեր մեծ հայրենիքի պաշտպանության համար, ամեն մի թշնամու վոչնչացնելու համար, վոր կհամարձակվի անցնել մեր թշնամու վոչնչացնելու համար: (Բուռն ծափակարություններ: Բազմահազար «Ռուռա»):

Մենք, ընկերնե՛ր, ունենք ամբողջ ժողովուրդի սիրած, առաջնակարգ տեխնիկայով հաղեցված, անհողողու, փառագահնակարգ տեխնիկակայով հարմիք բանակ, վոր գլուխ, թե ինչի բանլորա-դյուզացիական կարմիք բանակ, վոր գլուխ, թե կովում: (Բարձրածայն «Ռուռա»: Բուռն ծափակարություններ): Բայց նոր, լավ բաներ ունենալը քիչ է: Ամենադիմաց կորը, վոր ներկայումս մեր յերկրին ունի,—դա նոր, նշանավոր մարդիկ են, վորոնք աճել, կուլտուրական են դարձել և համարձակվի են իրենց ժողովրդին: Այդպիսի մարդիկ մենք հավատարիմ են իրենց ժողովրդին: Այդպիսի մարդիկ մենք հա-

բյուր-հազարներով ու միլիոններով ունենք: (Ծափահարություններ):

Եերեկ յես Տաշքենդի, Կարմիրարեկելյան գործարանում հանդիպեցի յերկաթուղային մի հին բանվորի, վորն ինձ մանրամասնորեն պատմեց իր ընտանիքի կյանքի մասին: Նրա մեկ վորդին արդեն կառուցող ինժեներ է, մյուսը՝ տեխնիկ, իսկ կինը՝ ակտիվ հասարակական աշխատող: Դա, ընկերնե՛ր, միակ դեպքը չէ: Այդ և հարյուր-հազարամյոր, միլիոննավոր մարդկանց նոր կյանքը: Նոր մարդիկ, նոր յերկիր, նոր կուլտուրա-ահա թե ինչով ենք մենք զնում դեպք Գերազույն Խորհրդի ընտրությունները: Ընկերնե՛ր, ի՞նչպես ենտուղիաստ չլինել, ի՞նչպես չսիրել մեր կուսակցությանը, ի՞նչպես ժողովուրդը չսիրի նրան, ով ապահովել և այդ հաղթանակները, ով մեզ հասցրել և սոցիալիզմի հաղթանակին, ի՞նչպես չսիրել մեծ Ստալինին: (Յերկար ժամանակ չլուղ ծափահարություններ և «ուռա» բացականչություններ):

Լենինի-Ստալինի կուսակցության աղջային քաղաքականության կենսագործումը անսովոր բարձրության հասցրեց մեր մեծ խորհրդային պետության հղորությունը: Մենք այժմ չունենք յերեմնի հետամնաց աղջային ծայրամասային յերկրներ: Ստեղծվել և ծաղկում են ի սարսափ թշնամիների և հուրախություն աշխատավոր մարդկության միութենական աղջային տասնմեկ հանրապետությունները իրենց արդյունարերությամբ, կուտնօտեալին կարգերով. իրենց՝ ձեռվ աղջային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայով: Մեր բոլոր աղջային հանրապետությունները միավորվել, կազմել են միասնական մի Հզոր ուժ, միասնական անիզելի, հղոր մի պետություն, վոր կոչվում է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն: (Ծափահարություններ: «Ուռա» բացականչություններ):

Ես հիշում եմ այն ժամանակաշրջանը, յերբ ինձ վիճակից 1920 թվականին առաջին անգամ դալ այն ժամանակվա թուրքեատանը, վորտեղ դեռ նոր-նոր եյլն դրվում խորհրդային իշխանության հիմքերը: Այն ժամանակ հարկ եր լինում, վոր խորհրդային իշխանությունն ամրապնդելու համար մղված պայքարում հաղթահարելինք անկուլտուրականությունը, խավարը և բավական ուժեղ աղջային պառակտվածությունը: Սոցիալիզմի համար մղված պայքարում համառ աշխատանքով կովկեց ժողո-

վուրդների ստալինյան անքակտելի բարեկամությունը, վոր իր փառակոր արտահայտությունը դտավ Ստալինյան Սահմանադրության մեջ:

Մեր հայրենիքի թշնամիները, առաջին հերթին Փաշիստներն ու նրանց հետախույզները՝ տրոցկիստ-զինովյանական և ովկով-բուխարինական լրտեսները ձգտում են թուլացնելու մեր միասնական Խորհրդային պետությունը: Բայց այդ չի լինի: Թող թշնամիները գիտենան, վոր մեր Խորհրդային Միությունն ուժեղ ու անխորտակելի յէ: (Ծափահարություններ): Խորհրդային ժողովուրդը, կուսակցության ղեկավարությամբ, անողոք պայքար և մղում հայրենիքի բոլոր գավաճանների դեմ, բուրժուական նացիոնալիստների դեմ, արյունարբու Փաշիզմի տրոցկիստ-բուխարինական լրտեսների դեմ: Մեր փառապանծ ներքգործժողովներական կոմատականները, արտահայտելով ժողովրդական մասսաների կամքը, մեկը մյուսի հետեւից մերկացնում և վոչնչացնում են ժողովրդի անարդներից ամենանարդ թշնամիներին, Փաշիզմի ժողովրդի անարդներից ամենանարդ թշնամիներին, ծախսու չներին: Ընտրական կամպանիան կորչնի ե՛լ ավելի սերտ համախմբելու աշխատավորներին, ե՛լ ավելի խորաթափանցորեն համար հետամնական կուտեսությունն ու զգոնությունը, վոր զարգացնելու նրանց հետամնական կուտեսությունն ու զգոնությունը, վոր զինչել վերջ և առանց մնացորդի արմատակիլ անենք և պեսզի մինչեւ վերջ և առանց մնացորդի արմատակիլ անենք, վորոնք մնացնչացների այն բոլոր թշնամիներին, վորոնք մնացնչացների սոցիալիզմի այն բոլոր թշնամիներին, վորոնք մնացնչացների առաջարկում և խանդարում են առաջընթաց հաղթացել են Ռուբեկաստանում և կատարելու հանրապետությունների անդամանքը:

Թշնամիները մեզ մոտ նոր լրտեսներ կուղարկեն: Բայց թող նրանք իմանան, վոր պլույետարական դիկտատուրայի պատիչ ձեռքը կհասնի մնացած դեռ չմերկացված թշնամիներին և նրանց մինչեւ կերջ կվոչնչացնի: Խորհրդային յուրաքանչյուր քաղաքացի զեկտեմբերի 12-ի որը, իր բյուլետենը ընտրական քվեատութը զեկտեմբերի մեծ, սուրբ կործ կվատարի: Նո կատարում և անցած հանրապետություն սոցիալիզմի պայքարի և մեր յերկրում հաղթանակելու հանրապետումարը: Բայց վոչ միայն հանրապետական ամբողջ կամպանիայի ընթացքում և դեկտեմբերի որը: Ընտրական ամբողջ կամպանիայի ընթացքում մասսաները ե՛լ ավելի ամուռ համախմբում են իրենց շարքերը կուսակցության շուրջը, խորհրդային իշխանության շուրջը, աշխատավորների ամրող մասսան իր ուժերը մորիկացիայի յէ յենթարկում ժողովրդի թըշնամիների դեմ, արտաքին վտանգների դեմ հետագա պայքար մղելու համար:

Բնկե՛ր ընտրողներ: Համամիութենական կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության կենտրոնական կոմիտեն իր «Դիմումի» մեջ բոլոր ընտրողներին կոչ արեց ձայն տալ բոլոր թեկնածուների ոգտին առանց կոչումների և աստիճանների խորության, այն թեկնածուների ոգտին, վոր առաջադրել և կուսակցությունը՝ բոլոկ, դաշինք կնքելով անկուսակցականների հետ: Այդ նշանակում է, վոր դուք ճայն կտաք, վորպեսզի մեր յերկիրն ավելի ու ավելի ծաղկի ի սարսափ բոլոր քշնամիների, և հուրախուրյուն մեր բարեկամների: Դուք ճայն կտաք ե՛լ ավելի լավ, ե՛լ ավելի ունենոր կյանքի համար: Դուք ճայն կտաք խորհրդային եզրորդի համար, խորհրդային մեծ Սիուրյան բոլոր ազգուրյունների բարեկամուրյան, միասնուրյան համար: Դուք ճայն կտաք սոցիալիզմի նոր մեծ հաղթանակների համար: (Միահամուռ ծափահարուրյուններ):

Բնկերնե՛ր, ինչ վերաբերում է ինձ, Գերազույն Խորհրդի պատգամավորության թեկնածունս, յես ձեզ խոսք եմ տալիս այսուհետեւ ել ամուր կապ պահպանել աշխատավորների հետ, բանվոր դասակարգի հետ, վորի միջից յես ինքս եմ դուրս յեկել, հետաքայում ես պայքարել ժողովրդի շահերի համար, ինչպես պայքարել եմ մինչև այժմ բոլշևիկյան կուսակցության շարքերում: (Ծափահարուրյուններ: Բարձրաձայն «ուռա»):

Յես ձեզ վստահացնում եմ, վոր այսուհետև ել կլինեմ մեր կուսակցուրյան հավատարիմ վարդին, իմ մեծ ուսուցիչ ընկեր Ստալինի մինչև վերջը հավատարիմ և անձնվեր աշակերտը: (Բուռն, յերկար ժամանակ չորող ովացիա: Բացականչուրյուններ՝ «Կեցցե՛ մեր սիրելի Ստալինը»):

Մենք չենք կասկածում, վոր Ստալինյան Սահմանադրությամբ առաջին ընտրություններին դուրս կդան բոլոր ընտրողները: Մենք չենք կասկածում, վոր մեր յերկրի ընտրողները 1937 թվականի դեկտեմբերի 12-ին ամբողջ աշխարհին մեկ անգամ ել ցույց կտան Խորհրդային Սիուրյան ժողովուրդների միասնությունն ու հզորությունը, մեր կուսակցության և ժողովրդական մասսաների կապերի անխղելիությունը:

Բնկերնե՛ր, աշխատավոր մասսաները, առաջին հերթին բանվոր դասակարգը՝ այժմ իսկ Գերազույն Խորհրդի ընտրությունները համբերժացը ստախանության շարժման նոր վերելքով: Սոցիալիստական տնտեսության բոլոր բնագավառներում—ածխի, մետալուրգիական, նավթի արդյունաբերության մեջ, յերկաթու-

ղային տրանսպորտում, գյուղատնտեսության մեջ—մենք տեսնում ենք յեռանդի ու կայտառության, շարքերի խոացման, աշխատանքի արտադրողականության բարձրացման մի նոր մակընթացություն: Կարելի յե չկատկածել, վոր Գերազույն Խորհրդի ընտրությունները մեր Խորհրդային Միությունը կրաքացնեն նոր և նոր բարձրունքների: Մեր մեծ ժողովուրդն իր անպարտելի կուսակցության ղեկավարությամբ, իր առաջնորդ ընկեր Ստալինի ղեկավարությամբ կղնա առաջ ու առաջ զեղի կոմունիզմի նոր մեծ հաղթանակներ: (Բուռն, յերկար ժամանակ չորոդումը: Տղոր «ուռա» անցնում է ծայրից ծայր, հենչում է կարմիր հրապարակում, անցնում է փողոցները, պուրակները, վորտեղ տանեակ-հազարավոր ընտրողներ բարձրախոսությունները, վորտեղ տանեակ-հազարավոր ընտրողները: Ինուսերեն և ուզբեկերեն դպրում են բացականչուրյունները ի պատիվ ընկեր Ստալինի, բոլշևիկյան կուսակցության, ի պատիվ ստալինյան ժողկում և. Մ. Կագանովիչի):



Վ. ՅԵ. ՎՈՐՈՇԻԼՈՎ

ՏԱՐԱԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՆԱԽԱՏՐԱԿԱՆ
120-ՀԱՅԱՍՏԱՆՈՅ ՄԻՏԻՆԳՈՒՄ
1937 թ. գեկտմբերի 7-ին

Բնկերներ, ձեզ—բանվորներիդ ու բանվորուհիներիդ, կոլ-
անտեսականներիդ ու կոլտնտեսուհիներիդ, կարմիր մարտիկ-
ներիդ, համանատարներիդ ու քաղաշխատողներիդ, աշխատա-
վոր ինտելիգենցիայի ներկայացուցիչներիդ, ձեզ—Մինսկի ընտ-
րական ոկրուգի կուսակցական և անկուսակցական բոլշևիկնե-
րիդ—հայտնում եմ իմ խորին, կարմիրբանակային բոլշևիկան
չնորհակալությունը մեծ պատվի համար, վորին արժանացրել եք
դուք ինձ, առաջադրելով Խորհրդային Սոցիալիստական Հան-

րապետությունների Միության Գերագույն Խորհրդի ձեր թեկ-
նածու:

Ենկերներ, այն բոլոր լավ խոսքերը, վոր ասվեցին այստեղ
իմ հասցեյին, յես ամբողջովին և լրիվ վերադրում եմ Լենինի—
Ստալինի մեր մեծ կուսակցությանը: Յես մեր կուսակցության
գավակն եմ, և յեթե յես վորեւ ծառայություն արել եմ ժողո-
վըրդին, ապա դրա համար յես պարտական եմ մեր կուսակցու-
թյանը, մեր առաջնորդ ընկեր Ստալինին: (Ծափահարություն-
ներ, «ուռա» բացականչություններ):

Հինդ որից հետո խորհրդային ամբողջ ժողովուրդը կդնա
ընտրական քվեատուակի մոտ, վորպեսդի արտահայտի իր կամքը,
վորպեսզի Ստալինյան Սահմանադրության հիման վրա Խորհր-
դային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գե-
րագույն Խորհրդարդ ընտրի:

Աշխարհում չկա ուրիշ մի այնպիսի յերկիր, ուր ժողովուրդն
այնպիսի սահմանադրություն ունենա, ինչպիսին մեր՝ Ստալինյան
Սահմանադրությունն ե, ուր ժողովուրդն այնպես իրավահայտ-
ար և լիիրավ լիներ, ինչպես իրավահայտար և լիիրավ ե մեր
Խորհրդային ժողովուրդը:

Բուրժուական շատ պետություններ կան, վոր իրենց դեմո-
կրատական են անվանում: Այդ գեմոկրատիաների գինը մենք
բոլոր շատ լավ գիտենք: Դրանք կեղծ գեմոկրատիաներ
են: Այսոեղ, ուր բանվորներն ու գյուղացիները, ուր բոլոր
աշխատավորները, դրանց թվում և ինտելիգենցիան, աշխա-
տում են մի փոքր խումբ կազիտալիստների շահերի համար,
այնուեղ, ուր դասակարգային անինան-կատարի պայքար ե յե-
ռում և միլիոնավոր գործազուրկ պրոլետարներ քարչ են տալիս
ուրենց թշշառ գոյությունը, այնտեղ, ուր բուրժուազիան իր ո-
րենքներն ու կամքն ե թելադրում, այնտեղ չկա և չի կարող լի-
նել իսկական դեմոկրատիա, այնտեղ չկա և չի կարող լինել քա-
ղաքացիների իրավահայտարություն:

Միայն մեր յերկրում, հաղթանակած աշխատանքի յերկրում,
գոյություն ունի իսկական դեմոկրատիա:

Մեր Ստալինյան Սահմանադրությունը հանդիսանում ե սո-
ցիալիզմի նվաճումների փայլուն հանրագումարը, Լենինի—Ստա-
լինի կուսակցության և Խորհրդային Միության բոլոր աշխատա-
վորների մեծ նվաճումների հանրագումարը: Միայն Խորհրդային
Միության մեջ ե Սահմանադրությունը բոլոր աշխատավորներին

աշխատանքի և հանգստի իրավունք ապահովում, կրթության իրավունք և ծերության ժամանակ ապահովություն տալիս:

Միայն Խորհրդային Միության մեջ և Սահմանադրությունը ապահովում կնոջ իրավահավասարությունը և յերշանիկ մայրությունը:

Միայն Խորհրդային Միության մեջ բոլոր ազգերի ու ցեղերի ժողովությունները իրավահավասար են և միանալիան յեղայրական ընտանիքով ապրում են Խորհրդային Հանրապետությունների Միության մեջ:

Ընկերներ, խորհրդային լշխանության գոյության քսան տարվա ընթացքում մեր յերկերը աղքատ ու խղճուկ, անկուլտուրական ու հետամնաց յերկրից դարձել և հզոր սոցիալիստական տերություն։ Սոցիալիզմի տառացիունը բոլոր ասպարեզներում մեր ունեցած հաղթանակներն ու հաջողություններն այժմ արդեն ամենքն են ընդունում, և նույնիսկ մեր դաստիարակյան թշնամիները, ճիշտ և, ատամները կրծտացնելով, բայց ստիպված են խոստովանել այդ։

Բայց մեր այդ հաջողությունները Լենինի—Ստալինի կուսակցության հսկայական աշխատանքի ու կամքի, բանվոր դաստիարակյան, կոլտնտեսական գյուղացիության և բոլոր աշխատավորների հսկայական ուժի արդյունքն է։ Սա մեծ Ստալինի կուսակցությանն ու ամբողջ ժողովրդին չգերազանցված կերպով զեկավարելու արդյունքն է։ (Բուռն ծափահարություններ)։

Հիշեցե՛ք, ընկերներ, թե ինչ դեր խաղաց Լենինի—Ստալինի կուսակցությունը մեր խորհրդային պատմության ամբողջ ընթացքում։ Քաղաքացիական կոխիների և ոտարերկրյա՝ ինտերվենցիայի տարիներին, վիլուզման ու սովոր ժամանակ Լենինի—Ստալինի կուսակցությունը պայքարի առաջին գծի վրա յերկանակամակերպում եր մասսաներին, ստեղծում եր հեղափոխության զինված ուժերը, նրանց կովի յեր տանում և հաղթանակները շահում։

Այժմ մենք հզոր Կարմիր Բանակ ունենք, բայց չե՛ վոր կարժամանակ, յերբ մեր Կարմիր Բանակը վատ եր զինված և նույնիսկ վատ կերակրված։

Յեւլ պետք եր այնպիսի հիանալի կուսակցություն ունենալ, ինչպես Լենինի—Ստալինի մեր կուսակցությունն է, վորպեսզի բանվորներին և չքալոր մասսաներին վատահարություն առաջ տանի։

Հաղթահարելու բոլոր դժվարությունները դեպի լիակատար հաղթանակ։

Քաղաքացիական կովի կրակի մեջ մեր կուսակցությունը վոչ միայն Կարմիր Բանակ եր ստեղծում, այլ և միաժամանակ սոցիալիստական պետության շինարար կադրեր եր կոփում։

Այն ժամանակ բանվոր դասակարգի կուսակցության առջև հսկայական խնդիր եր դրված—սկսած գործը հասցնել մինչև վերջը, ջարդել սոցիալիստական հեղափոխության բոլոր թշնամիներին և, կազմակերպելով բանվոր դասակարգին և նրա միջոցով բոլոր աշխատավորներին, կառուցել անդասակարգ սոցիալիստական պետություն։

Բայց վորպեսզի այդ իրականացվեր, ամենից առաջ պետք եր ապահովել միասնությունն ու միաձուլությունը հենց կուսակցության մեջ։

Դուք շատ լավ գիտեք, վոր մեր կուսակցությունը,—գա կենդանի, շարունակ գործող, հզոր որդանիզմ և դուք գիտեք նույնպես, վոր նրա հակառակորդներն ու թշնամիները շատ անգամ են փորձել մեր կուսակցությունը թուլացնել ներսից, ջարդել, վոչնչացնել։

Լենինի և Ստալինի մեծագույն ծառայությունն այն ե, վոր նրանք, իրեւ պրոլետարական հեղափոխության խսկական սորտատեղներ, անդուլ հետեւում եյին, վորպեսզի մեր կուսակցությունը լինի միասնական, համախմբված և պայքարող մասսաների առջևից զնալու ընդունակ։ Կուսակցությունը շատ անդամ ե Լենինի և Ստալինի ղեկավարությամբ մաքրել եր շարքերը լալիանալվացողներից ու թերահավատներից, մարդկանցից, վորոնք կորցրել են իրենց հավատը՝ հեղափոխության գործի նկատմամբ, և ուղղակի գալաճաններից ու մատնիչներից։

Խորհրդային Միության բանվոր դասակարգն ու աշխատավորությունը, Լենինի—Ստալինի կուսակցության ղեկավարությամբ, մեծագույն հաղթանակներ ձեռք բերին — նրանք ունեն իրենց սոցիալիստական պետությունը։ Բայց մեր նախատեսակը կոմունիզմն է։ Մեզ բոլորիս դեռ հսկայական, լարված աշխատանք և սպասում։ Մեր շարքերը, առաջավոր ջոկատների շարքերը պետք ե լինեն ամուր, կոմունիզմի գործին հավատարիմ։ Պայքարողների մեջ, մեր սքանչելի կուսակցության շարքերում չկա և չի կարող տեղ լինել դավաճանների ու մատնիչների համար։ Մենք անխնառ պայքար ենք սկսել դավաճանների և լրտեսների

գեմ, վորոնց ուղարկում են մեզ մոտ և պատրաստում են մեզ մոտ տրոցկիներն ու ոտարերկրյա հետախուզությունները, ու չենք դադարեցնի այդ պայքարը, մինչեւ լրիվ և առանց մնացորդի չվոչնչացնենք ժողովուրդների բոլոր թշնամիներին, սոցիալիզմի բոլոր թշնամիներին:

Դուք, Բելոռուսիայի մայրաքաղաքի աշխատավորներդ, դիտեք, թե ինչքան շատ չարիք, ինչքան շատ գարշելություն արին գալաճաններն ու լրտեսներն այստեղ, ձեզ մոտ, բելոռուսական հողի վրա: Դուք դիտեք, թե ինչպիսի մեթոդներով եյն կատարում իրենց քայլայիշ գործն այդ բոլոր պարոնները: Բայց նրանց չաջողվեց բելոռուսական կոլտնտեսականներին և բանվորներին գրգռել մեր կուսակցության և կառավարության դեմ, այնինչ նրանք համառությամբ և ստորոտվյան բոլոր միջոցներով այդ եյն ցանկանում: Նրանք մերկացվեցին և արժանի հասուցումն ստացան:

Թո՛ղ գիտենան և լավ հիշեն, վոր վորդի նման կճիշեն բոլոր նրանք, ում խելքին փչի կանգնել միլիոնավոր մարտիկների հանուն նոր կյանքի հաղթական յերթի ճանապարհի վրա:

Վո՛չ մի խղճահարություն, վո՛չ մի գութ թշնամու նկատմամբ:

Ընկերնե՛ր, մենք մեր քսան տարվա պատմության ընթացքում հսկայական հաջողություններ ունենք: Մենք ունենք հիանալի բանակ, սոցիալիստական հիանալի տնտեսություն,—հրաշալի Փարբիկաներ ու գործարաններ, բոլշևիկյան սքանչելի կոլտնտեսություններ: Մենք հսկայական նվաճումներ ունենք կուտուրայի բնագավառում, մենք արդեն կառուցել ենք կոմունիզմի առաջին ստադիան—սոցիալիզմի, բայց մեր նպատակը կոմունիզմն է: Այդ վերջնական նպատակին հասնելու համար մենք դեռ պետք ե հիմնավորապես աշխատենք: («Ուռա» բացական-չուրյուններ, յերկարաժև ծափահարություններ):

Մենք բոլոր ծայրերից ըրջապատճած ենք կապիտալիստական պետություններով: Կապիտալիզմը մեր սոցիալիստական շինարարությանը թշնամի յէ: Ֆաշիզմը չի գալարում Խորհրդային Միության հասցեյին սպառնալիքներ ուղարկել: Մենք ձեզ հետ միասին պարտավոր ենք պատրաստ պահել մեր Բանվորա-Գյուղացիական կարմիր Բանակը, վորն ընդունակ է պաշտպանել մեր մեծ հայրենիքը և նրա սոցիալիստական նվաճումները: Մեր Բանվորա-Գյուղացիական կարմիր Բանակը, ինչպես և ամբողջ

ժողովուրդը, պատրաստ ե պաշտպան կանգնել մեր հայրենիքին (բուռն ծափահարություններ): Բայց իր հայրենիքին պաշտպան կանգնելու պատրաստ լինելը քիչ է: Պետք է, վոր մեր սոցիալիստական շինարարությունը, մեր գործարաններն ու ֆարբիկաները, մեր խորհանություններն ու կոլտնտեսություններն այնպիսի բարձրության հասցվեն, վորը թույլ տա մեզ վոչ միայն հաջող կերպով հետ մղել թշնամուն, այլ և ապահովել մեր կյանքի նորմալ ընթացքը:

Դասակարգային թշնամին մեզ հանդիսում չի թողնի: Յեթե մենք ոգտվում ենք խեղաղության բարիքներից, ապա միայն նրա համար, վոր մենք հիանալի զինված ուժեր և լավ սոցիալիստական տնտեսություն ունենք: Գործադրենք բոլոր ուժերը, վորպեսզի մեր հետազարդարությունը լինի հզոր և ամուս, վորպեսզի մեր բազմաթիվ թշնամիները, նախքան կվորոշեն մեր հայրենիքի վրա հարձակվել, յերկար ու լավ մտածեն, իսկ յեթե հարձակվեն, ապա վորպեսզի հենց տեղուստեղն իսկույն զղան:

Ընկերնե՛ր, ԽՍՀ Միության Գերազույն Խորհրդի ընտրությունները—զա Խորհրդային Միության—բոլոր աշխատավորների հայրենիքի միասնության ու հզորության լավագույն ցուցանիշն է:

Խորհրդային Բելոռուսիան իրենից սոցիալիզմի Փորպուտն է ներկայացնում: Նա կանոնած է յերկու աշխատհների սահմանադում—Արեմուտաքի նեխլող կապիտալիզմի և մեր Խորհրդային յերկրի վիթխարիորեն աճող սոցիալիզմի: Այսպիսով Խորհրդային Բելոռուսիայի աշխատավորությանը հասուկ խնդիր է վիճակված—մշտական պահակ լինել խորհրդային գարագաների մոտ, հատուկ աշալլըությամբ հետեւ այն բանին, վորպեսզի թշնամին ներս չողոսկի խորհրդային տունը, և հարկավոր բոպեյին պատրաստ լինել, մեր Կարմիր Բանակի հետ միասին, արժանիորեն հանդիպել թշնամուն իր սահմանների մոտ:

Դեկտեմբերի 12-ին դուք կըլիերկեք իմ թեկնածության ողափին Գերազույն Խորհրդի համար: Հետևապես մեր կուսակցության, Լենինի—Ստալինի կուսակցության ոգտին, մեր բոլշևիկյան գործի ոգտին, սոցիալիզմի գործի ոգտին, բոլոր աշխատավորների գործի ոգտին, ձեզ և ձեզ յերեխաների գործի ոգտին:

Խոստանում եմ, Ընկերնե՛ր, ձեզ արժանավոր ներկայացու-

ցեչը լինել և կատարելապես արդարացնել ձեր վստահությունն ու հույսերը: (Բուռն ծափահարություններ):

Կեցցե՛ մեր մեծ, յերջանիկ խորհրդային հայրենիքը:

Կեցցե՛ մեր մեծ, խորհրդային ժողովուրդը:

Կեցցե՛ն փառապանծ թելուռուսիայի աշխատավորները:

Կեցցե՛ լենինի—Ստալինի մեր մեծ կուսակցությունը:

Կեցցե՛ աշխատավորների մեծ կազմակերպիչ, Խորհրդային մեծ պետությունն ստեղծող, կոմունիզմը կառուցող մեծ Ստալինը: (Բազմակի «ուռա»-ներ, յերկարատև ծափահարություններ: «Դնտերնացիոնալ»):

ՃԱՐ ՄԻՒՍԿԻ ԿԱՅԱԶՈՐԻ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ
ՅԵՎ ՄԻՒՍԿԻ ՇՐՋԱՆԻ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ
ՄԻՏԻՆԳՈՒՄ
1937 թվի դեկտեմբերի 8-ին

Ընկե՛ր կոլտնտեսականներ ու կոլտնտեսուհիներ, մարտիկներ, համամատարներ և քաղաշխատողներ, նրանց կանայք, մայրեր և քույրեր, Մինսկի ընտրական ըրջանի ընկե՛ր ընտրողներ, վողջուներով ձեզ, իմ ամենախորին չորհակալությունն եմ քերում այն վստահության համար, վոր դուք ցույց տվիք ինձ—նկատի ունենալով իբրև ձեր թեկնածուն—Գերազույն Խորհրդի պատրամավորության համար:

Մի ամիս առաջ Խորհրդային Միությունը տոնեց իր պատմության քամանայա տարելարձը: Եերեք որ առաջ խորհրդային ժողովուրդը նշեց Ստալինյան Սահմանադրության տարեղարձը: Չորս որ հետո մենք բոլորս, Խորհուրդների մարդիկ, մի մարդու նման, կդանանք ընտրական քվեատուիկերի մոտ և տոնական տրամադրությամբ կընտրենք մեր Գերազույն Խորհուրդը:

Հեռվից նայողին կարող ե թվալ, վոր մենք մեծ ուշադրություն և շատ ժամանակ ենք նվիրում տոներին: Իսկապես այդ բոլորն այլ կերպ ե: Մենք մեր տոներն ել մեծ սոցիալիստական գործ ենք համարում:

Ի՞նչ բան է Խորհրդային Միության 20-րդ տարեղարձը: Սա

մեր յերկրի աշխատավորների մեծ հաղթանակների հանրագումարն ե: Սա մեր հաղթանակների պայքարի պատմական ճանապարհի ուղղենիչն ե: Սա լենինի—Ստալինի մեր կուսակցության իդեալների հաղթանակի լսկական տոնն ե:

Ի՞նչ բան է գեկտեմբերի 5-ի տոնը: Սա խոշորագույն պատմական նշանակություն ունեցող տարեթիվ ե: Խորհրդային յերկերը նշեց իր իսկական դեմոկրատական, իրոք սոցիալիստական Սահմանադրության առաջին տարեղարձը:

Արդեն մի տարի յե, վոր Խորհուրդների ժողովուրդներն ապրում են ըստ Ստալինյան Սահմանադրության: Չորս որ հետո մենք Գերազույն Խորհուրդ կընտրենք այդ Սահմանադրության հիման վրա:

Մեր յերկիրը, այլ մասին կասկած չկա, լենինի—Ստալինի կուսակցության փորձկած զեկալարությամբ, մեծ Ստալինի հանճարեղ առաջնորդությամբ ել ավելի արագ քայլերով առաջ կզնա, ել ավելի վստահ առաջ կզնա դեպի սոցիալիզմի նորանոր հաղթանակները: Խորհրդային ժողովուրդը նշելով իր յերեկելի պատմության կարեղաբույն դեպքերը, իրավամբ դրանք իր տոներն ե անվանում: Այո՛, սրանք մեր տոներն են, մենք ինքներս ենք ստեղծել դրանք, մենք իրավունք ունենք հպարտանալու դրանցով:

Ընկերներ, Ստալինյան Սահմանադրությունը—սա խոշորագույն պատմական նշանակություն ունեցող վաստաթուղթ ե—վոչ միայն մեզ համար, դա խոշորագույն նշանակություն ե ներկայացնում ամբողջ աշխատակի միլիոնավոր աշխատավորության համար: Ստալինյան Սահմանադրությունը բոլոր աշխատավորների, ընչազուրկների ու ճնշվածների համար ուղեցույց աստղ, փառու կլինի նրանց պայքարում՝ հանուն ապրելու իրավունքի, հանուն իրենց աղատադրման:

Մենք մեր Սահմանադրությունը դիտում ենք իբրև մի փաստաթուղթ, վորով մենք զեկալարվում ենք, վորի հիման վրա իրենց կյանքն են կառուցում Խորհրդային Միության միլիոնավոր աշխատավորները:

Մեր Ստալինյան Սահմանադրությունը, վոր ամբապնդեց, վերջնականապես որինականացրեց սոցիալիզմի նվաճումները, իր մեջ այնպիսի աչքի ընկնող հոգվածներ ե պարունակում, վորոնք իսկապես կարող են զգալ, ըստոնել միայն կապիտալիստական յերկների աշխատավորները: Վերցնենք թեկուզ այնպիսի հարց,

ինչպես աշխատանքի իրավունքի ապահովումն ԽՍՀՄ բոլոր քաղաքացիների համար : Խորհրդային մարդու հոգած սա միայն հաստատումն է այն բանի, ինչ դոյությունը ունի : Այս իրավունքը կենցաղի մեջ է մտել : Մեր յերկիրը գործազրկություն չդիտե : Մեղանում բանվորական ձեռքի պահանջություն կտ : Բայց դրա փոխարեն մեր Սահմանադրության այս պարագանի խոչուագույն սոցիալիստական խորությունն ինչպիսի՞ սուր կերպով են զգում կապիտալիստական բոլոր յերկրների միլիոնավոր ու միլիոնավոր գործազրուելները :

Կամ մեր Սահմանադրության մի ուրիշ, նույնքան նշանավոր կետը, —ինչպես կնոջը հավասար իրավունքներ տալը—աղամարդուն հավասար լինելը տնտեսական, կուլտուրական և պետական կյանքի բոլոր բնագավառներում : Խորհրդային Միության մեջ կինն արդեն լվակատար կերպով ուղարկում է այդ իրավունքից, և նրան արդեն վայրենի բան է թվում, թե այդ ինչպիս ինքը, մի մարդ, կարող է սահմանափակված լինել իրավունքներով, լինել կցորդ, ցածր կարգի մարդ : Դա իրոք վոր վայրենի բան է : Բայց այդ վայրենությունը գոյություն ունի կապիտալիստական ամբողջ աշխարհում : Կապիտալիստական յերկրների կինը, հատկապես աշխատանքի կինն, իր ամբողջ սրությամբ կղզա Ստալինյան Սահմանադրության ուժն ու նշանակությունը, վոր առհավետ ամբաղնում է խորհրդային կնոջ իրավահամարությունը :

Կամ վերջապես, ԽՍՀՄ քաղաքացիների իրավահամարությունը անկախ նրանց ազգությունից և ցեղից, վոր ամբաղընդում է մեր Սահմանադրությունը—մի՛թե սա մարդկության մեծագույն հաղթանակը չե : Յեվ մի՛թե այս որենքը խորհրդային ժողովրդի կենցաղը չի դարձել արդեն, այժմ այդ մասին մի՛թե մենք մտածում ենք : Վո՞չ, սոցիալիզմի այդ մեծ բարիքներով մենք ողարկում ենք ճշշտ այնպես սովորական կերպով, ինչպես ողարկում ենք արևի լույսով և ողով : Բայց մեր Սահմանադրության այդ կետը հաստատուն կերպով կհիշեն բոլոր մնշվածները, կապիտալիստական յերկրների վոչ-իրավահամարաց ժողովուրդները, բոլոր նրանք, ում սորկացնողներն սոսոր ցեղի մարդիկ են համարում :

Այս՝ այժմ ձեզնից շատերի, հատկապես յերիտասարդ մարդկանց համար, վորոնք անել են խորհրդային իրականության մեջ, դժվար է սլատել աշխատանքի մոտ:

Արարութակում է իր մեջ Ստալինյան Սահմանադրությունը, վորն անհարիստ որենք է դարձել :

Դուք այդ ամենից ողարկում եք, գրանով ապրում եք, ուրիշ, իրավազուրկ, ծանր ու դառն կյանքի մասին բարեբախտաբար դուք չեք ել իմացել . բայց ա՛յ, մենք, ծերունիներս, հիշում ենք անիծյալ անցյալը . մենք այն շատ լավ գիտենք, և յերեմն հիմա ել, յեր յերազ ես տեսնում, արթնանում ես սառը քրտինքը ճակատդ պատաժ :

Յար, կալվածատեր, ուրյադնիկ, տերտեր, կուլակ, կապիտալիստ, ժանդարմ—սրանք յերիտասարդ մարդկանց համար այնքան ել հեշտ պատկերացնելու կատեղորիքներ չեն :

Մեր միլիոնավոր յերիտասարդության համար դրանք վերացական հասկացողություններ են : Խորհրդային Միության ծեր մարդկանց համար դրանք միանդամային իրական, ճիշտ ե, անցյալ, բայց սոսկալի, մզձավանջային են : Ընկերնե՛ր, յեր կարդում և խորն ըմբռնում և Ստալինյան Սահմանադրության խորքերն այն մասին, վոր Խորհրդային Միության աշխատավորներին ապահովում է աշխատանքի իրավունք, յեր խոր մտածում ես այս վոսկե բառերի բովանդակության մասին,—մի տեսակ հոգիդ ուրախանում և թեթև ես զգում քեզ, զգում ես, թե ինչ մեծ խոնդիր է վճռել կենին—Ստալինի կուսակցությունը, թե սոցիալիզմն արդեն ինչպիսի բարձունքներ ե նվաճել : Յերբեք դորձագուրկ չլինել, չմտածել վարլաւ որվա մասին, չլողալ, վոր կործանում կամ նրա գործակատարը, ուզած ակնթարթում կարությունը, մի արդար համար է, վոր սոցիալիզմն արդեն իրականություն է, վոր դուք դո՞ւմ եք, ընկերնե՛ր, թե ի՞նչ կնշանակի սա:

Այդ նշանակում ե, վոր սոցիալիզմն արդեն իրականություն է, վոր դուք՝ մեզ փոխարինողներդ, մեր յերիտասարդությունն արդեն անել եք սոցիալիզմի ժամանակ և ձեզ համար դժվար է ըմբռնել աշխատավոր մարդու այն ամբողջ սոսկումը, վոր իր աշխատանքը մի քանի դրոշի վաճառելով, յերբեք վստահ չե վաղ վա որվա համար :

Նայցե՛ք, թե ինչ է կատարվում այստեղ, Արևմուտքում, կապիտալիստների աշխարհում . գործազրկություն—բանվոր գուսակարդի մշտական ուղեկիցը, և այն ամենն, ինչ վոր կապիտած ե նրա հետ՝ սովլ, հիվանդություններ և այն : Ֆարբիկանների ու գործարանների գարպանություններ և այն : Ֆարբիկանների ամբոխները աշխատանքի յեն սովապանների մոտ բանվորների ամբոխները աշխատանքի յեն սովա-

սում, ինչպես յերկնալին մանանայի. նրանք կառչում են ամենա-
փոքր հարավորության՝ իրենց ուժը կապիտալիստին վաճա-
ռելու:

Մենք բոլորս հիշում ենք, թե ինչ բան եր կապիտալիզմը
վերջին հինգ-վեց տարվա ընթացքում: Մեծադույն ճգնաժամը,
վոր տառացիորեն բռնել եր կապիտալիզմի բոլոր յերկրները,
յերկար ժամանակ պահում եր նրանց իր յերկաթե դրկում: Հատ-
կապիտ այդ տարիներին գործազրկությունը, սովը, աղքատու-
թյունը, ինքնառպանությունները բանվորների մեջ բարձր տոկո-
սի հասան:

Կապիտալիստական աշխարհի բանվոր դասակարգը քարշ եր
տալիս իր ծանր ու հյուծող կյանքը :

Այս յերկու տարի սրանից առաջ կապիտալիզմը կարծես
թե սկսեց դուրս գալ այդ սոսկալի ճգնաժամից, գործազրկու-
թյունը մի քիչ ալակասեց, բայց միայն մի քիչ պակասեց, և վոչ
թե վերացավ: Բայց առա նորից վերահաս տնտեսական ճգնաժա-
մի ահեղ ազդանշաններ յերկացին Ամերիկայում և, հետեւակես,
պետք ե սպասել, վոր նա կտարածվի և մյուս կապիտալիստական
յերկրներում: Իսկ դա, բացի ուրիշ շատ բաներից, ամենից առաջ
նշանակում և գործազրկության վիթխարի ավելացում, քաղցած
կանանց և յերեխանների արցունքների նոր գետեր, նոր ու նոր
ծանր թշվառություններ բանվոր դասակարգի համար: Այդպիսի
վոչ մի բան, դրա նման վոչ մի բան մեր աշխարհում, հաղթա-
նակած սոցիալիզմի աշխարհում չկա' և չի կարող լինել: Առո-
հըրդային Միության քաղաքի և գյուղի աշխատավորները, բո-
ւորն, ինչպես մի մարդ, լինի կերպով զբաղված են աշխատան-
քով, նրանք իրենց նոր պայծառ կյանքն են իրառուցում: Նրանք
իրենց սոցիալիստական պետությունն են կառուցում: Մենք ա-
զատ ենք ճգնաժամերի, գործազրկության սարսավճներից նրա
համար, վոր Լենինի-Ստալինի մեծ կուսակցության զեկալի-
քությամբ մենք հաղթեցինք կապիտալիզմին մեր յերկրում և
բոլշևիզմ կուսակցության նույն զեկալիքությամբ հաստաե-
ցինք և զարգացնում ենք սոցիալիզմը մեր յերկրում: (Բուռն ծա-
փահարություններ):

Առոհուրդների յերկիրը միակ պետությունն և աշխարհում,
ուր բոլոր քաղաքացիները, վորտեղ ել աշխատելիս լինեն նրանք,
հասկանալի յե, բացի ժողովրդի թշնամիներից, զգում են աշխա-
տանքի ուրախությունը, ստեղծագործական խնդությունը: Ինչ-

քա՞ն Փաբրիկաներ ու գործարաններ, գոլոցներ ու ակումբներ,
տներ ու ամեն տեսակ ուրիշ չքնաղ ու հիմաքանչ ձեռնարկու-
թյուններ են ստեղծված մեր ժամանակ: Ինչպես վիթխարիորեն
ծավալվեց մեր սոցիալիստական ինդուստրիան, ամենաբարձրմաղան
գործածության համար ինչպիսի՛ հիմանալի մեքենաներ են ար-
տադրում մեր գործարանները: Մենք ամբողջովին սեփական մի-
ջոցներով ենք մեր փառագանձ Բանվորա-Գյուղացիական
կարմիր Բանակը: Ի՞նչ հսկայական հաջողությունների հասավ
Խորհրդային գիտությունը դիտելիքների բոլոր բնադրավառնե-
րում: Ի՞նչ հսկայական քայլեր արինք մենք կուլտուրայի բնա-
գավառում, ինչպես ամենց, ինչպես փոխվեց խորհրդային մար-
դը: Սոցիալիստական հողագործության մեծագույն հաջողու-
թյուններն ուղղակի խուճապի յեն մատնում մեր թշնամիներին:

Այս տարվա բերքի 7 միլիարդ փութ հացը—առ այնպիսի՝
փաստ ե, վոր վոչ թե ասում, այլ ազգարարում և ամբողջ աշ-
խարհին մեր մեծ ու փառավոր հաղթությունների մասին, կոլ-
տնտեսական, սոցիալիստական հողագործության հսկայական
հաջողությունների մասին: Փոխվել, այլ մարդ և դարձել կոլ-
տնտեսական դյուղացին: Այժմ արզեն կարիք չկա գյուղացիու-
թյանն ապացուցել կոլեկտիվ տնտեսության առավելություններն
անհատականից, դա անցած շրջան ե: Այժմ դյուղացիությունը,
նրա ճնշող մեծամասնությունն իր անձնական, արդեն մեծ փոր-
ձուի հիմանալի կերպով ատուլել և կոլտնտեսական սիստեմը և ա-
մուր կանգնած ե նրա կողմը: Կոլտնտեսականները շատ լավ գի-
տեն, վոր կոլտնտեսությունը—դա մի շարժում և զեպի առաջ,
զեպի ավելի լավ, ունեոր, լուսավոր, կուլտուրական կյանքը:
Նրանք շատ լավ են ըմբռնում, վոր միայն կոլեկտիվ աշխատան-
քով, բարդ ու զանազանակերպ մեքենաների ողնությամբ նրանք
կստիպեն հողին ավելի առատաձեռն լինել, միշտ և շատ արտա-
դրել, վոր միայն այդպիսի ճանապարհով կարելի յե անընդհատ
առաջ շարժվել զեպի նոր ու նոր հաջողություններ:

Ընկերներ: Մեծ Ստալինը մեզ շատ անդամ և նախագործու-
թյունը այն մասին, վոր մենք ամեն կողմից շրջապատված ենք
կապիտալիստական յերկրներով, ուստի և պետք ե պետք զդոն
լինենք: Սա պետք է հիշել և յերբեք չըուռանալ: Մեր յերկիրն
այժմ ել, ինչպես և առաջ, կանցնած ե իբրև խաղաղության
պահապան, բայց մենք ուրիշներին յերաշխատորել չենք կարող:
Դուք դիտեք, թե այժմ ինչպիսի հեշտությամբ են սկսվում պա-

տերազմները և ինչպես ծանր են վերջանում նրանց համար, ով թույլ է, ով ժամանակին չի նախապարասատվել, ինքնապաշտպանության միջոցներ ձեռք չի առել: Այդոք չա՞տ ժամանակ է անցել այն որից, յերբ աշխարհում գոյություն ուներ մի ինքնուրույն, նույնիսկ թագավոր ունեցող յերկիր, վոր կոչվում էր Հարեւստան, իսկ ո՞ւր է նա հիմա: Նա իբրև անկախ պետություն արդեն չկա, նա նվաճված, վոչնչացված է: Իսկ ի՞նչ է կատարվում իսպանիայում. Փաշխտական գեներալական հասարակ խոռոչությունն ընդդեմ հանրապետական որինական կառավարության բավականաշատ առիթ էր, վոր Փաշխտական ադրեսիլ տերությունների մի ամբողջ խումբ, այսպես կոչված մեծ տերությունների թողարկությամբ, խառնվեր իսպանական ժողովրդի ներքին դործերին—փոխադրելով այնտեղ մեծ քանակությամբ զինք և ամբողջ կանոնավոր կորպուսներ:

Ավելի լավ գործեր չեն կատարվում Հեռավոր Արևելքում: Բաղմամիլիոն չին ժողովուրդը հարձակման յերթարկվեց ծավոնայիշի կողմից և այժմ արնաքամ և լինում, պաշտպանելով իր յերկիրը և անկախությունը: Փաշխտական յերկրների ուղղմական ազգական իրեն զավել չդիտե: Այժմ դժվար է ասել, թե թույլ յերկրներից վո՞րն է հերթի դրված, դեպի վո՞ր յերկիրը պատերազմի ոճը մեկնելու յեր խայլոցը:

Բայց մենք բոլորս, բանվորներ և կոլտնտեսականներ, խորհրդագյին ինսելվունցիա և կարմիր Բանակ, պետք է պատրաստ լինենք, ականջներս սրած պահենք, մանալանդ վոր Փաշխտական բանակից շատ ավելի կրակու զոչազները առանց վորեւ յերկմտության մեզ են մասնացուց անում, իսկ ուրիշներն ուղղակի պարծենալով սպասում են մեր դեմ պատերազմ սկսել: Մենք զիտենք, վոր առայժմ սա պառուտախոսություն և լիտիական արարք է չափը կորցրած խեղկատակների կողմից: Բայց մենք չգիտենք, թե վո՞ր խելոքները վո՞ր որերն են պատերազմ սկսում: Միայն մի բան է հայտնի, վոր և Հարեւստանում, և՛ Իսպանիայում, և՛ Զինաստանի բանարձակ դաշտերում պատերազմը տարվում է ամենաժամանակակից միջոցներով և ամենագագան մեթոդներով: Միշտ և ամեն բանի պատրաստ լինել—ահա՛ մեր պարտքը, ահա՛ մեր ինդիրը, ահա՛ ինչու յե անհրաժեշտ բոլեկիորեն և՛ շատ, և՛ լավ աշխատել:

Ընկերնե՛ր, մեր Բանվորա-Գյուղացիական կարմիր Բանակը մեր յերկիր աշխատավորների մարմինն ու արյունը միշտ

ուաղմական պատրաստության մեջ կլինի: Սահմանից այն կողմից թշնամիները զիտեն, վոր մեր Կարմիր Բանակն այժմ ել խօսապես կազմակերպված է և վատ չի վարժեցրած, սարքավորված և զինված: Թշնամիները զիտեն, վոր այժմ մեղ մերկ ձեռքերով չեն հաղթի: Նրանք զիտեն, վոր նրա համար, վորպեսզի մեզ զրկեն մեր մեծ հաղթանակներից, մեր նվաճումներից, —նրանք ստիպված են յերկար ու համառ պայքար մղել: Նրանք զիտեն, վոր մեր բանվոր դասակարգը, մեր կոլտնտեսական գյուղացիությունը, իրենց բանակի հետ միասին, այժմ մի անխորսակելի ուժ են, վորին կհանդիպեն նրանք, և վորին զարնվելով, կարող են վշրել իրենց ճակատը: Այս ամենը մեր վոստիները շատ լավ զիտեն, այդ պատճառով ել զեռ պատրաստությամբ են:

Թո՛ղ նրանք պատրաստվեն, մենք ել ենք պատրաստվում, թեև մենք միշտ պատրաստ ենք: (Բուռն ծափահարություններ): Համենայն դեպս, ընկերնե՛ր, և՛լ ավելի համառ աշխատանք կտանենք, քան յերբենից, վորպեսզի մեր զինված ուժերն այն կոչման բարձրության վրա լինեն, վոր պատմությունը կանխորոշել է նրանց համար: Մենք ավելի կաշխատենք, վորպեսզի մեր յերկրի սոցիալիտատական անտեսությունը, մեր Փաբրիկաներն ու զործարանները, մեր խորհուտեսություններն ու կոլտնտեսություններն ել ավելի կազմակերպված, և՛լ ավելի հզոր լինեն:

Ընկերնե՛ր, մեր հաղթանակներն ու հաջողությունները լենինի—Ստալինի մեր մեծ կուսակցության իմաստուն զեկավարության արդյունքն են (ծափահարություններ): Մեր կուսակցությունը բանվոր դասակարգին կազմակերպել և սոցիալիտատական հաղթանակների համար: Մեր կուսակցությունը բաղմամիլիոն գյուղացիական մասաներին կազմակերպել և կոլտնտեսություններում, և կուսակցության զեկավարությամբ կոլտնտեսական կարգերը հակայական հաջողությունների յեն հասել (ծափահարություններ): Լենինի—Ստալինի մեր կուսակցությունը, անձամբ մեծ Ստալինը, ստեղծել և միշտ ամբացնում են Բանվորագյուղացիական կարմիր Բանակի հզորությունը: Լենինի—Ստալինի կուսակցությունը կազմակերպում և դեպի հաղթանակներ և տանում Խորհրդային Ստության ժողովուրդներին: (Բուռն ծափահարություններ):

Միաժամանակ մեր կուսակցությունը կատարի պայքար և մղել և մղում և ժողովրդի բոլոր թշնամիների դեմ, նա բնաջինց

և անում վնասաբարների, մատնիչների, հայլունիքին աված յերդ—
ման դավաճանների ստոր բները:

Խորհրդային Միության շրջապատռումը կապիտալիստական
յերկըներով իրեն զգացնել ե տալիս նրանով, վոր այդ յերկների
հետախուզության գործակալաները ամեն ինչ անում են, վորպեսդի
մեր պետության խորքերը թափանցեն: Սա վոչ մի բողե մենք
հանդուրժել չենք կարող: Բոլցեկլյան գործնական զգոնությունը
պետք ե շատ ավելի անդամ բարձրացնել: Թշնամին պետք ե ար-
մատախիլ արվի առանց վորեւ մնացորդի, և մենք նրանց արմա-
տախիլ կանենք: Մեր շարքերում չկա և չի կարող տեղ լինել վո՛չ
մի մատնիչի ու լրտեսի, վո՛չ մի դավաճանի և ժողովրդի այլ
թշնամու համար: Մեր ամբողջ մեծ ժողովուրդը, իր Կարմիր
Բանակի հետ միասին, սոցիալիզմի մի հզոր բանակ ե, վորին
գլխավորում ե Լենինի—Ստալինի մեր փառապանծ բոլցեկլյան
կուսակցությունը: Մեր այս հզոր սոցիալիստական բանակի դեմ
կանգնած ե ամբողջ կապիտալիստական աշխարհը: Մենք չենք
կարող և իրավունք ել չունենք մեր շարքերը թողնելու թշնամու
գործակալներին: Մենք կայինք, կանք և միշտ կլինենք կոմու-
նիզմի մեծ դորժի սոցիալիստական մարտիկների ամուր, միաս-
նական մի կոլեկտիվ:

Կեցցե՞ մեր մեծ խորհրդային հզոր ժողովուրդը:

Կեցցե՞ն մեր փառապանծ մարտիկները, հրամանատարներն
ու քաղաքացիառողները:

Կեցցե՞ն փառապանծ աշխատավորները—շքանշանակիր Խոր-
հրդային բելոռուսիայի կոլտնտեսականներն ու կոլտնտեսու-
հիները, բանվորներն ու բանվորուհիները:

Կեցցե՞ բոլցեկլյան լենինյան-ստալինյան կուսակցությունը:

Կեցցե՞ մեծ Ստալինը: (Բուռն ծափահարություններ,
«ուսու» բացականչություններ: «Ինտերնացիոնալ»):



Մ. Ի. ԿԱՎԻՆԻՆ

ՀԱՅ ԱՐՏԱՍՏԱՆԱԾ ԼԵՆԻՆԳՐԱԴԻ ԿԻՐՈՎՑԱՆ

ՅԵՎԼԻՉԱՆ ՌԱՅՈՆՆԵՐԻ

ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԺՈՂՈՎՈՒՄ

1937 թ. նոյեմբերի 22-ին

Ընկերներ, իմ և Լենինգրադի իմ ընտրողների միջև յեղած
հարաբերություններն այնպիսի բնույթ են կրում, վոր դժվար ե
սովորական ճառ հորինելը: Ինձ մոտ այնպես ե ստացվում, ինչպես
այդ լինում ե այն ժամանակ, յերբ մարդ յերկա՛ր-յերկա՛ր տա-
րիներ չի հանդիպել մոտիկ, հարազատ մարդկանց հետ և յերբ
հանդիպման ժամանակ ուզում ես շատ բան ասել, բայց խոսքեր
չես կտնում: (Բուռն ովագիա):

Խորհրդային Միության քաղաքացիների և մանավանդ Խորհրդային Միության բանվորների, աշխատավոր մասսաների քաղաքական գիտակցության մեջ Լենինգրադը չառ մեծ տեղ և գրագում: Լենինգրադը Խորհրդային մեծ Միության յերկրորդ մայրաքաղաքն է: Լենինգրադը ինդուստրիալ մեծ կենտրոն է: Լենինգրադում զարգացել ե պրոլետարիատի հեղափոխական միտքը: Լենինգրադի պրոլետարիատը հեղափոխական մեծ անցյալ ունի: Յես կարող ելի կես որ թվարկել հեղափոխական Լենինգրադի հատկությունները, վորոնցից յուրաքանչյուրը հսկայական արժեք ունի:

Իսկ ինձ համար այս ամենին ավելանում ե նաև այն, վոր Լենինգրադը ինձ հարազատ քաղաք է: (Բուռն ովացիա):

Ինչի՞ համար են ինձ առաջադրել Ազգությունների Խորհրդի պատգամավորության թեկնածու, ինչի՞ն եմ յես պարտական այս պատիվը: Յես գտնում եմ, վոր գլխավորապես և հիմնականում այն բանին, վոր յես պահպանել եմ իմ մեծ Լենինգրադի պրոլետարիատի հեղափոխական գծերը: (Յերկարածու ծափահարություններ): Լենինգրադն ինձ մոտիկ է, հարազատ: Յես հշում եմ, թե ինչպես առաջ յես անեղալ կերպով յերեսում ելի նախկին Պետերբուրգում: ինչ անախորժ իրադրություն ել վոր լիներ, յերբ Պետերբուրգ ելիր գալիս, ամեն ինչ լավ եր թվում: Յեվ ահա, յեթե Լենինգրադը ինձ մոտիկ է, հարազատ ու թանդ, ապա յես ավելի մեծ հիմք ունեմ այդ ասելու կիրովյան ուայսնի մասին: (Ծափահարություններ):

Զե՞ վոր կիրովյան ուայսնում ե սկսվել իմ գիտակցական կյանքը: Կիրովյան ուայսնի բանվորների մեջ ե, վոր իմ մեջ սկսել ե սուեղծվել, ամրանալ, կոփվել բոլշևիկյան հեղափոխական աշխարհայեցողությունը: Կիրովյան գործարանի բանվորների մեջ ե, վոր իմ մեջ ծնվել, աճել ու ամրացել են կազմակերպելու, պրոլետարիատ և ագիտացիա մզելու ընդունակությունները: Կիրովյան ուայսնում, Կիրովյան ուայսնի բանվորների մեջ առաջին անդամ իմ մեջ այն հպարտ միտքն ե ծնվում, վոր պրոլետարիատը պետք ե վոչ միայն պայքարի, այլ և անպայման պետք ե հաղթի: (Յերկարածու ծափահարություններ):

Ահա թե ինչու յես ինձ չառ և չառ պարտական եմ համարում Լենինգրադի բանվորներին, Կիրովի ուայսնի բանվորներին, վորոնք ինձ ողնել են վոտք դնելու պրոլետարիատի իդալների համար պայքարելու հեղափոխական ուղին: Ահա թե ինչու իմ աչքերում, իմ գիտակցության մեջ Լենինգրադի բանվորները, Լենին-

գրագում բանվոր գասակարգը չառ ու չառ բարձր են կանոնած: Յեկ յես այժմ հսկայական գոհունակություն եմ զգում, վոր մեր աշխատանքը, բանվորների համեմատաբար մի գուգը խմբակի աշխատանքը իդուր չի անցել, վոր յես նկրկա յեմ այս ժողովին, վորտեղ կիրովյան ընտրական ոկրուգը սուածագրում ե վորպես Գերազույն Խորհրդի պատգամավոր իր բանվորուհի ընկ: Սմիրնովյան: (Ծափահարություններ): Յես այդ հսկայական նվաճում եմ համարում: Այս մեծ հաղթանակ է, ընկերներ: (Ծափահարություններ):

Մեր մեծ հաղթանակները մեզ մեծ գոհունակություն են պատճառում: Կարելի յե ասել.

—Կիրովյան տղաները անցյալում վատ չեն աշխատել և այժմ ել լավ են աշխատում: (Բուռն ծափահարություններ):

Կարելի յեր չառ բան ասել այն մասին, թե ինչ խնդիրներ են դրված Խորհրդային Միության պրոլետարիատի առաջ: Այս խնդիրները հսկայական են և դրանք այնքան ել հեշտ խնդիրներ չեն: Այդ խնդիրները գդվար կլինեն այնքան ժամանակ, քանի գեռ Խորհրդային Միությունը միակ սոցիալիստական յերկիրն ե հանդիսանում: Այդ խնդիրները գդվար կլինեն, քանի գեռ մենք գտնվում ենք կապիտալիստական պետությունների շրջապատման մեջ: Այդ խնդիրները մեզանից այժմ պահանջում են և գեռ, հավանաբար, պրոլետարիատից կպահանջեն հսկայական, լարված աշխատանք և հսկայական ստեղծագործական պրոլետարական ուժերի զարգացում:

Յես կարծում եմ, վոր մեր ամբողջ համեստությամբ հանդերձ մենք կարող ենք ասել, վոր Լենինգրադի պրոլետարները միշտ յեղել են բանվոր դասակարգի խղեալների համար մղված պայքարի առաջավոր գիրքերում: Այս գիրքերը պետք ե պահպանել: (Ծափահարություններ): Յես կարծում եմ, վոր կիրովյան ուայսնը այս գիրքերում կպայքարի: (Բուռն ովացիա):

Ընկերներ, կոմունիզմը հարստացրել, խորը բովանդակությամբ և լցրել բանվոր դասակարգի կյանքն ու պայքարը: Ահա՛, յերբ իմ մասին ասում են, այս մարդը կյանքի ծանր ուղի յե անցել, խղճով առած, այդ ինձ դուր չի գալիս: (Ծիծաղ): Յեթե մարդս յուրացրել ե կոմունիստական աշխարհայեցողություն, ապա այդ աշխարհայեցողությունը նրա կյանքը այնպիսի հարուստ բովանդակությամբ ե լցնում, վոր այդ կյանքը գդվար չի թվում, այլ հարուստ ե թվում և, վոր գլխավորն ե, ինքը զգում ես, վոր

այդ կյանքը անսահման լավ կյանք և նույնիսկ ամենադժվարին բողեներին: (Բուռն ծափահարություններ):

Իմ կյանքի ամբողջ պատմությունը, իսկ ըստ եյության նաև բանվոր դասակարգի ամբողջ պատմությունը նրա մեջ և կայանում, վոր մենք ապրել ու պայքարել ենք լենինի, Ստալինի ղեկավարությամբ: (Բուռն ծափահարություններ):

Ի՞նչ կարող եմ յես վորակես Գերագույն Խորհրդի թեկնածու խոստանալ ձեզ, իմ ընտրողներին: Յես, ընկերնե՛ր, կարծում եմ, վոր կոմունիզմի համար հաջողությամբ պայքարել, այդ նշանակում է գնալ Ստալինի հետեւց: (Բուռն ովացիա): Ահա իմ նշած ուղին, այս ուղիով յես պետք է ընթանամ: (Բուռն ծափահարություններ): Իսկ դուք քվեարկեցե՛ք այն մարդկանց ոգտին, ով անբաժան կերպով պայքարում է կոմունիզմի համար: (Բուռն ծափահարություններ): Ենոքը վառքի յեն կանգնում: Բացականչություններ՝ «Ուոա՛»: Տեղերից ձայներ. «Կեցցե՛ համամիութենական ավագ Կալինինը, ուռա՛», «Մեր պանծալի Կալինինին ուռա՛», «Մեր պատգամավոր ընկեր Կալինինին ուռա՛», «Կեցցե՛ մեծ Ստալինի զինակից ընկեր Կալինինը, ուռա՛»):

Ընկեր Կալինինը (նախագահությունից): Ընկեր Ստալինին, ժողովուրդների առաջնորդին, նրան, ով բանվոր դասակարգին կհասցնի կոմունիզմի հաղթանակին, ուռա՛: («Ուոա՛» բացականչություններ): Ծափահարություններ: Ովացիա):

ՀԱՅԻ ԱՐՏԱՍԱՆԱԾ ԼԵՆԻՆԳՐԱԴԻ ՎԻԲՈՐԳԻ ՅԵՎ. ԿԱՐՄԻՐ-
ԳԼՈՐԴԻԱԿԱՆ ՌԱՅՈՒՆԵՐԻ ԲՆՏՐՈՂՆԵՐԻ ԺՈՂՈՎՈՒՄ
1937 թ. նոյեմբերի 23-ին

Ընկերնե՛ր, յես զգում եմ մեծ ուրախություն, վոր գտնվում եմ Վիբորգի հին ռայոնի բանվորների մեջ և այդ բանվորների հետ կարծիքների փոխանակություն եմ կատարում:

Վիբորգի հին ռայոնի բանվորը, յեթե թեկուզ մի փոքր դիմելու լինենք պատմությանը, այլ այն ռայոնի բանվորն ե, վորտեղ ռեակցիայի ամենածանր ժամանակներում բոլցելիների Պետքրուրդյան կոմիտեն և մեր կուսակցության կենտրոնական կոմիտեն միշտ ուժեղ հենարան են գտել: (Յերկարանը ծափահարություններ): Այս պատմությունը լավ պատմություն է: Յես շատ կցանկանայի, վորպեսզի Վիբորգի և Կարմիր-դվար լիական ռայոնների բանվորները, վորոնք առաջ մեկ ռայոնում եյին դունը-

վում, պահպանելիքն հեղափոխական պրոլետարիատի այս փայլուն տրաղիցիաները: (Բուռն ովացիա):

Յես ապրել եմ Վիբորգի ռայոնում նախահեղափոխական ժամանակաշրջանում, այստեղ շատ եմ պատահել հիանալի ակտիվիստների, մարդկանց, վորոնք վոչ մի բոպե չելիքն տատանվի իրենց կյանքը զոհել հանուն բանվոր դասակարգի շահերի, հանուն կուսակցության շահերի: Յեկահամարժմ, յես կարծում եմ, վոր Վիբորգի և Կարմիր-դվարդիկական ռայոնները, այդ ռայոնների ակտիվը՝ հարվածայինները, ստախանովականները, խորհրդագային ինտելիգենցիան, վորը արյունակցական կապերով կապված և բանվոր դասակարգի հետ-բոլոր ուժերը կգործադրի, վորպեսզի նոր ասպարեզում շարունակի պատվով պահել իր արժանի տեղը: (Բուռն ովացիա):

Ընկերնե՛ր, մեզանում տեղի յե ունենում ընտրական կամ, ինչպես մենք ենք այն կոչում, նախընտրական կամպանիա: Այս մի յերկարատե, մեծ կամպանիա յե, վորը պահանջում է շատ զգալի, ինչպես նյութական, այնպես ել մարդկային, միջոշներ:

Բուրժուական յերկրներում ընտրական կամպանիաները անցնում են մեծ մասամբ զգալի կերպով ավելի կարճ ժամանակում, քան մեր ընտրական կամպանիան: Զե՞ վոր այն նպատակները, վոր իշխող դասակարգերն այնտեղ հետապնդում են ընտրական կամպանիաների ժամանակ, բոլորովին այլ են, քան այն, վոր իրենց առաջ դնում են մեր ընտրական կամպանիայի ժամանակ Խորհրդային Միության բանվոր դասակարգը, կոլտնտեսական Խորհրդային Միությունը, մեր կուսակցությունը, կուսակցության զեղյուղացիությունը, մեր կուսակցությունը, կուսակցության զեղյուղացիությունը: Յերկարական յերկրների իշխող դասակարգերը անց են կացնում ընտրական կամպանիան, միակ նպատակը, վոր նրանք իրենց առաջ դնում են, այդ այն է, վորպեսզի անցնեն պառլամենտ, մեծամասնություն ստանան: Բուրժուական կուսակցությունների համար նշանակություն չունի, թե ինչ տրյուկեներ կգործադրիլեն: Նրանց համար կարևոր է շահել, կարևոր է պառլամենտում մեծամասնություն ստանալ, կարևոր է ողտագործել կառավարական պոստերը հոգուտ այն խմբերի, վոր նրանց պաշտպանել են: Բուրժուական կուսակցությունները ձգուում են ընտրական կամպանիայի ժամանակ մարդկանց շշմեցնել, վորքեն կեղծ թուղթ բաց թողնել և այդ կեղծ թղթի հիման վրա մեծամասնություն շահել: Բուրժուական կուսակցություն-

64

65

ների համար միայն սրանումն է ընտրական կամպանիայի իմաստը՝ իշխող դասակարգերը մտածում են. պետք է աշխատավոր մասսաներին շնչեցնել և այդպիսով անցնել ընտրություններում։ Այլ նպատակ սրանք չունեն։

Մեր ընտրական կամպանիան շատ յերկարատե է։ Բայ եյության այդ կամպանիան սկսվել է համարյա յերկու տարի սրանից առաջ, այն մոմենտից, յերբ առաջին անգամ հոչակվեց Սահմանադրության ուրվագիծը։ Ապա հրապարակվեց Սահմանադրության նախագիծը։ Այս Սահմանադրությունը տառացիութեան միլիոնավոր մարդկանց քննության յենթարկվեց։ Այս քննարկումից հետո մշակվեց ընտրական որենք, ի դեպ առած, մի այնպիսի որենք, վոր Սահմանադրության նախագծի ամեն մի կետ մեկնաբանում եր գեմոկրատիզմի լայն զարգացման ուղղությամբ (ծափահարություններ), ժողովրդի իրավունքներն ընդլայնելու ուղղությամբ, ժողովրդի այս իրավունքներն ամրապնդելու ուղղությամբ։

Կարող ե հարց ծագել. բայց չե՞ վոր մենք վստահ ենք, վոր Խորհրդային Միության աշխատավոր մասսաները կամպանիան իշխանությունը, իշխանության դլուխ կմնան (ծափահարություններ), ապա ել ինչի՞ յե հարկավոր յերկարատե կամպանիա, վորը այդքան ջանքեր ե պահանջում, ել ինչի՞ յենք մենք ձեռնարկել այսքան բարդ ընտրական կամպանիայի։ Ընտրական կամպանիան պետք ե այնպիս անցկացվի, վորակեալի դառնա մի հսկայական դպրոց, հսկայական քաղաքական գովրոց թե՛ Խորհրդային Միության աշխատավոր մասսաների համար, թե՛ այդ աշխատավոր մասսաների միջից դուրս յեկած զեկավարների համար։ Սոցիալիզմը պահանջում է աշխատավոր մասսաների ամենամեծ կազմակերպություն։ Զկա և անցյալում, մինչև մեր սոցիալիստական հանրապետության կազմակերպվելը, աշխարհում յերբեք չի յեղել վոչ մի իշխանություն, վորը մասսաների այնպիսի կազմակերպություն պահանջեր, ինչպիս պահանջում են սոցիալիստական կարգերը։ Բայ եյության աշխատավոր մասսաների լիակատար կազմակերպությունը հենց սոցիալիզմն է։ Վորովհետեւ յեթե, վո՞ր յերկրում ուղում ես, աշխատավոր մասսաները լիովին կազմակերպված լինելին և կարողանային այս կազմակերպությունը ուղղել բանվոր դաստիարակի ողտին—կարո՞ղ եր արդյոք այդ յերկրում կապլտալիստական կառավարությունը դիմանալ բանվոր դասակարգի այդպիսի ուժի դիմաց։

Յեկ ահա, յերբ սոցիալիստական կարգերը ստուդիովեցին, ա-

ճեցին ու ամբողջան, այս կարգերն այժմ պահանջում են աշխատավորների մաքսիմալ կազմակերպություն և սրանց կոնսոլիդացիան հանուն պետական այն հիմնական նպատակների, վորոնք կանգնած են մեր յերկրի առաջ։

Ապա ընտրությունները հնարավորություն են տալիս առաջքաշել Խորհրդային Միության աշխատավոր մասսաների մեջ ծընված լավագույն մարդկանց։

Ահա այն խնդիրները, վորոնք կանգնած են կուսակցության և աշխատավոր մասսաների առաջ ընտրական կամպանիայի ժամանակ։ Այս խնդիրները բացառիկ արժեք ունեն։

Ինձնից առաջ հանդես յեկան մեր կարմիր Բանակի շարքերից յելած ընկերները։ Կարմիր Բանակը, այդ մեր բանակն է, հարազատ բանակն է և մենք այդ բանակը սիրում ենք։ Յես անձամբ կարծում եմ, վոր այդ բանակը վորպես ուղղմական ուժ աշխարհիս լավագույն բանակն է (բուռն ծափահարություններ)։ Կարմիր Բանակը կարտահայտեր իր ուժերի, արիության, ստեղծագործ ձիբերի մաքսիմումը հնարավոր ընդհարումների դեպքում։ Այդ բանակը պետք է հենցի հզոր ժողովրդի վրա, կազմակերպված ժողովրդի վրա, այդ բանակը միայն այն ժամանակ հենց իրեն ուժեղ և անհաղթելի կզզա, յերբ նա իր հետեւ կզզա աշխատավոր մասսաների հզոր կազմակերպություն։ (Բուռն ծափահարություններ)։

Ընտրական կամպանիան կազմակերպում և միլիոնավոր մասսաների այս միլիոնների ուշագրությունը ընելում է համապետական քաղաքականության կարևորագույն հարցերին։ Ընտրական կամպանիան իր ամենորյա, սովորական աշխատանքով զրադշած ամեն մի մարդու ավելի ևս բարձրացնում է։ Այդ կամպանիան ստիպում է շարքային ամեն մի մարդու, այդ մարդու ուղեղը ավելի լարված, ավելի ինտենսիվորեն աշխատել։ (Ծափահարություններ)։ Ամեն մեկը իրեն զգում է վոչ թե շարքային մարդ, այլ իրեն զգում է կարծես հեղափոխական բանակի մարտիկ, իրեն այդ մոմենտին զգում է առանձնապես ամուր կապլած Խորհրդային Մեծ Միության ամբողջ աղդաբնակության հետ։ (Բուռն ծափահարություններ)։

Դուք ինքներդ գիտեք. կազմակերպությունը մեծ բան է։ Բուլշեկինների մեր կուսակցությունը հաղթանակել է իր կազմակերպությամբ։ Հիշո՞ւմ եք անցած տարիները հենց այս Վիբորգի ուայոնում։ Մեր հոետորները յերբեմն մի քիչ ավելի թույլ եյին, քան մենցեկինների հոետորները։ Ինտելիդենցիան մեզ մոտ ընկե-

բության մեջ մի պապիրոս պատիլ անելու չափ քիչ եր^{*}: (Ծիծաղ): Ի՞նչ անել: Բայց դրա փոխարեն մենշեկլյան հռետորին տապալել, բոլոր ուժերը կենտրոնացնել և կազմակերպված ձևով խիել—սրանով մենք միշտ հաղթում ենինք, այս ասպարեզում մենք միշտ առաջ եյինք: (Ծափահարություններ): Մեր կուսակցությունը կուտակել է կազմակերպիչների շատ զգալի թիվ: Ահա և ձեր, այստեղ նստածներիդ կազմակերպարկան խելքը և ձեր կազմակերպարկան ընդունակությունները կուտակված են չնորհիլ կուսակցության: (Ծափահարություններ):

Դառնանք պաշտպանության հարցին: Յեթե վերհիշենք իմպերիալիստկան վերջին պատերազմի մասշտարները, ասա կասկածից դուրս ե, վոր ապազա պատերազմի մասշտարները ավելի մեծ կլինեն: Այդ մենք տեսնում ենք կապիտալիստական յերկրների կողմից պատերազմի պատրաստվելուց: Ի՞նչի մեջ պետք է արտահայտվի այստեղ կազմակերպությունը: Այդ կազմակերպությունը պետք է արտահայտվի նրանով, վոր գնացքները ճակատին մոտենան ժամացույցի մեխանիզմի ճշտությամբ. վորպեսզի այն արկերը, վոր ճակատը պիտի ստանա, պատրաստվեն լիովին մեթոդիկ կերպով. վորպեսզի այդ արկերը լիովին համապատասխան լինեն այն վկայականին, վորի հետ արկերը ուղարկվում են. վորպեսզի թիկոնքը դգա, հասկանա, թե տվյալ մոմենտում ի՞նչ է հարկավոր ճակատին, վորպեսզի, որինակ, անսպասելի ողային հարձակումների ժամանակ մարդիկ չչփոխվեն, վորպեսզի այսպիսի հարձակումներից մի ըոպե անց կազմակերպությունը նորից ու նորից իր իրավունքները ստանձնի. վորպեսզի դյուղատնտեսությունն ավելի պակաս թվով աշխատողներով նույնչափ ինտենսիվորեն կատարի աշխատանքը, ինչպես և առաջ. վորպեսզի արդյունաբերությունն իր աշխատունակությունը ևս մի քանի անդամ մեծացնի: Այս ամենը պարզապես Փիղիկական ուժով, զորով և նույնիսկ խանդավառությամբ ձեռք բերեն անհնարին ե: Այս ամենը կապահովվի միայն զոր սոցիալիստական կազմակերպությամբ:

Այսպիսի կազմակերպությունը յերկնքից չի ընկնում վորպես մանանա, վորպես աստվածային չնորհ: (Ծիծաղ): Վո՞չ: Այն պետք է ձեռք բերել, նրա համար պետք թ պայքարել, այն պետք է որըսարել կատարելազործել: Իրեն պետք է սովորեցնել այդ կազմակերպությանը: Պետք ե, վոր այն ժարդիկի, վորոնց ժամանակները վատահել են դեկտվարությունը, վորպեսզի այդ ժամանակները առաջարկության չափանիկ կամաց առաջարկության չափանիկ առաջարկության ներքին տարածայնություններ, վորպիսիները կան բուրժուական հասարակության ներսում:

Կարողանան պետք յեղած բոպեյին նպատակահարժար ձևով սոցիալիստական պետության համար ձեռնությունը կերպով բաշխել մասսաների:

Այս մեծ խնդիր է: Յես պետք է առեմ. այս տեսակետից ընտրական կամպանիան ողնում է մասսաների կազմակերպմանը, սովորեցնում է, թե ինչպես պետք է կազմակերպել մասսաները, մասսաներին իրենց սովորեցնում է կազմակերպության: Ընտրական կամպանիան սովորեցնում է տեսնել մեծ մասսաներ և այդ մասսաները ուղղել վորոշակի հունով: (Ծափահարություններ): Ահա, յեթե դուք, ընկերնե՛ր, սրա վրա մտածեք, դուք կտեսնեք, վոր ընտրական կամպանիան, վորին մասնակից են դարձվում միլիոնավոր, տասնյակ—միլիոնավոր մարդիկ—այդ այնպիսի մի հսկայական աշխատանք է, վորը մենք պետք է անցկացնենք իդեալականորեն:

Վոմանք հարց են տալիս. «Եհ, ինչ անենք, յես կդնամ քվերկելու, բայց չե՞ վոր միայն մեկ թեկնածու յե առանձնացված, չե՞ վոր նա միենալուն ե՝ անցնելու յե»: Այսպես մտածելը սխալ է, կողիտ սխալ:

Կապիտալիստական յերկրներում ևս ընտրությունների ժամանակ պատահում է, վոր քվեարկում են մեկ մարդու համար: Այս պատահում է սովորաբար այն հետընկած վայրերում, վորտեղ ընդամենը 50 ընտրող կա՝ աղնվականների ծառաներ և մի լորդ, վորին և «ընտրում են»: Խոկ յեթե մեզնում թեկնածուները իրենց անունները հանում են հոգուտ մեկ թեկնածուի—ապա այդ հետևանք է նրանց սոցիալական ազդակցության և նրանց քաղաքական նպատակների ընդհանրության: (Ծափահարություններ): Տասնյակ ու հարյուր—հազարավայր ընտրողներ մանրամատն քննարկումից հետո համաձայնության են յեկել, վոր մի թեկնածու լինի: Այդ հենց սոցիալիզմի նշան է, նշան է այն բանի, վոր աշխատավոր մասսաները ներքին տարածայնություններ չունեն և չեն կարող ունենալ, այնպիսի ներքին տարածայնություններ, վորպիսիները կան բուրժուական հասարակության ներսում: (Բուռն ովացիա):

Յես ձեզ ուղղակի կասեմ. յեթե մեզ մոտ ընտրողների ճշնալ մեծամասնությունը իր բյուլետենները զցի քվեատուփերը, ֆաշիստական շատ առաջնորդներ կմտածեն. «Տեսե՛ք, այստեղ վոչ միայն բանակն է ուժեղ, այլ և բանակի հետև կանգնած է ավելի ևս ահեղ ուժ»: (Բուռն ծափահարություններ):

*)—սուլլուգում և ուս են սուկորման.

Ընկերնե՛ր, յես այս մասին արդեն յերեկ եմ ասել—մեր յերկ-
րի աշխատավոր մասսաները տասնյակ տարիներ գնացել են Լենինի
հետեւից, Ստալինի հետեւից: (Բուռն ծափահարություններ): Յեզ
Լենինգրադի հեղափոխական պրոլետարիատը միշտ ընթացել է ա-
ռաջին չարքերում: (Բուռն ովացիա):

Յես կարծում եմ, ընկերնե՛ր, վոր Լենինի քաղաքի բանվորները
Լենինի—Ստալինի դրոշի տակ հարյուր տոկոսով դուրս կցան
ընտրությունների: (Յերկար չլոռող, բուռն ծափահարություններ:
«Ռուս» բացականչություններ): Մենք ամբողջ աշխարհին ցույց
կտանք, թե վորքան միասնական են աշխատավոր մասսաները
և կոմունիստական կուսակցությունը, վորը հանդիսանում է այդ
աշխատավոր մասսաների ավանդարդը: Մենք ամբողջ աշխարհին
այդ ցույց կտանք մեր քվեարկությամբ: (Ծափերի վորոտ: Բո-
ցականչություններ. «Կեցցե՛ մեծ Ստալինի զինակից ընկեր Կա-
լինինը, ուռա՛»):

ՃԱՌ՝ ԱՐՏԱՍԱՆԱԾ ԼԵՆԻՆԳՐԱԴԻ
ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՄԻՏԻՆԳՈՒՄ
1937 թ. նոյեմբերի 24-ին

Ընկերնե՛ր, վողջունում եմ Լենինգրադի բանվորներին, ինտե-
լիգենսներին և Լենինգրադ քաղաքի բոլոր քաղաքացիներին: (Բուռն ովացիա):

Իմ ճառը կարձ կլինի: Տասնութոր հետո մենք պետք են ընտ-
րենք իՍՀՄ Գերագույն Խորհուրդ: Յես կարծում եմ, վոր Լե-
նինիգրադի բանվորները, աշխատավոր ինտելիգենցիան, Լենինի
քաղաքի բոլոր քաղաքացիները ամբողջ աշխարհին ցույց կտան,
վոր Լենինգրադի աշխատավորները խորհրդային իշխանության
հավատարիմ հենարանն են:

Լենինգրադը միշտ յեղել է կոմունիստական կուսակցության
պատվարը, հենարանը: Յես չեմ կասկածում, վոր առաջիկա
ընտրությունների ժամանակ ևս Լենինգրադ քաղաքը ցույց կտա-
նի նվիրվածությունը, մերը դեպի Համամիութենական կոմու-
նիստական (բոլշևիկների) կուսակցությունը և դեպի նրա առաջ-
նորդ ընկեր Ստալինը:

Կեցցե՛ն Լենինգրադի բանվորները:

Կեցցե՛ կոմունիստական կուսակցությունը:

Կեցցե՛ այդ կուսակցության առաջնորդ ընկեր Ստալինը:
(Բուռն ովացիա):

ՃԱՌ՝ ԱՐՏԱՍԱՆԱԾ ԼԵՆԻՆԳՐԱԴԻ ՎՈԼՈԴԱՐԿՈՒ-
ՌԱՅՈՒՆԻ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՆԱԽԵՆՏՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՄ
1937 թ. նոյեմբերի 25-ին

Ընկերնե՛ր, ամենասնկեղծ, սրտադին վողջույն վոլոգարսկու-
ուայոնի բոլոր քաղաքացիներին: (Ծափահարություններ):

Ընկերնե՛ր, այս ամբիոնից չատ բան և պատմվել բերկա-
լից այն կյանքի մասին, վոր գոյություն ունի Խորհրդային
Միության մեջ: Այդ ճշշտ ե, Խորհրդային Միության մեջ կյան-
քը բերկրալից ե: Մեր յերկերը միակ յերկերն ե, ուր մարդիկ
բերկրալից են ապրում: Կյանքի այս բերկրանքը հիմնված է
վոչ միայն նյութական ու կուլտուրական այն նվաճումների
վրա, վորոնք գոյություն ունեն մեր Խորհրդային Միության մեջ
և վորոնց մասին այստեղ խոսել են: Զե՞ վոր չի կարելի ա-
սել, թե դուք այժմ ամեն ինչ ունեք—այդ միշտ չեր լինի:
Որինակ, մեղանում դեռ յերեք սենյակից բաղկացած բնակարան
չկա մարդկային ամեն մի գույգի համար—այս փաստ ե: Բայց
ինչո՞ւ այսուամենայնիվ ամեն մեկը զգում ե, վոր ինքն ապրում
և բացառիկ կերպով բերկրալից մի ժամանակում, վոր ինքն ապ-
րում ե մի յերկրում, վորը հանդիսանում է միակ սոցիալիս-
տական յերկերը աշխարհում: Ինչի՞ց ե այս բոլորը: Վորովհե-
տեւ, ընկերնե՛ր, մեր աշխատանքը, սկսած ամենահատարակ աշ-
խատանքից մինչև ամենավորակյալ աշխատանքը, վոգենչնված ե
սոցիալիզմի գաղափարով:

Սրա մեջ ե եյությունը, ամեն ինչի հիմքը որա մեջ ե: Այս
պատճառով ամեն մի ստախանովական, ամեն մի ստախանովուհի,
յերբ ավելի չատ են արտադրում, իրենց նախկին նորմաները
գերազանցում են, այս հաղթանակների վրա ուրախանում են:
Յեզ վոչ միայն սրանք իրենք են ուրախանում, այլև ամեն մի
աղնիվ խորհրդային քաղաքացի ուրախանում է այդ նվաճումների
վրա, վորովհետեւ նա մասնակցում է սոցիալիստական պետու-
թյան մեծ շինարարությանը: Ահա՛ թե ինչն ե ամենահասարակ,
շարքային մարդու կյանքը գարձնում գաղափարական, լիքը,

հարուստ կյանք. ահա՞ թե ինչն ե հսկայական չափով ազնվաց-նում մեր կյանքը. ահա՞ թե ինչն ե ամեն մի աշխատանք ամենաարժեքավոր, վոգենչված աշխատանք դարձնում:

Խորհրդային Միության մեջ ամեն մի մարդ ներքուստ իրեն գիտակցում ե վորպես սոցիալիզմ կառուցող. Մենք սոցիալիստական առաջին պետության առաջին կառուցղներն ենք: Վորոնք են այս պետության առանձնահատկությունները, այս պետությանը հատուկ նշանները: Այս պետությունը բանվորների ու գյուղացիների պետություն ե: Այս պետության մեջ արտադրության բոլոր միջոցների տեր ու տնօրենը ամբողջ ժողովուրդն ե: Այս պետության ինդիքն ե՝ ճնշել շահագործող դասկարգերն, նրանց ի չիք դարձնել, ամբողջովին վոչնչացնել նրանց վորպես շահագործող դասակարգեր: Սոցիալիստական պետության առանձնահատկությունն այն ե, վոր աճեցնի, բարձրացնի, քաղաքականապես դաստիարակի աշխատավոր մասսաները այն գիտակցությամբ, վոր նրանք հանդիսանում են իրենց պետության անբաժան, լիակատար տեր ու տնօրենը:

Ահա թե ինչու, ընկերնե՛ր, մենք ապրում ենք յերջանիկ ժամանակներում:

Սոցիալիստական պետություն կառուցելը մեծագույն պատիվ ե. այս պատիվը բաժին ե ընկել Խորհրդային Միության բանվոր դասակարգերն. պատմությունը մեզ յերջանկացրել ե այդ պատվով: Այս շինարարությունը, վորն ահա արդեն 20 տարի յե, կոմունիստական կուռակցության զեկավարությամբ մեծադրույն հաջողություններ ե ձեռք բերել, մենք սոցիալիզմ ենք ստեղծել աշխարհիս մեկ վեցերորդ մասում:

Բայց այդ կնշանակի՞ արդյոք, թե մենք կարող ենք հանդիսանալ պարզով, առանց առանձնապես հոգ տանելու կառուցել այդ պետությունը: Վո՞չ, ընկերնե՛ր: Մենք դանվում ենք կապիտալիստական շրջապատման մեջ և այդ մենք յերբեք չպետք է մոռանանք: Յերկրագնդի հինդ վեցերորդ մասում դեռ իշխում ե կապիտալիստական կարգը, վորի ձգտումները հանգում են նրան, վորպեսզի ական դնեն աշխատավորական կարգի տակ, սոցիալիզմի կարգի տակ: Դաժան պայքար ե տեղի ունենում սոցիալիստական իրակարգի և կապիտալիստական իրակարգի միջև:

Ընկ. Մոլոտովը Հոկտեմբերյան մեծ հեղափոխության քսանամյակի տոնակատարության ժամանակ արած իր զեկուցման մեջ հիանալի կերպով ծավալեց յերկու աշխարհի այդ պայքարի պատկերը: Յես այսոր ուզում եմ կանդ առնել զարդացող այդ

պայքարի միայն մի հարցի վրա, մի կողմի վրա, այն կողմի վրա, վորի վրա ամենից ավելի վառ կերպով ե արտահայտվում այդ պայքարը:

Ընկերնե՛ր, ձեզանից մեծ մասը կարդում, ուսումնասիրում ե Լենինին և դուք հավանաբար հիշում եք նրա այն բոլոր ճառաւերը, վորոնց մեջ նա նախազգուշացնում եր, վոր սոցիալիզմը մերկ ձեռքերով վերցնել չի կարելի, վոր սոցիալիզմը մատուցանի վրա դրած մեզ չեն հրամցնի, վոր սոցիալիզմի աճման դեմ կբարձրանան հակահեղափոխության բոլոր դիվային ուժերը: Յեվ ահա այժմ մենք կարող ենք մեր սեփական աչքերով տեսնել, վոր կապիտալիստական աշխարհը միջոց ե գտել բուռը հավաքել հարյուրավոր և դուցե նույնիսկ հազարավոր մարդիկ հենց Խորհրդային Միության մեջ: Մի ժամանակ սրանք քաղաքական խմբավորումներ եյին — աջեր, «Ճախեր», մենչևեկներ, արոցկիստներ և այլն: Այս խմբավորումների ներկայացուցիչների մի մասը իր հայացքներով իրեն մոտիկ եր համարում բոլցեկներին, գտնում եր, վոր ինքը բոլցեկների հետ տարաբոլցեկներին, այսուհետեւ ունի միայն տակտիկական ինդիբների շուրջը: Մեր ընկերները, առաջին հերթին ընկեր լենինը և ընկեր Ստալինը դեռ այն ժամանակ ջախջախում եյին այս խմբավորումները և շատ հաճախ մատնանշում եյին, վոր այդ խմբավորումները գնում են դեպի հակահեղափոխության բանակը: Համաշխարհային բուրժուազիան իր բոլի մեջ հավաքեց այս մարդկանց այս կողմը գաբաժանեն կապիտալիստների ձեռքում լրաւեսներ, կանց, վորոնք դարձան կապիտալիստների և տեսորիստական դավադրությունների կազմակերպիչներ:

Ահա, ընկերնե՛ր, մեր շինարարության հսկայական հաջողությունների պայմաններում մենք չպետք ե մոռանանք նաև պայքարի այս կողմը, չպետք ե մոռանանք, վոր անհրաժեշտ ե աշաքարի այս կողմը, չպետք ե մոռանանք, վոր անհրաժեշտ: Ընկեր Ստալինն ասում եր.

Հվատություն անելու և վնասելու համար ամենեկին մեծ թվով մարդ չի պահանջվում: Դնեպրոստրոյը կառուցելու համար հարկավոր և գործի զնել տասնյակ-հազարավոր բանվորներ: Իսկ այն պայմաններու համար պահանջվում է գուցե միքանի տասնյակ մարդ, վոչ ավելի: Վորպեսզի պատերազմի ժամանակ հակատամարտը շահվի, դրա համար կարող ե պահանջվել կարմիր-բանակայինների միքանի կորպուս: Իսկ վորպեսզի այդ շահումը ճակատում ձանի կորպուս: Իսկ վորպեսզի այդ շահումը ճակատում ձանի բողոքի, դրա համար բալական ե, վորեւ տեղում՝ բանակի

շտաբում կամ նույնիսկ դիվիզիայի շտաբում լինեն միքանի լրտես, վորոնք կարող են գողանալ ուղերատիլ պլանը և հանձնել հակառակորդին: Վորպեսզի յերկաթուղային մեծ կամուրջ կառուցվի, դրա համար հազարալոր մարդիկ են պահանջվում: Բայց վորպեսզի այն պայմենացվի, դրա համար բափական և ընդամենը միքանի հոգի:

Ընկերներ, ոռուսական պատմության մեջ Պետերբուրգը— Հենի՞դրադը իրավացիորեն համարվում է մի աշտուհան դեպի Յեվրասիա, բայց այդ վոչ միայն մի պատուհան է դեպի Յեվրոպա, այլև մի դուռ, վորի միջով կարող են անցնել Միուրդային Միության սահմանները մեր թշնամիների հակայական քանակություն: Իսկ այդպիսի թշնամիներ ավելի շատ են, քան դուք յենթադրում եք: Այդ թշնամիները ամենասերտ կապէրով կապված են միջազգային բուրժուազիայի, սրա ամենաագրեսիվ, ուեակցիոն ու Փաշխտական մասի հետ:

Անպայման մենք պայքարում ենք այս թշնամիների դեմ: Բանլորները, կոլտնտեսականները, մանավանդ սահմանամերձ վայրերի կոլտնտեսականները հակայական ողնություն են ցույց տալիս պահպանության մեր որդաններին: Յես մի շարք տեղեկություններ ունեմ, վոր գործարաններում բանլորները ողնում են վորսալու և վորսում են այդ թշնամիներին: Բայց, ընկերներ, մեկ, յերկու, յերեք թշնամի բռնելով չի կարելի առել, թե վերջին թշնամին բռնված է: Քանի կապիտալիստական կարգերը մեր սահմաններից դուրս գոյություն ունեն, քանի դեռ մենք դանլում ենք կապիտալիստական ըրջապատման մեջ, մեզ մոտ միշտ ել ուղարկելու յեն տասնյակ, հարյուրավոր, հազարավոր թշնամիներ: Յեվ ահա այստեղ աշխատավոր մասսաները — իսկ մեր կարգը ուժեղ է, վորովհետեւ այդ կարգը պաշտպանում են աշխատավոր մասսաները — պետք է հայտաբերեն կամքի, յեռանդի, համառության մաքսիմում:

Կարծեմ ընկ. Ուգարովը այստեղ ասաց, վոր պետք է անհանգստություն ցուցաբերել Խորհրդային Միության համար, թե պետք է անհանգիստ լինել, վոր չինի թե մեզ մոտ թշնամիներ թափանցեն: Յեթե վրա հասնի մեր ուժերը չափելու մոմենտը — յես բոլորովին չեմ ուզում առել, թե այդ մոմենտը վրա կհասնի վաղը, վաղը չեմ յուս սըը կամ, վոր այդ մոմենտը անխուսափելիորեն պիտի վրա հասնի, — բայց յեթե այդ մոմենտը վրա հասնի, պետք է վոր մենք կատարելապես սպառազինված լինենք: Իսկ ամենալավ պահպանությունը մաս-

ամներն են: Վորքան ել վոր կառավարության որդանները ուժեղ լինեն, ինչ ազդեցություն ել վոր կուսակցությունն ունենա, բայց յեթե ժողովուրդը ակտիվ մասնակցություն ցույց չի տալիս, հաջողություններն այնուամենայնիվ այնքան ել մեծ չեն մինի:

Յես գտնում եմ, վոր այս պայքարում Լենինգրադի բանվորները պետք է կանգնած լինեն առաջավոր գծում:

Ընկերներ, վորքան ավելի քիչ լինի մեզ մոտ յեղած դիվերսանտների թիվը, վորքան ավելի քիչ լինեն այն թելերը, վորոնք կապիտալիստական աշխարհը կապում են մեր Խորհրդամին Միության մեջ յեղած առանձին լրտեսների հետ, այնքան ավելի ուժեղ կլինենք մենք: (Յերկարած ծափահարություններ): Այնքան ավելի հանգիստ կլինի մեր Կարմիր Բանակի ճակատը, այնքան ավելի պայմանական վագիսին մեջ, Խորհրդային Սոցիալիստական մեր պետության մեջ, Խորհրդային Միության մեջ, աշխատավոր մասսաները թույլ չեն տա թշնամական ուժերին ծավալիվու: (Բուռն ծափահարություններ):

Լենինգրադը սահմանամերձ քաղաք է: Լենինգրադը ամենաթանգարին քաղաքներից մեկն է: Յես ել չեմ խոսում ամբողջ թանգարին քաղաքներից մեջին է: (Բուռն ովացիա): Լենինգրադը իւժեքն ինձ համար անդին է: Լենինգրադը իւժեքն համարիամաղբության տակ ունի առաջնակարգ ինժեներատեխնիկական կազմ: Լենինգրադն ունի բաձր վորակի բանվորներ: Բուռն այդպես են կարծում: Յես չեմ ուզում չափն անցկացնել, լորն այդպես են կարծում: Յես չեմ ուզում չափն անցկացնել, (Ծիծաղ, ծափահարություններ): Լենինգրած գուրած դուրս թանգարժեկ գործարաններ, այդ թվում նաև կան մի շարք թանգարժեկ գործարաններ: Մի՞թէ կարելի յե պատկերաց-պաշտպանության գործարաններ: Նրանց պետք է հակադրել կազմակերպված, հզոր պրոլետարական աշալլըություն, ամենալայն մասսաների աշալլըությունը — սկսած գործարանային բանվորներից մինչեւ տան անտեսուհիները:

Պետք է վոր թշնամին զգա, վոր նրա վոտքերի տակն այրվում է, բոլ ել վոր նա քայլի, պետք է վոր ամեն տեղ զգա իրեն թշնամին թթնողորոտ: Յել, ահա, ընկերնե՛ր, մենք պետք ե այնպես անենք, վորպեսզի ամեն մի թշնամի ասի, Լենինդրադում աշխատավոր մասսաների թշնամու համար ապրելը ծանր է, անհնարին է: (Բուռն ծափահարություններ): Հարկավոր է աշալըջություն, հարկավոր է պայքարել թշնամիների դեմ, հարկավոր է նրանց դաստաստանը տեսնել, այն ել անխնա կերպով, վորպեսզի թշնամիներն իմանան, վոր թշնամական դործողությունները Խորհրդային Միության մեջ նրանց վրա թանդ կնսուն:

Այսպիսի մթնոլորտ ստեղծելը, թշնամիների դեմ պայքար ժղելը, նրանց նկատմամբ աչալուրջ լինելը սոցիալիստական շինարարության ձևերից մեկն է: Գուցե սոցիալիստական շինարարության այդ ձևը մեր վզին զոռով են փաթաթել, բայց ի՞նչ արած: Զե՞ վոր մենք, ընկերնե՛ր, կառուցողներ ենք, իսկ կառուցողները սյուրառուկ և վզկապ հաղած ման չեն գալիս, ինչպես ահա յես (ծիծաղ, ծափեր), կառուցողները ման են գալիս թեկերը քշտած: (Ծափեր):

Ընկերնե՛ր, աչալըջությունը սոցիալիստական շինարարության կարևորագույն կողմերից մեկն է: Ահա մի պարզ որինակ: Մենք հիանալի կերպով մեքենա յենք կառուցել: Վորքան յեսնդ, ստեղծագործություն, սեր է հայտնաբերվել այս մեքենան ստեղծելիս: Այս մեքենան աշխատավոր մասսաների զավակն է, արանց ծավալած ստեղծագործության զավակը: Բայց ահա թշնամին յեկավ և այն փչացրեց: Տեսնո՞ւմ եք, այս որինակի մեջ մենք հայտնաբերել ենք ստեղծագործություն, իսկ մյուս կողմը՝ սոցիալիստական աչալըջությունը մենք անտես ենք առել: Իսկ թշնամին ել հո մեզ դարձնակալ հսկում է: Ահա թե ինչու սոցիալիստական շինարարության այս կողմի վրա պետք ե մեծ և բացառիկ ուշադրություն դարձի, մանավանդ Լենինդրադում: (Յերկարան ծափահարություններ):

Ընկերնե՛ր, յես դիտակցաբար իմ ճառը վորոշ թեմայով սահմանափակեցի: Սոցիալիստական շինարարությունը անսահման է, վորքան անսահման են մարդու նվաճումները. սոցիալիստական շինարարությունը բազմակողմանի յէ, վորքան բազմակողմանի յէ սոցիալիստական շինարարության համար մզվող պայքարը:

Ահա մենք հիմա մեծ աշխատանք ենք կատարում—այդ գերադայն Խորհրդի ընտրությունների նախապատրաստությունն է: Յետ ձեզ ուղղակի պետք է ասեմ, վոր Գերագույն Խորհրդի ընտրությունների նորման մեջ:

բությունները, այդ ընտրությունների կազմակերպումը, այն ժամաների թիվը, վորոնք այդ ընտրությանը կմասնակցեն,— այս ամենը, ընկերնե՛ր, մեր թշնամիները հաշվի յեն առնելու: Յետ գտնում եմ՝ նրանց այս հաշվառումը մեզ համար անողութ չի լինի: Յետ կարծում եմ, վոր մեր ընտրությունները ցույց կտան, թե վորքան մոտ են կուսակցությանն աշխատավոր մասսաները, թե վորքան այդ մասսաները մերա կապված են խորհրդային կարգի հետ: (Բուռն ովացիա):

Ընկերնե՛ր, յես կարծում եմ, վոր տասնյակ-միլիոնավոր մարդիկ իրենց քվեարկությամբ կապիտալիստական ամբողջ աշխարհին ցույց կտան, վոր Խորհրդային Միության աշխատավոր մասսաները ամուր կերպով պայքարելու յեն խորհրդային կարգերի համար: (Բուռն ծափահարություններ): Իսկ այս բանն, ընկերնե՛ր, ընդհանուր քաղաքական ֆոնի վրա կլինի Խորհրդային Միության աշխատավոր մասսաների վոչ փոքր հաղթանակը: Սակայն կլինի խորհրդական կազմակերպությունը կազմակերպ: (Բուռն ովացիա: Ամբողջ դահլիճը կանգնած վողջունում ե ընկեր Կալինինին):

ՅԵԼՈՒՅԹ ԼԵՆԻՆԳՐԱԴԻ ԽՈՐՀՐԴԱՑԻՒՆ
ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱՑԻՒՆ
ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՔԱՂԱՔԱՅԻՒՆ
ՆԱԽԵՆՑՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՄ
1937 թ. նոյեմբերի 26-ին

Ընկերնե՛ր, թույլ տվեք ի գեմա ձեր, ի գեմա Խորհրդային աշխատավորական ինտելիգենցիայի ներկայացուցիչների համար քաղաքային ժողովի չնորհակալություն հայտնել Լենինդրադի քոլոր ընտրություններին այս պատվի, այն վստահության համար, վոր դուք ինձ ցույց եք տվել իմ թեկնածությունն առաջարկելով ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի համար: (Բուռն ծափահարություններ):

Յես դժվար կացության մեջ եմ. առողիտորիայի տրամադրությունները այնքան բարձր ե, վոր դժվար է այդ տրամադրությունը փոխել և դարձնել դեպի կյանքի պրոզան: Իսկ յես առելի թյունը փոխել և դարձնել դեպի կյանքի մարդ եմ: (Ծիծաղ, ծափահարություններ):

Ահա յերկու շաբաթ հետո Խորհրդային Միության քաղաքական կազմակերպությունների նորման մեջ:

Արտաքուստ այդ բարեւ արարողություն չեւ: Յես կուզենայի, վորդուք, խորհրդային ինտելիգենցիայի ներկայացուցիչներդ, մի ինտելիգենցիա, վորի առանձնահատկությունն արտահայտվում է նրանով, վոր նա խորհրդային ժողովրդի մսից ու վոսկրից է, վոր դուք անեք մաքսիմումը, վորպեսզի ամեն մի քինարկող այն գիտակցությունն ունենա, վոր նա հսկայական քաղաքական գործ և կատարում: Այդ շատ պատասխանատու, շատ մեծ աշխատանք:

Յես կուզենայի, վորպեսզի մարդիկ ներքուստ, որդանապես գիտակցին այս ակտի քաղաքական կարևորությունը: Դերազույն Խորհրդի ընտրությունները խորհրդային դեմոկրատիայի ամենալավի արտահայտություններից մեկն են: Զեզ հայտնի յեւ, վոր իր ժամանակին «դեմոկրատիա» բառը մեզ մոտ տառացիութեան հորովածը եր բոլոր հոլովներով և վոր սրա մեջ առանձնապես մեղավոր ե մեր մինչհեղափոխական ինտելիգենցիան, վորը իդեալ եր դարձրել արևմտայելլորպական պառլամենտարիզմը՝ և տառացիութեան վերածել եր այն ֆետիշի: Մենք, կոմունիստներս, յերեք դեմոկրատիան ֆետիշ չենք դարձրել, մենք միշտ դեմոկրատիան դիտել ենք վորպես միջոց և վոչ թե ինքնանպատակ: Մեզ համար դեմոկրատիան կարևոր ձևերից մեկը, մեծ միջոցներից մեկն ե մասսաները պետության կառավարմանը մասնակից դարձնելու համար, մասսաներին դաստիարակելու համար: Դեմոկրատիան հնարավորություն ե տալիս մասսաներին միացնել, համախմբել և ուղղել ընդհանուր պայքարի հանուն ընդհանուր նպատակների:

Այս բոլորովին չի թուլացնում այն փաստը, վոր խորհրդային դեմոկրատիան աշխատավորների ամենաարժեքավոր նվաճումն ե, վորովհետև միայն խորհրդային դեմոկրատիան ե իսկական դեմոկրատիա:

Միայն Խորհրդային Միության մեջ կա իսկական ժողովրդավարություն, իսկական դեմոկրատիա: Հիշեցե՛ք թեկուզ հին ուռւսական պատմությունը և Նովգորոդյան վեչեն: Արտաքուստ այդ ամենաարժուր դեմոկրատիան եր. ամբողջ ժողովրդը հրապարակում վրորում եր արմատական հարցերը և նրա վորոշումները կենսագործվում եյին: Սլավյանոֆիլների մեջ քիչ մարդիկ չկային, վորոնք նայելով այս արտաքին կողմին՝ ուռւսական հին բարքերը հռչակում եյին ուռւսական ժողովրդի վոսկեդար: Դեռ Բելինսկին ու Զերնիշելվսկին սուր կերպով ծաղրում եյին ուլավյանոֆիլների նման հրապուրանքները: Մենք, կոմունիստնե-

բըս, հիմնալի կերպով գիտենք, վոր Նովգորոդի վեչեյում, Նովգորոդի ժողովրդական հավաքույթում, ըստ եյության բոլոր կարելուրագույն հարցերը լուծում եր փողը: Հարուստների տրամադրության տակ կար Փիղիկական ուժ, կային «լավ կտրիճներ», վորոնք գալիս եյին վեչե և ամենքից ավելի բարձր եյին դուռում, իսկ յերբեմն ել բռունքըն եյին գործի դնում: Պատմաբաններին հայտնի յեւ, վոր այդ «վոսկեգարում» հարցերը շատ հաճախ բռունցքների միջոցով եյին լուծվում: Նովգորոդի վեչեն, իհարկե, իսկական ժողովրդավարություն չեր: Դեմոկրատիայի առաջացման նման ձեւը պատահում են նաև այլ ժողովուրդների պատմության մեջ: Վեչեն բնավ ել ինչ-վոր բացառապես ուռւսական ինստիտուտ չեր: այդպիսի ինստիտուտներ պատմական զարգացման նույն ետապում հանդիպում ենք համարյա բոլոր ժողովուրդների մոտ:

Անցնելով մեր ժամանակաշրջանին, պետք ե ասել, վոր բռուրժուական դեմոկրատիան, բռուրժուական-կապիտալիստական յերկրների դեմոկրատիան միայն վորպես մի թղենու տերեւ և ծառայում կապիտալի իշխանությունը ծածկելու համար: Յես զտնում եմ, վոր այս ժողովում անհրաժեշտ չե, վոր յես հատուկ ապացույցներ բերեմ այդ հաստատելու համար: Յեթե Նովգորոդյան վեչեյում դեր եր իսպառում փողը, ապա արդի բռուրժուական դեմոկրատիայի մեջ վճռական դեր ե խաղում կապիտալլ:

Նրանց, ովքեր վնասուում ե աշխատում են ձեռք բերել լիմանար գեմոկրատական հասարակություն, ովքեր ուղում են այդ հասարակության մեջ ապրել, յես պետք ե ասեմ. իսկական դեմոկրատիա գոյություն ունի Խորհրդային Միության մեջ: (Բուռն ծափահարություններ):

Իհարկե, դուք ճիշտ կվարիեք, յեթե ինձ հարց տաք. իսկ արդյոք դրանք գտառարկ խոսքեր չե՞ն, ինչո՞վ կարելի յեւ պացուցել, վոր միայն մեզ մոտ կա իսկական դեմոկրատիա: Յես կաշխատեմ այս հարցին պատասխանել:

Առաջինը, վոր բռութագրում ե մեր կարգի դեմոկրատականությունը, այն ե, վոր մեզ մոտ կապիտալիստներ չկան, մեզ մոտ շահագործող դասակարգեր չկան: Ահա ճեզ խորհրդային գեմոկրատիայի առաջին տարբերիչ հատկությունը: Զե՞ վոր ամեն մեկի համար պարզ ե, վոր ինչ «դեմոկրատիա» ել վոր մինի, բայց այնտեղ, վորտեղ կողք-կողքի ապրում են Ռոկֆելլերն ու հասարակ բանվորը — դեմոկրատիան դատարկ հնչյուն

Ե: Հասարակ բանվորին, վորն ապրում ե միայն իր բանվորական ուժը վաճառելով, իր աշխատանքով գրոչներ դատելով, միլիարդատերից բաժանում ե հոկայական տարածություն. այստեղ դեմոկրատիայի ինչ ձև ել վոր հնարես, քանի դեռ միլիարդատերը մնում է միլիարդատեր, այդ դեմոկրատիան, մեկ ե, կը ջնջի: Հետեւաբար, խորհրդային դեմոկրատիայի առաջին տարբերիչ նշանը այն ե, վոր այդ դեմոկրատիան ազատված ե կապիտալի լծից:

Այսուհետև, մեր յերկրում բացակայում են դասակարգային հակասությունները: Կապիտալիստական յուրաքանչյուր յերկրում պետական ամեն մի գործ լուծելիս բաշխվում են կապիտալիստական տարբեր խմբերի հակադիր շահերը: Վերջնենք հետեւյալ որինակը. Մոսկվայում մենք այժմ քանդում ենք մի ամբողջ շարք տներ և կառուցում ենք նոր պողոտաներ: Կապիտալիստական յերկրում այդ այնքան ել հեշտ չե անելը: Փարիզը, Լոնդոնը, Նյու-Յորքը շատ ու շատ տուժում են մասնավորկապիտալիստական շահերից: Այդպիսի քաղաքի պլանավորման ժամանակ պիտի բարեհաճես գնել հողի ամեն մի արշնը, պիտի բարեհաճես հողատերին հսկայական գումարներ վճարել: Բուրժուական յերկրներում ամեն մի պրոդրեսիվ քայլ ինչպես քաղաքային շինարարության մեջ, այնպես ել կյանքի այլ բնադրամաներում արգելակվում ե կապիտալիստների շահագրգուված խմբերի կողմից: Այս պատճառով բնական ե, վոր կապիտալիստական յերկրներում ամեն մի միջոցառում հանդիպում ե մասնավորկապիտալիստական, շահախնդրական շահերի: Ահա հենց այս տարրը սոցիալիստական մեր յերկրում բացակայում ե. քանի վոր մեզ մոտ թշնամի դասակարգեր չկան, մեղանում բացակայում են նաև դասակարգային հակասությունները: Բոլորովին պատճական չե, վոր Ստալինյան Սահմանադրությունը հոչակվել ե հենց այժմ, յերբ մենք կառուցել ենք սոցիալիզմը և վերացրել ենք դասակարգային հակասությունները:

Մեր յերկրը ունի նաև այն առանձնահատկությունը, վոր անցած 20 տարվա ընթացքում — յես կարծում եմ, վոր չեմ պարծենում, այլ ուղղակի փաստն եմ արձանադրում — վոր այս 20 տարվա ընթացքում անչափ աճել ե մեր ժամաների ինչպես քաղաքական, այնպես ել կուլտուրական ժակարդակը: Իմ կարծիքով այդ այդպիս ե: (Ծափահարություններ): Մինչդեռ կապիտալիստական ամբողջ աշխարհում մենք այժմ տեսնում ենք արվեստի և դիտության կամ լճացում, կամ դեղբաղացիա,

մեզ մոտ, Խորհրդային Միության մեջ արվեստն ու գիտությունը բուռն կերպով ծաղկում են: Մասսաների բարձր քաղաքական ու կուլտուրական մակարդակը խորհրդային դեմոկրատիայի տարբերիչ հատկանիշն ե:

Խորհրդային դեմոկրատիայի չորրորդ տարրերիչ հատկությունը յես համարում եմ մեր ամբողջ ժողովրդի նպատակների միասնությունը: Վերջնենք, որինակի համար, թեկուղ, ամենաառաջդեմ կապիտալիստական պետությունը: Այդպիսի պետության իշխող դասակարգերը այնպիսի նպատակ չունեն, վորը միացներ բոլոր ազնիվ մարդկանց, մի նպատակ, վորը մարդկանց վողերեր, վորը մարդկանց բարձրացներ և հասցներ մինչեւ ամեն ինչ և նույնիսկ իր կյանքը զոհելու պատրաստակամությանը: Նույնիսկ պատերազմի գեպքում բուրժուական յերկրներում իշխող դասակարգի մի հսկայական խավ կողոպուտ ե անում, չարաշահում, վաստակ ե վիճուռում:

Իսկ մե՞զ մոտ: Մեզ մոտ ամբողջ ժողովուրդը մի ընդհանուր նպատակ ունի: Այդ նպատակը կոմունիզմ կառուցելու համար պայքարելն ե: (Բուռն ովացիա):

Կար ժամանակ, յերբ ինտելիգենցիայի մի մասը կոմունիզմը համարում եր լոկ մի ուսմունք, իսկ այն մարդկանց, ովքեր պաշտպանում ե կենսագործում են կոմունիզմի գաղափարները, համարում եր Փանտազյուներ: Այժմ Խորհրդային Միության 20 տարվա գոյությունից հետո խորհրդային ամեն մի քաղաքացու համար, խորհրդային ամբողջ ժողովրդի համար և այս ժողովը ինտելիգենցիայի համար կոմունիզմը վոչ թե ուսմունք ե, այլ վորոշակի նպատակ ե, վորը միացնում ե մեզ բոլորիս: (Բուռն ծափահարություններ): Պատահել ե, վոր նույնիսկ ծաղրի յեն յենթարկել այն մարդկանց, վորոնք հոչակել են կոմունիզմի մեծ լոգունդը, յուրաքանչյուրից՝ ըստ նրա ընդունակության, յուրաքանչյուրին՝ ըստ նրա պահանջի: Այս, 20 տարի սրանից առաջ այդ նպատակը վոմանց հեռու յեր թվում: Յես ասացի, վոր յես պրոցայի մարդ եմ, բայց այս բարձր նպատակը պրոցայիկ մարդուն ես բանաստեղծ ե դարձնում: (Ծափահարություններ):

Այժմ մեզ մոտ հաստատված ե Սահմանադրությունը, վորը ամեն մեկին ապահովում ե աշխատանքի իրավունք, կրթության իրավունք, ապահոված ծերության իրավունք: Այժմ մենք մեր սեփական աչքերով տեսնում ենք, սեփական ձեռքերով շոշափում ենք, թե ինչպես տարեցտարի ածում ե մեր բարեկեցությունը:

Այժմ մեր յերկրի ամեն մի քաղաքացի կոմունիստական հասարակությունը միանդամայն հասանելի յէ համարում: (Բուռն ծափահարություններ):

Ահա այս հիմունքներով, այս Փունդամենտի վրա ել զարդանում ե մեր խորհրդային դեմոկրատիան: Ահա թե ինչու խորհրդային դեմոկրատիան իսկական դեմոկրատիա յէ: Բայց, ընկերնե՛ր, հասկանալի յէ, վոր այժմ մեղանից ե կախված խորհրդային դեմոկրատիայի հետագա կատարելագործումը: Մենք պետք ե այդ դեմոկրատիան այնքան ճկուն դարձնենք, վորպեսզի ամեն մի մարդ, մեր հասարակության ամեն մի անդամ դդա իր որդանական կապն այդ հասարակության հետ, վորպեսզի պետությունը նրան ոգնի իր բոլոր անհատական ընդունակությունները ծավալելու: Իհարկե, կոմունիստական հասարակության մեջ արդի խմատով պետական ապարատ չի լինի: Բայց դեպի կոմունիզմը մնացած պատմական ժամանակաշրջանի ընթացքում մեր պետությունը պետք ե հսկայական աշխատանք ծավալի:

Խորհրդային ինտելիգենցիային վիճակված ե հսկայական դեր խաղալ այս ամբողջ աշխատանքի ընթացքում, պետական ձևերը կատարելագործելու, մարդու նկատմամբ մարդու ունեցած վերաբերմունքը վերափոխելու, մարդկանց հոգեբանությունը վերափոխելու ասպարեզում:

Չե՞ վոր մենք ինքներս չենք նկատում, վոր խորհրդային մարդն այժմ արդեն կապիտալիստական հասարակության մեջ յեղած մարդու նման չէ: (Ծափահարություններ): Թեկլուդ չենց նրանով նման չէ, վոր կապիտալիստական հասարակության մեջ չե՞ վոր մարդու հիմնական հոգսն ե—անկախ այն բանից, թե նա ժամ առատաձեռն ե, չար կամ բարի յե՛—այդ մարդու հիմնական հոգսը հանդում ե փող կուտակելուն: Այդ բնական ե: Յեթե կապիտալիստական հասարակության մարդը վորոշ քանակությամբ փող կուտակած չլինի, նա կորած ե. նրակյանքում յեղած առաջին իսկ կատասրովը, անհաջողությունը նրան շարքեց դուրս կնետի: Իսկ մեզանում վերջին ոռւբլին ել այժմ վոչ վոք չի վախենում ծախսելու: (Ծիծաղ, ծափահարություններ): Մեր վաղվա որը ապահովված ե: (Ծափահարություններ):

Մի՞թե պարզ չէ, վոր խորհրդային դեմոկրատիան աշխարհիս ամենակատարյալ դեմոկրատիան ե: (Ծափահարություններ):

Խորհրդային կառավարությունը, կուսակցությունը, ընկեր Ստալինը ձգտում են ամենալայն մասսաներին մասնակից դարձնել պետությունը անմիջապես կառավարելուն: Խորհրդային դեմոկրատիայի զարգացման ինդիքը կարող ե իր վրա վերցնել միայն ամբողջ ժողովուրդը: Խորհրդային որդանների ընտրությանը մասնակցելով, աշխատավորական մասսաներն իրենց ուսերին են վերցնում մի վիթխարի խնդիր: Այդ խնդիքը նրանք գլուխ կրերեն, վորովհետև նրանք զեկալարվում են Մարքսի—Ենգելսի—Լենինի—Ստալինի ուսմունքով: (Բուռն ծափահարություններ):

Բայց վորպեսզի ավելի հեշտ կերպով կարողանա իր մեծ խնդիրները լուծել, միացյալ դեմոկրատական ժողովուրդը պետք ե ազատ նայի դեպի առաջ: Ուստի այն բոլոր թափթփուկների դատաստանը, վորոնք ժողովրդի թիկունքում դավադրություններ են սարքում, մենք կտեսնենք, ինչպես տեսնում են թշնամիների դատաստանը: (Բուռն ծափահարություններ):

Բնկերնե՛ր, այստեղ շատ են խոսել այն մասին, վոր մենք յերջանիկ ժամանակաշրջան ենք ապրում: Յես ել այդպես եմ կարծում և միայն կկամենայի իմ տարիքից պակսեցնել մի 20 տարի (Ծիծաղ, ծափահարություններ): Բայց վորովհետև յես որյեկտիվ պարագաները հաշվի առնող մարդ եմ, ապա յես հաշտվում եմ իմ տարիքի հետ: (Ծիծաղ, ծափահարություններ):

Յել, ինձ թվում ե, թե առանձնապես յերջանիկ ժամանակ ապրում մեր ինտելիգենցիան: Հին ժամանակները մենք ինտելիգենցիային համարում եյնք ազգաբնակության մանր—րուրժուական խալ: Բուրժուական հասարակության մեջ ինտելիգենցիայի վերնախավը սերտաճել եր շահագործող դասակարգերի հետ: Իսկ մեզ մոտ շարքային ինժեների և բանվորի աշխատավարձի միջև մեծ տարբերություն չկա: Բայց բանը միայն սրանում չէ: Մեր ինտելիգենցիան ամենասերտ կերպով կապված ե բանվոր դասակարգի հետ, կոլտնտեսական գյուղացիության հետ: Մեր ինժեներները, գրողները, արտիստները, արվեստագետները, բանաստեղծները, մանկավարժները առաջ են գալիս և ինտելիգենցիայի շարքերն են մտնում նայած իրենց ընդունակություններին: Միջին կրթությունը, յոթնամյակը մեղմությունը համար պարտադիր են, իսկ յոթնամյա դպրոցին ավարտելուց հետո յուրաքանչյուրի համար բոլոր ճանապարհները բաց են: Մեր ինտելիգենցիայի շարքերը մուտք են գործում

ժողովրդի ծոցից յելած ամենաակտիվ, ամենաչնորհալի, ամենաընդունակ, ամենալորակյալ մարդիկ:

Մեր արդի ինտելիգենցիան—այդ խորհրդային ինտելիգենցիայի առաջնա սերունդն է: Այդ խորհրդային ժողովրդի մասից ու վոսկրից ե, այդ մեր ժողովրդի անբաժան մի մասն է: Խորհրդային ինտելիգենտի ճակատին կարելի յե նույնիսկ ճանաչել բանվորի ու գյուղացու բնորոշ զծերը: (Ծափահարություններ): Մենք մեր ինտելիգենցիային պիտի սիրենք այնպես, ինչպես մեր կարմիր բանակը (բուռն ովացիա), իսկ Կարմիր բանակը մենք շատ ենք սիրում: (Ծափահարություններ):

Այստեղ ասում եյին, թե միայն այժմ կարելի յե ծավալել ստեղծագործական ուժերը: Այդ ճիշտ է: Միայն խորհրդային իրակարգը ինտելիգենցիային հասարակությունները, տաղանդները և գա սոցիալիստական պետության պայմաններում: Իսկ կոմունիստական հասարակության մեջ մենք այնպիսի ուժեր կծավալենք, վոր մարդու շունչը կտրվում է, յերբ այդ մասին մտածում է: (Ծափահարություններ):

Բերեմ ամենասովորական արտադրական մի որինակ: Ահա Մուկվայում մետրո յեն կառուցում: Մետրոներ կառուցում են նաև արտասահմանում: Ասացեք, մի՞թե մեր ճարտարապետը, վորը նախագծում և մետրոյի կայարանները, նույն դրության մեջ և գտնվում, ինչ վոր, յենթալրենք, Փարէզի ճարտարապետը: Զե՞ վոր Փարիզում ևս ստեղծագործությունը ճարտարապետին դըրդում է, վորպեսզի հասարակությանը տա գեղեցկություն, չքեզություն, հարմարություն, չե՞ վոր նա ել կուղենար ստեղծել մի գլուխ դործոց — գեղեցիկ, հոյակապ դործ: Այս բնական է: Յես կարծում եմ, վոր ամեն մի ճարտարապետ դրան և ձգտում: Բայց կարո՞ղ ե նա բուրժուական հասարակության մեջ իր ստեղծագործական թափն ազատ արձակել: Վո՞չ, չի կարող: Ինչո՞ւ: Վորովհետեւ այնտեղ մետրոն շինում և կապիտալիստը: Իսկ կապիտալիստը մետրո յե շինում վոչ թե գլուխ դործոց ստեղծելու համար, այլ կապիտալիստական ձեռնարկություն և շինում շահույթ ստանալու համար: Ինքը կապիտալիստը ևս փորով կաշկանդված ե. չե՞ վոր յեթե շինարարությունը նրան թանգ նստի—վնաս կտացվի:

Իսկ մե՞զ մոտ: Մեղ մոտ ամեն ինչ կառուցում ե սոցիալիստական պետությունը: Աշխարհում չկա վոչ մի կապիտալիստ, վորն այնքան հարուստ լիներ, վորքան Խորհրդային Սոցիալիս-

տական Պետությունը: (Ծափահարություններ): Յերբ մեզ մոտ ճարտարապետին առաջարքանք են տալիս, նրան ասում են, թե պետք ե այնպիսի չենք շինել, վորը համապատասխաներ ժողովրդի շահերին, նրա հարմարություններին և գեղարվեստական ճաշակին:

Ինտելիգենցիայի՝ բուրժուական և սոցիալիստական հասարակության մեջ ունեցած դրության տարրերությունը բղխում է այն հանդամանքից, վոր այստեղ իշխանության գլուխ են գտնվում կապիտալիստները, իսկ այստեղ՝ աշխատավորները: Մեր ժողովուրդը ճարտարապետին ասում ե. ինձ համար մետրո շինիր, բայց վորովհետև այդ մետրոյով պիտի ոգտվեն մասսաները, ուստի շահույթի մասին մի մտածիր, այլ մտածիր այն մասին, թե մարդ պետք ե այդ մետրոյով աշխատանքից, մտածիր այն մասին, վոր մարդ չհոգնի մետրոյով ճանապարհորդելիս: Ահա ձեզ ինտելիգենցիայի դրության մեջ յեղած տարբերությունը կապիտալիստական աշխարհում և մեզ մոտ: Իմ բերած այս որինակը կարելի յե տարածել մտավոր աշխատանքի մարդկանց տառացիորեն բոլոր ստեղծագործական դրսեւումների վրա:

Յես ավելին կասեմ: Կապիտալիստական աշխարհում բոլոր իրերը ստեղծվում են շահույթ ստանալու ցանկությունից յելնելով: Զարմանալի չե, վոր Ամերիկայում, վորը հոչակվել ե իր շուայլությամբ, ըստ Եյության բոլոր իրերը ստանդարտ ձեռվ են պատրաստվում, վորպեսզի ավելի եժան նստի: Այսպես կոչված «միջակ մարդը» ոգտվում է այդ իրերով: Այստեղ կենսական ամբողջ դրույթը բղխում է կապիտալիստների դասակարգից, վորի համար կարեւոր ե միայն մի բան, այն ե՝ վաստակ, վաստակ և վաստակ: Ահա ամեն մի կապիտալիստի նպատակը:

Իսկ մեզ մոտ բոլոր որյեկտները—մենքը, թատրոնները, կամուրջները, կայարանները, լայն սպասման առարկաները—մենք կշինենք յելնելով նրանց նպատակահարմարությունից, ոգտակառություննից, գեղեցկություննից:

Կարելի յե համարձակ կերպով ասել, վոր մեր ապագա կյանքի գեղեցկությունը, նրա հարմարությունն ու հաճելիությունը շատ բանով ձեզնից ե կախված: Անձունի տները—իսկ այդպիսի տներ մեզանում շատ են կառուցել—նախագծել են վոչ թե բանվորները, այլ ճարտարապետները: Զե՞ վոր մեզ մոտ պետությունը բոլոր հարցերի լուծման ժամանակ հենվում է մասնագետների կարծիքի վրա:

Յես կարծում եմ, վոր վորքան առաջ գնանք և վորքան ավելի կատարելագործված լինի մեր կյանքը, վորքան ավելի բարձր լինի տեխնիկան, վորքան ավելի մենք բարձրացնենք ժողովրդի գեղարվեստական պահանջները, այնքան ավելի շատ կլինի մասնագետների ազգեցությունը Խորհրդային Միության ամբողջ սոցիալիստական շինարարության վրա:

Ահա, ընկերնե՛ր, թե ինչ ե նշանակում խորհրդային կարգը, ահա թե վորն ե ինտելիգենցիայի գերը խորհրդային այդ կարգի մեջ: Ինչպես տեսնում եք, մի դեր, վորը թերեւս ձեր յենթադրածից ավելի մեծ է: Այդ գերը շատ պատվավոր դեր է: Մենք ասում ենք, թե մեր յերկիրը աշխարհում առաջինը կլինի արվեստի ու գիտության բնագավառում: Յես ել այդպես եմ կարծում: Բայց դրա համար պետք ե աշխատել, կատարելագործել մեր կյանքը և իրեն ել կատարելագործել: Յեկ յեթե դուք ցանկանում եք, վորպեսզի յերկիրն ավելի արագ քայլի գեղի առաջ, ամբողջ թափով ծավալեցնք ձեր ստեղծագործական ուժերը: (Յերկարածու ծափահարություններ): Յես կարող եմ ձեզ յերաշխավորել, վոր ձեր ստեղծագործական ուժերի զարգացումը ձեզնից յուրաքանչյուրի անհատական կյանքը կցնի բացառիկ կերպով հարուստ բովանդակությամբ: (Ծափահարություններ): Ընկերնե՛ր, դեկտեմբերի 12-ին բոլորս քվեարկենք հոգուտ կոմունիստական կուսակցության, հոգուտ ժողովրդական ակնկալությունների արտահայտիչ ընկեր Ստալինի: (Բուռն ծափահարություններ, վորոնից վերածվում են ովացիայի: Բացականչություններ «ուռա»):

Հանուն խորհրդային ինտելիգենցիայի, հանուն խորհրդային ինտելիգենցիայի ստեղծագործության: (Ծափահարությունների նոր փոքրիկի: Նոր բացականչություններ «ուռա»):



Ա. Ա. ԱՆԴՐԵՅԵՎ

ՃԱՐ. ԱՐՏԱՍՏԱՆԱ. ԱՇԽԱԲԱԴԻ

ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԺՈՂՈՎԻՆՄ

1937 թ. դեկտեմբերի 9-ին

Ընկերնե՛ր, թույլ տվեք ինձ ամենից առաջ ջերմ վողջույն հաղորդել Աշխարհագ քաղաքի բոլոր բանվորներին, բանվորուհիներին, կոլտնտեսականներին, կարմիր-բանակայիններին և հրամանատարներին, ինչպես և ջերմ վողջույն թուրքմեն ամբողջ ժողովրդին: (Ծափահարություններ: Բացականչություններ «ուռա»):

Ընկերնե՛ր, գերազույն Խորհրդի պատգամավորների ընտրության շուրջը չտեսնված ակտիվությամբ ծավալված նախընտրա-

կան կամպանիան, վորի ընթացքում կոմունիստները հանդես են դալիս ըլոկ կնքած անկուսակցականների հետ, այժմ արդեն շատ մոտ ե իրականանալու: Յերեք որից հետո Աշխաբադ քաղաքի ընտրողները, ինչպես և մեր մեծ Խորհրդային Միության բոլոր քաղաքացիները կիրագործեն ԽՍՀՄ Գերազույն Խորհրդի պատգամավորները:

Ու՞մն ե պաշտպանում մեր բոլշևիկյան կուսակցությունը անկուսակցական բանվորների ու կոլտնտեսականների հետ միասին վորպես ԽՍՀՄ Գերազույն Խորհրդի պատգամավորներ, Բաղմաթիլ այն թեկնածուների ցուցակներում, վոր այժմ ժողովներում քննարկվում են, զուք կարող եք դանել յերկարամյա հեղափոխական աշխատանքի մեջ ստուգված կուսակցական և խորհրդային ղեկավարների անունների հետ միասին՝ աշխատանքի մեր հերոսների, արդյունաբերության և տրանսպորտի, կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների մեր ստախանութականների ու ստախանութականների անունները: Թեկնածուների մեջ կան մեր նշանավոր սավանորդների ու խորհրդային ինտելիգենցիայի ներկայացուցիչների՝ ինժեներների, բժիշկների, արտիստների, պրոֆեսորների և ուրիշների բազմաթիվ անուններ:

Ահա ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի պատգամավորության այն թեկնածուների կազմը, վորոնց այժմ քննարկում ե ամբողջ մեծ խորհրդային յերկիրը: Գործարանների բանվորների ու կոլտնտեսականների ժողովներում առաջադրված թեկնածուների անունների այս ցուցակում ներկայացված ե այն ամենը, ինչ լավագույնն ե:

Աշխաբադի, Կիդիլ-Արվատի, Կրասնովոդսկի բանվորներն ու բանվորուհիները, Թուրքմենստանի գյուղական սայոնների կուտնտեսականներն ու կոլտնտեսուհիներն առաջադրել են իմ թեկնածությունը ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի պատգամավորության համար: Յես ուրախությամբ և պարծանքով եմ ընդունում ձեր այդ վստահությունը: (Ծափահարություններ: «Ուռա») քացականչություններ): Յես, ընկերնե՛ր, կարող եմ միայն մի բան ասել իմ ընտրողներին, վոր պատվով կաշխատեմ արդարացնել ձեր վստահությունը ի բարորություն Խորհրդային մեծ Միության և ի ծաղկումն Խորհրդային Թուրքմենստանի: (Ծափահարություններ: Քացականչություններ: «Ուռա»): Յես կարող եմ ձեզ, ընկե՛ր ընտրողներ, նաև հայտարարել, վոր անշեղ պիտի հետեւմ ընկեր Ստալինին, այն ուղիով, վոր մեզ ցույց ե ավել մեծ լենինը: (Ծափահարություններ: Քացականչություններ: «Ուռա»):

Յես, ձեր թեկնածուն, դժբախտաբար, ի վիճակի չեմ ամեն մի ընտրողի հետ հանդիպելու, ուստի պետք կլինի սահմանափակվել միայն ընտրողների մի մասի հետ հանդիպելով և հանդես դալ սակավաթիվ ժողովներում: Խնդնըստինքյան հասկանալի յէ, վոր ամեն մի ընտրող ի վիճակի չի լինի տեսնել իր թեկնածուի դեմքը, բայց ամեն մի ընտրող շատ լավ ե ճանաչում մեր մեծ կոմունիստական կուսակցությանը: Պարզ ե, վոր մեր՝ ընտրողները կեվեարկեն վոչ միայն Գերագույն Խորհրդի համար առաջադրված առանձին թեկնածուների ողակին, այլ գրանով իսկ նաև մեր փառապանծ բոլշևիկյան կուսակցության ողակին, վորն այդ թեկնածուներին պաշտպանում ե:

Քվեարկելով կոմունիստների ու անկուսակցականների բլոկի թեկնածուների ողակին, դուք, ինչպես և ԽՍՀՄ միլիոնավոր ընտրողները, միաժամանակ կեվեարկեք բոլշևիկների կուսակցությանը վստահություն ցույց տալու ողակին, այն կուսակցությանը, վոր աճել ու կազմակերպվել ե բանվոր դասակարգի միջից, վորը իր դոյցության առաջին որից առանց կտրվելու գնում և իր ժողովրդի հետ միասին, այն կուսակցությանը, վորի ղեկավագությամբ բանվոր դասակարգը և գյուղացիությունը վերջնական հաղթանակ տարան 1917 թ. հոկտեմբերին կապիտալիստների ու կալվածատերերի վրա, այն կուսակցությանը, վորն ահա արդեն քսան տարի յէ, ինչ հաջողությամբ յերկիրը տանում է սոցիալական միզմի ուղիով դեպի կոմունիզմ: Ահա՝ թե դուք ում ողակին լիզմի ուղիով դեպի կոմունիզմ: Յափակեվեարկեք առաջադրված թեկնածուների հետ միասին: (Ծափահարություններ: Քացականչություններ: «Ուռա»):

Ձեր ձայները առաջադրված թեկնածուների ողակին տալով, դուք դրանով իսկ վստահություն ցույց կտաք բոլշևիկների կուտնտեսականներն ու կոլտնտեսուհիներն առաջադրել են իմ թեկնածությունը ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի պատգամավորության համար: Յես ուրախությամբ և պարծանքով եմ ընդունում ձեր այդ վստահությունը: (Ծափահարություններ: «Ուռա») քացականչություններ): Յես, ընկերնե՛ր, կարող եմ միայն մի բան ասել իմ ընտրողներին, վոր պատվով կաշխատեմ արդարացնել ձեր վստահությունը ի բարորություն Խորհրդային մեծ Միության և ի ծաղկումն Խորհրդային Թուրքմենստանի: (Ծափահարություններ: Քացականչություններ: «Ուռա»): Յես կարող եմ ձեզ, ընկե՛ր ընտրողներ, նաև հայտարարել, վոր անշեղ պիտի հետեւմ ընկեր Ստալինին, այն ուղիով, վորի ղեկավարությամբ կազմակերպվել և հաջողությամբ նը, վորի ղեկավարությամբ կազմակերպվել իսկ անդունիքությունը, վոր այսպիսի պատուհանին, ինչպիսին և գործազրկությունը:

Քվեարկելով հոգուտ առաջադրված թեկնածուների, մեր ընտրողները դրանով իսկ կեվեարկեն հոգուտ բոլշևիկյան կուսակցությանը վստահություն ցույց տալուն, այն կուսակցությանը, վորի ղեկավարությամբ կազմակերպվել և հաջողությամբ անց ե կացվել կուտակների ու բեկերի ջախջախումը գյուղում,

իրադություն ե կոլտնտեսական իրակարգի հաղթանակը, ընդ-միշտ վերացվել ե գյուղատնտեսության հետամնացությունը, այդ գյուղատնտեսությունը ապահովելով մեր արդյունաբերության արտադրած հսկայական քանակությամբ տրակտորներով, կոմ-բայներով և այլ բարդ գյուղատնտեսական մեքենաներով : Մենք կարող ենք այժմ համարձակ կերպով ասել, վոր սովի հարցը մեզ մոտ ընդմիշտ մեջտեղից հանված ե : Մեր գյուղատնտեսությունը այժմ և տարեցտարի հսկայական քայլերով ավելի առաջ կշարժ-վի: Բավական ե ասել, վոր արդեն այս տարի մենք ունենք հացահատիկի մինչև այժմ չտեսնված համախառն հավաք յոթ միլիարդ փթի չափով: Միթե այժմ կարո՞ղ ե մեր առաջ սովի հարցը կանգնել: Վո՞չ, ընկերնե՞ր, այդ հարցը այժմ ընդմիշտ հա-վետենականության դիրքն ե թաղվել: (Ծափահարություններ):

Բայց վոչ միայն հացահատիկը, այլ և բամբակն ու այլ տեխ-նիկական մշակույթների բերքը մեզ մոտ անհամեմատ ավելի յե, քան առաջվա տարիները, մի հանդամանք, վորը հնարավորու-թյուն և տալիս զգալի չափով ավելացնել սպառման զանազան ապրանքներ արտադրելը: Այս՝ թե ինչ ե ձեռք բերել կոմունիս-տական մեր մեծ կուսակցությունը, վորի ղեկավարությամբ բանվորներն ու գյուղացիները առաջ են դնացել մի հաղթանակից դեպի մյուսը: (Ծափահարություններ):

Զեր ձայները կոմունիստների և անկուսակցականների բլոկի թեկնածուներին տալով, գուշ կրվեարկեք հոգուտ այն կուսակ-ցության, վորի ղեկավարությամբ քաղաքացիական պատերազ-մում ջախջախվել են սպիտակ-դվարդիականների, բասմաչների և ամեն տեսակ ոտարերկրյա իմպերիալիստական ինտերվենտների հրոսակախմբերը:

Մեր կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ ստեղծվել է հզոր կարմիր բանակ, վորը յերկյուղ ե ազդում մեր թշնամիներին իր կարգապահությամբ, գիտակցականությամբ և տեխնիկական սարքով, այն ե՝ հրանոթներով, տանկերով ու ինքնաթիւներով: Դուք կրվեարկեք հոգուտ այն կուսակցու-թյան, վորի ղեկավարությամբ ահա արդեն շատ տարիներ ե, վոր ջախջախվել են իմպերիալիստական պետությունների կողմից հա-ռուցվող պատերազմի ամեն տեսակ պրովոկացիաներ: Մեր կու-սակցությունը իր հմուտ արտաքին քաղաքականությամբ ջախջա-խում ե ԽՍՀՄ վրա հարձակվելու՝ մեր թշնամիների կողմից ձեռ-նարկվող ամեն մի պրովոկացիոն փորձ:

Մեր կուսակցությունը խաղաղության այնպիսի քաղաքա-

կանություն ե վարում, վորը վոչ միայն զինաթափ ե անում թշնամիներին, խափանում և մասսաների առաջ մերկացնում ե այդ թշնամիների ուղղմական դիտավորությունները, այլ և մի-ենույն ժամանակ իր կողմն ե նվաճում ամբողջ աշխարհի աշխա-տավորների բազմամիլիոն մասսաները: (Ծափահարություններ):

Քվեարկելով հոգուտ այն թեկնածուների, վորոնց պաշտպա-նում ե մեր բոլցեկիյան կուսակցությունը, դուք կրվեարկեք հո-գուտ այն կուսակցության, վորը գտել ե ազգային հարցի ճիշտ լուծումը: Շատ հարյուրամյակներ ու հաղարամյակներ առանձին ազգությունների միջև տեղի յեն ունեցել վեճ ու կոիվ—պայքար գերիշխելու համար—վորը հրահրել են տիրապետող շահագործող գասակարգերը: Խորհրդային իշխանության պայմաններում այդ ազգային հարցը մի անդամ ընդմիշտ լուծվել ե : Այդ հարցը լուծվել ե այն ձեռվ, վոր կամավոր կերպով միացել են այն ազգությունները, վորոնցից կազմված ե մեր մեծ Միությունը, այն ձեռվ, վոր զանազան ազգություններ միատեղ և միահամուռ կերպով աշխատում են սոցիալիստական շինարարության գոր-ծում, այն ձեռվ, վոր այդ ազգությունները միահամուռ և միա-տեղ պաշտպանվում են իմպերիալիստական գիշատիչների հար-ձակումից: Այս միությունից դուրս ամեն մի ազգություն ան-խուսափելիորեն պիտի յենթարկվի իմպերիալիստական ստրկու-թյան:

Այս բոլորից հետո հարց ե ծագում, թե մեր ընտրողները՝ բանվորները, գյուղացիները, ծառայողները, ինտելիգենցիան հիմք ունե՞ն քվեարկելու այն թեկնածուների ոգտին, վոր պաշտ-պանում ե մեր կոմունիստական կուսակցությունը, հիմք ունե՞ն արդյոք մեր ընտրողները կրկին ու կրկին անդամ վատահություն հայտնելու մեր կոմունիստական կուսակցությանը:

Յեկ ամեն մի ընտրող այդ հարցին կպատասխանի՝ այս՝, մենք բոլոր հիմքերն ունենք լենինի—Ստալինի կուսակցությանը և Գերազույն Խորհրդի թեկնածուներին անսահման պաշտպանու-թյուն ցույց տալու: (Ծափահարություններ):

Այդ հիմքերն ունի նաև ամբողջ թուրքմենական ժողովուրդը: Ի՞նչ ե յեղել թուրքմենիան մինչեւ խորհրդային իշխանությունը: Նա ուղղակի ուղական ցարի գաղութն ե յեղել: Թուրքմեններով բնակված հսկայական յերկիրը հանձնված ե յեղել մշտական կո-ղպտմանը վաճառականների ու կուլակների և վոստիկանների ու արբեցող ուղարկված չինովնիկների կամայականությանը: Ի՞նչ ե ներ-կայացնում թուրքմենիան այժմ: Նա հանդիսանում ե ազատա-

գըրված աշխատանքի յերկիր, նա հաջողությամբ գնում է կուլտուրական և տնտեսական ծաղկման ուղիղով, միութենական մյուս հանրապետությունների հետ համընթաց:

Այս յերկիրը, ինչպես և Խորհրդային մեծ Միության ամբողջ ժողովուրդը գնում է համատարած գրադիտության ուղիղով: Այս յերկրում, ինչպես մեր Խորհրդային Միության այլ ժողովուրդների մոտ, այլևս չկա չինովնիկական կամայականություն, այլ կա իր ժողովրդական վարչությունը՝ հանձնն խորհուրդների: Այս ամենը թուրքմենական ժողովուրդը ձեռք է բերել ուստի ժողովրդի հետ դաշնակցած, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ: (Ծափահարություններ):

Սակայն գանվեցին անարդ թշնամիներ—յերկերեսանիներ, արոգկիստական—բուխարինյան դալաճաններ, վորոնք իրենց ստոր ձեռքը բարձրացրին այն բանի վրա, ինչ նվաճված է, ինչ առատորն վողողված և տասնյակ և հարյուրավոր միլիոն մարդկանց արյունով, մարդիկ, վորոնք դարեր շարունակ պայքարել են այն իդեալների համար, վոր այժմ մենք կենսագործել ենք: Նրանք կամենում եյին գործը հետ դարձնել՝ չքաշվելով խորհրդային ժողովրդի ղեմ պայքարելու ամենաստոր մեթոդներ ընտրելուց—սպանություն, վնասարարություն, ոտարերկրյա պետությունների հետախույզների և լրտեսների գերի կատարում:

Այդպիսի թշնամիներ—բուրժուական նացիոնալիստներ—դուրս են յեկել նաև ձեզ մոտ՝ թուրքմենիստայում, մարդիկ, վորոնք սոլոսկել են և դժբախտաբար յերկար ժամանակ չափազանց պատասխանառու խորհրդային ու կուսակցական պոստերում են դտնվել: Այդպիսի թշնամիներ են դուրս յեկել Աթարայևը՝ Այտակովը, Մուլխամմեդովը և ուրիշները: Այդ նրանք են կաղմակերպել բասմաչների շարժումը և բասմաչներին զենք ու պարեն մատակարարել, վորպիսդի թուրքմենական ժողովրդին խանդարեն սոցիալիստական շինարարության վրա աշխատելու: Այդ նրանք են կոլտնտեսություններում և արդյունաբերության մեջ վնասարարություն կատարել, վորպեսզի խանդարեն թուրքմենական ժողովրդին առաջ շարժվելու կուտուրական և անտեսական զարգացման գործում: Այդ նրանք են ոտարերկրյա իմպերիալիստների ու Փաշիստների հետ գործարք կերել թուրքմենիստան ԽՍՀՄ-ից անջատելու նպատակով: Նրանք ցանկացել են այս յերկիրը վերածել Հնդկաստանի ու Ավղանստանի գրության, այսինքն իմպերիալիստների գաղութի: Իսկ վորովհետեւ նրանք դրա համար անզոր եյին, ապա առայժմ հանդես են յեկել Փա-

շխտական հետախույզների ու լրտեսների գերում: Դրանք թուրքմենական ժողովրդի ստոր թշնամիներն են:

Այժմ այդ թշնամիները, վնասարարները, լրտեսներն ու դավաճանները, վորոնք ձեռք եյին բարձրացրել այն գործի վրա, վորը ժողովրդական արյունով և վողողված, մերկացված են և կվոչնչացվեն: (Ծափահարություններ):

Խորհրդային իշխանությունը և մեր բոլցեկիլյան կուսակցությունը վոչ վոքի թույլ չեն տա ձեռք բարձրացնել այն բանի վրա, վոր ժողովուրդը նվաճել է և առատորին վողողված և նրա արյունով: Թող այդ հիշեն մեր բոլոր թշնամիները:

Սակայն, քանի դեռ ԽՍՀՄ շուրջը գոյություն ունի կապիտալիստականների տիրապետությունը, քանի դեռ ԽՍՀՄ ներսում գոյություն ունին վերացված շահագործող դասակարգերի մնացորդները, թշնամիները դեռ բաղմից կիրունեն իրենց քայլացին աշխատանքը տանելու:

Այդ առանձնապես հարկավոր և նկատի ունենալ ձեզ՝ թուրքմենիայի բանվորներին ու բանվորութիւններին, կոլտնտեսականներին և կոլտնտեսութիւններին, կուսակցական ու անկուսակցական աշխատողներին: Թուրքմենիան հատուկ վիճակում և դանիում—նա միշտ ել համեղ պատառ և յեղել ոտարերկրյա կապիտալիստների համար, զբավելով մեր Խորհրդային Միության մեջ սահմանամերձ դրություն: Ըսկերնե՛ր, աչալուրջ յեղեք գեղի թշնամին:

Զի կարելի ասել, թե դեռ չմերկացված թշնամիների մնացորդները, կուլակները, բեկերը և հակախորհրդայնորեն տրամադրված մոլլաները իրենց վոչնչով չեն արտահայտել տեղի ունեցող նախընտրական կամպանիայի մեջ:

Մի բան պարզ է, վոր նրանց անհնար և իրենց թեկնածուներն առաջադրել գերագույն Խորհրդի ընտրության ժամանակ՝ վոչ թե նրա համար, վոր որենքով այդ արգելվում է: Վո՞չ, որենքը իրավունք է տալիս ուղած թեկնածուն առաջադրել, բայց նրանք չեն կարող իրենց թեկնածուներն առաջադրել, վորովհետեւ այդ նրանց թույլ չեն տալիս մեր բանվորներն ու գյուղացիները: (Ծափահարություններ):


Այս պատճառով զրկված լինելով այդպիսի հնարավորությունից, նրանք փորձում են ոգտագործել ամեն տեսակ այլ միջոցներ, վորպեսզի մեր շարքերը չփոթություն մտցնեն: Նրանք տեղ-տեղ կամացուկ փորձում են վատարանել կոմունիստների ու անկուսակցականների բլոկի թեկնածուներին: Նրանք փորձում են ամեն տեսակ լուրերի միջոցով վախեցնել բնակչությանը և

առաջին հերթին կիսագիտակից քաղաքացիներին, վորպեսզի
գոյն նվազեցնեն Գերագույն Խորհրդի ընտրություններին մաս-
նակցողների թիվը: Բայց իրենց այս խղճուկի փորձերով դեռ
չմերկացված թշնամիները ի վիճակի չեն վորեւ բան ձեռք բե-
րել, վորովհետև մեր սոցիալիստական հայրենիքի ամբողջ ժո-
ղովուրդը Գերագույն Խորհրդի թեկնածուներն առաջադրելիս ու
քննարկելիս ցուցաբերած չտեսնված ակտիվությամբ արդեն վո-
րոշակի յեղաբարել իր կամքը, արդեն ասել ե, թե ում ոգտին
ինքը պիտի քվեարկի: Նա ասել ե, վոր պիտի քվեարկի կոմու-
նիստների ու անկուսակցականների բլոկի թեկնածուների ոգտին:
Այդ ժողովուրդը պիտի քվեարկի մեր պանծալի բոլշևիկյան կու-
սակցության անսահման վստահության ոգտին:

Կեցցե՛ մեր հիանալի հայրենիքը — Խորհրդային Սոցիալիս-
տական Հանրապետությունների Միությունը: (Ծափահարու-
թյուններ: Բացականչություններ՝ «ուռա»):

Կեցցե՛ մեր պանծալի բոլշևիկյան կուսակցությունը: (Ծա-
փահարություններ: Բացականչություններ՝ «ուռա»: Նվազա-
խումբը կատարում է «Ինտերնացիոնալ»):

Կեցցե՛ նա, ում ոգտին ուզում են քվեարկել վոչ միայն մեր
մեծ պետության, այլև ամբողջ աշխարհի բոլոր աշխատավոր-
ները: Կեցցե՛ մեր հարազատ: մեծ Ստալինը: (Ծափահարու-
թյուններ: Բացականչություններ՝ «ուռա»: Նվազախումբը կա-
տարում է «Ինտերնացիոնալ»):



Ա. Ի. ՄԻԿՈՅԱՆ

ՃԱՌ ՅԵՐԵՎԱՆԻ ՍՏԱԼԻՆՑԱՆ ԷՆՏՐԱԿԱՆ

ՈԿՐՈՒԳԻ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԺՈՂՈՎՈՒՄ

9 դեկտեմբերի 1937 թ.

Ընկե՛ր ընտրողներ — բանվորներ, բանվորուհիներ, ծառա-
յողներ, մանկավարժներ, բժիշկներ, գիտնականներ — բոլորդ,
վոր այստեղ հանդես յեկաք, վոր իմ հասցեյին ձեր բարեկամա-
կան դպացմունքներն արտահայտեցիք, վոր Ազգությունների Խոր-
հրդի պատգամավորության համար իմ թեկնածությունն առա-
ջադրեցիք, վոր հոգուտ իմ պիտի քվեարկեք, թույլ տվեք այդ
առջիւղ ձեզ բոլորիդ անկեղծորեն չնորհակալություն հայտնել:
Յես չեյի կարող հանդիսա կերպով լսել ձեր գովասանքները,

վոր դուք այնպես ջերմորեն արտահայտում եյիք իմ հասցեյին, յեթե չիմանայի, վոր նրանք առաջին հերթին վերաբերում են և ենինի-Ստալինի մեր մեծ կուսակցությանը:

Ամբողջ Հայաստանում — լեռներում, ձորերում ու հարթավայրերում — և միութենական մյուս հանրապետություններում, ինչպես նաև մեր ամբողջ անձայրածիր յերկրում, նախընտրական ժողովներն ընթանում են վիթխարի վերելքով, հեղափոխական հսկայական կրօպով: Յերկրագնդի վոչ մի յերկիր յերբեք վոչ մի նման բան չի տեսել: Միայն մեզնում, հաղթանակած սոցիալիզմի յերկրում, հասրավոր և գեմոկրատիայի այլպիսի խական համաժողովրդական հաղթանակ, բոլոր ժողովուրդների աշխատավորների այլպիսի անխորստակելի միասնություն բոլցեմիկյան կուսակցության չուրջը: (Բուռն ծափահարություններ: Բացականչություններ տեղերից. «Կեցցե՛ ժողովուրդների ստալինյան բարեկամությունը»):

ԽՍՀՄ բոլոր ժողովուրդների միջև խորհրդային իշխանության տարիների ընթացքում ստեղծված և այնպիսի բարեկամություն, այնպիսի համախմբում, վորակիներն աներեւակայելի յեն բուրժուական վորեն յերկրում: Ահա թե ինչու մեզնում նախընտրական կամպանիան փոխարկվեց անխորի բոլոր աշխատավորների կամքի միասնության, ձգտումների միասնության հզոր ցույցի՝ ընտրելու ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի համար կուսակցական ու անկուսակցական քաղաքացիների կողմից միատեղ առաջարած թեկնածուներին: Ամենուրեք միատեսակ ուժով յերեան և դալիս միենույն ձգտումը՝ իր հայնը տալ նրան, ով նվիրված է հայրենիքին, ժողովրդին, ով գնում է Լենինի-Ստալինի կուսակցության հետեւց: (Յերկարածու ծափահարություններ):

Ժողովողական մասսաների քաղաքական այս չեղած խանդակառությունը, այս իրոք վոր չլսված ակտիվությունն ամենքի՝ անկախ ազգությունից, հասակից ու սեռից, նույնիսկ նրանց, ովքեր առաջներում վոչ մի անգամ իրենց կյանքում ժողովում վոչ մի ճառ չեն արտասանել, իսկ այժմ անդադրում կերպով տրիբունայից հնչում և խորհրդային իշխանությանը նվիրված լինելու նրանց ձայնը, — այս ամենը տեղի յէ ունենում լոկ այն պատճառով, վոր մենք իշխանության գերագույն մարմին ենք ընտրում Ստալինյան Սահմանադրության հիման վրա:

Աշխարհում այդ ամենաղեմոկրատական Սահմանադրությունը խոսում է այն մասին, վոր մի ժամանակ հետամնաց, ամեն

քից մոռացված Ռուսաստանը դարձավ առաջավոր, անհաղթելի, յերբեմնի ագրարային յերկիրը դարձավ սոցիալիզմի հզոր ինդուստրիալ տերություն: Մի ժամանակ նա արորի յերկիր եր, այժմ դարձել է տրակտորի յերկիր: Աղքատ յերկրից փոխարկվել է հարուստ ու առատ յերկիր: մութ, անդրագետ յերկիրը դարձել է ընհանուր կրթության յերկիր, մեքենայական առաջավոր տեխնիկայով զինված յերկիր: Այժմ մեր յերկրում տիրապետում է ազատ ժողովուրդը, վորը զողված է ստալինյան բարեկամության անքակտելի կապերով:

Ստալինյան Սահմանադրությունը հանդիսացավ վորպես ժողովրդական մասսաների վոդկորության և ընդհանուր ձգտման նոր աղբյուր՝ անցկացնելու ընտրությունները կոմունիստների ու անկուսակցականների միասնական բլոկով, նոր զարկ տալու մեր սոցիալիստական մեծ հայրենիքի զորության ամրապնդմանը:

Ո՞ւմ ենք մենք պարտական այն բանի համար, վոր բազմամիլիոն յերկիրը միավորից և դարձավ մի ամբողջական, անհաղթելի պետություն: Մենք պարտական ենք Լենինին, մարդկության մեծագույն հանճարին, վորը վոչ միայն կարողացավ ամենայն հետեղականությամբ կիրառել Ռուսաստանում Մարքսի—Ենդելսի հեղափոխական թեորիան, այլև զարգացրեց, լրացրեց այդ թեորիան պրոլետարական հեղափոխության և ոլորետարիատի դիկտատուրայի վերաբերյալ ուսմունքով: Մենք պարտական ենք Լենինին, վորը ըոլեկիների կուսակցությանը դաստիարակեց ցարիզմի դեմ մղած պայքարում, գլխավորեց Հոկտեմբերյան հեղաշրջումը, ապահովեց հաղթանակը քաղաքացիական պատերազմում և անցումը դեպի քայլայված տնտեսության վերականգնումը:

Մենք պարտական ենք մեծ Ստալինին, վորն այնպես հետեղականորեն շարունակում է Լենինի գործը: (Բուռն ծափահարություններ: Բացականչություններ տեղերից. «Կեցցե՛ մեր սերելի առաջնորդ ընկեր Ստալինը»):

Ընկեր Ստալինը Լենինի դադաղի առջև սրբազն յերդում է տվել՝ բարձր պահել լենինիզմի դրոշը—մինչև վերջը հավատարիմ լինել լենինյան պատգամներին և անդադրում շարունակել լենինի սկսած գործը: Ընկեր Ստալինը սրբությամբ կատարում է իր տված յերդումը: Միայն Լենինի գործը չէ, վոր շարունակում է ընկեր Ստալինը: Անչափ հսկայական և ընկեր Ստալինի յերաշխիքն այն բանում, վոր նա լենինի ուսմունքը

զարգացրեց ու լրացրեց սոցիալիստական հասարակության կառուցման ժամանակաշրջանում:

Մեր Սահմանադրությունը, վոր մշակել ե ընկեր Ստալինը, իր մեջ մարմնավորում ե պղուծարական հեղափոխության բոլոր նվաճումները և հանդիսանում ե վոչ այլ ինչ, բայց յեթե սոցիալիստական հասարակության մասին ստալինյան ուսմունքի շարադրանքը, վոր կծառայի վորպես ուղեցույց աստղ ամբողջ աշխարհի ժողովուրդների համար: (Բուռն ծափահարություններ):

Կատարելով Հոկտեմբերյան հեղափոխությունը, մենք հնարավորություն ունեինք հաշվի առնելու մյուս հեղափոխությունների պատմական դասերը: Սակայն գյուղատնտեսությունը սոցիալիզմի ռելսերի վրա փոխադրելու գործում մենք սովորեցնող չունեյինք: Միայն ընկեր Ստալինը կարողացավ ամբողջ հանձարեղությամբ մշակել գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման և հարյուր-միլիոնանոց գյուղացիությանը կուտնասային կարգի մեջ ներդրավելու թերիքան: Ամենակարճ ժամկետում ձեռք բերել այդպիսի համաշխարհային-պատմական հաղթանակ, վորի մասին յերազել անդամ չեյին կարող մարդկության լավագույն հանձարները, հասնել այն բանին, վոր դարերով մեկուսացած ապրող հարյուր միլիոն գյուղացիները սկսեցին ապրել ու աշխատել սոցիալիստականորեն, հնարավոր յեղակ միմիայն շնորհիվ լենինի հավատարիմ աշակերտի—հանձարեղ Ստալինի: (Յերկարառու բուռն ծափահարություններ, վորոնի վեր են ածվում ովացիայի: «Ուրա» բացականչություններ ընկեր Ստալինի պատվին):

Ընկեր Ստալինը, տեսնելով մեր շուրջը կապիտալիստական շրջապատում, միշտ սրում եր մեր կուսակցության զգոնությունը և մեզ սովորեցնում եր, թե ինչպես պետք ե ճանաչել թշնամուն, ինչպես պետք ե նրա հետ անինսա կերպով հաշիվ տեսնել: Վորպեսզի մեր խորհրդային ժողովուրդը կարողանա հանդիսատ, խաղաղ ապրել ու աշխատել, դրա համար պետք ե ունենալ Կարմիր Բանակ, վորը զինված լինի ռազմական նորագույն տեխնիկայով, ընդունակ լինի ցանկացած ըուպեյին վոչնչացնել թշնամուն հենց նրա տերիտորիայում, յեթե նա համարձակվի իր խոզի դունչը կոխել մեր խորհրդային բանջարանոցը: Այդպիսի բանակ մենք այժմ ունենք: 16 տարի մենք խաղաղ ենք ապրում այն պատճառով, վոր ընկեր Ստալինի ողնությամբ ստեղծված ե լավ կազմակերպված ու զինված Կարմիր Բանակ,

այն պատճառով, վոր մեր կողմից անշեղորեն անց ե կացվում խաղաղության քաղաքականություն: (Ծափահարություններ և վողույնի բացականչություններ ի պատիվ ընկերներ Ստալինի ու Վորոշիլովի):

Մեր բոլոր հոյակապ հաջողություններով մենք պարտական ենք այն բանին, վոր մեր առաջնորդ ընկեր Ստալինը ճիշտ է առաջնորդում Խորհրդային Միության ժողովուրդներին լենինյան աղդային քաղաքականության ուղիղով, վորի հիման վրա նա ծվեն-ծվեն արված, իրար դեմ շարունակ թշնամաբար տրամադրված ժողովուրդներ ունեցող յերկրից ստեղծեց միասնական հոգը սոցիալիստական պետություն—ԽՍՀՄ: (Ծափահարություններ):

Իուսական ցարը աղդային հարցը լուծում եր մտրակով, բանտով, կախաղանով: Դաշնակները՝ հայ ժողովրդի այդ ամենավոխերիմ թշնամիները, աղդային պրոլետը լուծում եյին արյունով ու մահով: Նրանք իրենց իշխանության յերկու տարվա ընթացքում յերկու պատերազմ կազմակերպեցին: Դաշնակների ժամանակ աղդային քաղաքականությունը — գա մի ժողովուրդ մյուսի դեմ գաղանների նման գրղռելն եր: Ահա թե ինչու Հայաստանը գահնակների ժամանակ վորքերի յերկիր եր, արցունքի յերկիր, աղքատության ու վայրենի կամայականության յերկիր:

Միմիայն խորհրդային իշխանությունը բացեց նոր, խակական մարդկային կյանք ծայրերկրյա բոլոր ժողովուրդների համար: Նա առավալեց ճնշողներին: Մեկնում այլևս չկա աղդամիջյան պառակտում: Խորհրդային իշխանությունը չտեսնված ուժով առաջ մղեց բոլոր ժողովուրդների կուլտուրան — ձեռվ աղդային, բովանդակությամբ սոցիալիստական: Իուսական պրոլետարիատի զեկավարությամբ խորհրդային իշխանությունը Խորհրդային Միության բոլոր ժողովուրդներին հաղորդակից գարձրեց նոր սոցիալիստական կյանքին:

Խորհրդային Հայաստանը բոլոր մյուս ժողովուրդներից ավելի պարտական ե խորհրդային իշխանությանը: Այդ իշխանությունը հայ ժողովրդին ովեց վո՛չ միայն պատություն, այլև խաղաղ գոյություն, վորից այդ ժողովուրդն առաջներում զըրկված եր: Հայկական ԽՍՀ զարգանում ե արագ կերպով, նա կարող եր ե՛լ ավելի արագորեն զարգանալ, յեթե նրա զարգացումը չարգելակեյին հայ ժողովրդի թշնամիները — գաշնակները, սրոցկիստական-բուխարինյան վնասարարները, վորոնց բունը

Հիմնականում արդեն ջախջախված է: (Բուռն ծափահարություններ: «Ռուա» բացականչություններ ի պատիվ ընկեր Միկոյանի):

Հնկերնե՛ր: Դեկտեմբերի 12-ին, ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունների պատմական որը, հայ ժողովուրդը կցուցազրի իր անսահման նվիրվածությունը Լենինի—Ստալինի մեծ կուսակցությանը: Մենք բոլոր հիմքերն ունենք հուսալու, վոր Խորհրդային Հայաստանի ընտրողները, բոլորը, վորպես մի մարդ, իրենց ձայնը կտան լենինյան կուսակցության անդամներին և անկուսակցական թեկնածուներին, վորոնց թեկնածությունը համերաշխորեն դրված ե կոմունիստների և անկուսակցականների բլոկի անունից:

Դեկտեմբերի 12-ին Հայաստանի յուրաքանչյուր ընտրող պետք է գա ընտրական տուժերի մոտ, վորպեսզի կատարի իր քաղաքացիական մեծ պարուղը — ընտրել խորհրդային իշխանության գերագույն որդան:

Կեցցե՛ կոմունիստների ու անկուսակցականների դաշինքը առաջիկա ընտրություններում:

Կեցցե՛ մեր առաջնորդ, ուսուցիչ և բարեկամ մեծ Ստալինը: (Ամենի վոտի յեն կանգնում: Դակիինը բուռն ովացիա յե սարդում: Տեղերից հեջում են բացականչություններ. «Կեցցե՛ պատգամավորության մեր թեկնածու ընկեր Շիհուանը և ժայռուրդների սիրելի առաջնորդ ընկեր Ստալինը»):

Վ Ր Ւ Պ Ա Կ

Եջ 140-ը պետք է լինի 111 և շաբունակաբար մինչեւ վերջը:

բագույն որդանի ընտրություններին կնքված և կուսակցության և անկուսակցականների միջև, չկա և չի կարող լինել կապիտալիստական վորևէ յերկրում։ Միայն բոլշևիկյան կուսակցությունը, վոր կազմակերպել և սոցիալիզմի հաղթանակը, իր շուրջն և միավորել խորհրդային ժողովուրդը, վատահորեն հաղթանակից հաղթանակ և տանում Խորհրդային պետությունը, միայն մեր կուսակցությունը կարող եր դնել կոմունիստների և անկուսակցականների բլոկի, դաշինքի հարցը, վորովհետև մեր կուսակցությունն և իսկապես հանդիսանում մեր բազմամիլիոն ամբողջ ժողովրդին վոգեչնչովը և նրա կարծիքների, շահերի, կարիքների, ակնկալությունների և հույսերի արտահայտիչը։ (Ծափահարություններ, վորոնե փոխարկվում են ովացիայի։ «Ուռա» բացականչություններ։ Բացականչություն՝ «Մեր կուսակցության կենտրոնական կոմիտեյին ուռա»)։

Ընկերներ, սոցիալիզմի հաղթանակի համար մեր լենինյանստալինյան կուսակցության մղած մեծ պայքարի բոլոր ետապներում մենք պայքարել ենք բանվորների ու դյուզացիների դաշինքն ամբապնդելու համար, պայքարել ենք կոմունիստների և բանվորների ու դյուզացիների դաշինքն ամբապնդելու համար, կուսակցության շուրջը քաղաքի ու դյուզի աշխատավորների ամբողջ մասսան համախմբելու համար։ Յեկ մենք մոտեցանք, վերջապես, մի այնպիսի մոմենտի, —և դրանումն և մեր կուսակցության մեծադույն ուրախությունն ու յերջանկությունը, —յերբ կոմունիստների ու անկուսակցականների դաշինքը Խորհրդային պետության գերազույն որդանի ընտրությունների հիմքն և կազմում, յերբ կոմունիստների ու անկուսակցականների այդ դաշինքը սոցիալիզմը մեր յերկրում ամբապնդելու, քաղաքի և դյուզի աշխատավոր մասսաների նյութական և կուլտուրական դրությունը բարելավելու ամբողջ աշխատանքի հիմքն և։ (Ծափահարություններ)։

Վորպեսզի այդ դաշինքն ամբանար և դառնար ընտրությունների հիմք, հարկավոր եր հասնել սոցիալիզմի հաղթանակին։ Մարդկության պատմության մեջ առաջին անդամ իրականացվել է նոր, սոցիալիստական պետություն կառուցելու մեծադույն խնդիրը։ Մենք ստեղծել ենք նոր, խորհրդային ժողովուրդը, վոր շահագործման լուծ չի ճանաչում։ Մեր յերկրում չկան շահագործող դասակարգեր, չկան գիշատիչներ ու ձնշողներ, չկան բանվոր դասակարգն ու դյուզացիությունը ստրկացնողներ։ Բան-

վաբները և գյուղացիները—մեր յերկրի տերերը—միասնական նպատակով են միավորված՝ իրենց համար, սոցիալիստական հայրենիքի բարիքի համար կատարվող աշխատանքով։ Այդ ընդհանուր շահերը, սոցիալիստական հայրենիքի բարիքի համար կատարվող ընդհանուր աշխատանքն ել հենց հանդիսանում են խօրհըրդային ժողովրդի քաղաքական և բարոյական այն միասնության հիմքը, վոր նվաճված և ժողովրդի թշնամիների գեմ մղվող պայքարում և վորը սոցիալիզմի հաղթանակի արդյունքն ե հանդիսանում։ (Ծափահարություններ)։

Կոմունիստների և անկուսակցականների անխախտ դաշինքը մեզանում, ընկերներ՝, ինքը կյանքն և ստեղծել, վորովհետև կոմունիստները և անկուսակցականները, մեր հայրենիքի աշխատավորները չունեն ուրիշ շահ, քան մեր խորհրդային հայրենիքի հետադա ամբապնդման, մեր ինդուստրիայի հետադա աճման, կոլտնտեսությունների հետադա ծաղկման և Խորհրդային Միության բոլոր քաղաքացիների համար յերջանիկ, ունեու և կուլտուրական կյանքի աճման շահերը։ Ընտրություններին կոմունիստների և անկուսակցականների դաշինքը Ստալինյան Սահմանադրության, խորհուրդների իշխանության հաղթանակի և ամրապնդման, Լենինի—Ստալինի կուսակցության հաղթանակի ուղղակի արդյունքն է։

Մեր ժողովրդի միասնությունը մենք պարտական ենք նրան, ով մեր ժողովրդին վոգեչնչում և նորանոր հաղթանակների համար, նրան, ում անունը մեր նվաճումների սիմբոլն ու նշանն ե, —մեր թանգաղին ընկեր Ստալինին։ (Բուռն, յերկար ժամանակ շլոսդ ծափահարություններ։ «Ուռա» բացականչություններ)։

Ընկերներ։ Դեռ Մարքսն եր ուսուցանում, թե գաղափարներն ուժ են դառնում, յերբ տիրում են մասսաներին։ Մեր կուսակցության գաղափարները—և դրանում լլովին ու ամբողջությամբ արդարացան և իրականացան Մարքսի մարդարեական խոսքերը—մեր կուսակցության գաղափարները դարձան տանյակ-միլիոնավոր մարդկանց գաղափարները, դարձան մասսաների սեփականություն։ Մենք մեր նոր, յերջանիկ կյանքը կերտում ենք կուսակցականներն անկուսակցականներից չառանձնացած։ Կոմունիստներին անկուսակցականների հետ մեր կյանքը կերտում են միահամուռ կերպով, և մեր հաղթանակների պտուղներն ել մենք բաժանում ենք միասին և միահամուռ կերպով, վորովհետև զբանք միայն մեր կուսակցության հաղ-

թանակները չեն, այլ գրանք մեր ընդհանուր հաղթանակներն Անդ ընկերներ։ (Բուռն ծափահարություններ) :

Կոմունիստների և անկուսակցականների դաշինքը, յերկու միջիոն կոմունիստների և 90 միջոն անկուսակցական ընտրողների դաշինքը մեր յերկրում մեզ հարկավոր է սոցիալիզմի հետադահաղթանակների համար, մեր սոցիալիստական ինդուստրիայի հետագա ամրապնդման համար, մեր կոլտնտեսային կարգերի հետագա ծաղկման և ամրապնդման համար, նրա համար, վորպեսզի մեր ժողովուրդն առմիշտ ազատվի շահագործման լծից, նրա համար, վորպեսզի մեր կինը միշտ լինի ազատ և լիիրավ, նրա համար, վորպեսզի մեր յերեխաները լինեն յերջանիկ ու ազատ։ (Բուռն ծափահարություններ) :

Մեր յերկրի կոմունիստների և անկուսակցական ընտրողների դաշինքը մեզ նրա համար և հարկավոր, վորպեսզի Խորհրդային Միության ժողովուրդներն ապրեն հավիտենական բարեկամության, յերջանկության և բարորության մեջ, վորպեսզի աշխատանքի իրավունքը, կրթության իրավունքը, յերջանիկ կյանքի իրավունքը միշտ ժողովրդի անկապտելի սեփականությունը։ (Բուռն ծափահարություններ) :

Ընկերներ, ձեզ հայտնի յե՛, վոր սոցիալիզմի կառուցման գործը մենք առայժմ մենակ ենք տանում։ Մենք աշխարհում միակ սոցիալիստական յերկիրն ենք։ Մենք ըշջապատված ենք կապիտալիստական պետություններով։ Դուք գիտեք, թե խորհրդային իշխանությունը և մեր բոլցերի կուսակցությունը ինչ ջանքեր են գործադրել՝ Խորհրդային Միության քաղաքացիների խաղաղ աշխատանքը պաշտպանելու։ Մենք միշտ խաղաղության կողմն ենք յեղել, բայց թշնամիներն աշխատել են վիժեցնել այդ խաղաղությունը, վորովհետեւ Խորհրդային պետության թշնամիների համար խորհրդային իշխանության գոյությունը միշտ ել վտանգավոր ուժ և յեղել։ Թշնամիները հասկանում են, վոր սոցիալիստական սխառմի և կապիտալիստականի մրցակցության մեջ հաղթանակը սոցիալիզմինը կլինի։ (Ծափահարություններ)։ Այսուղից ել՝ Խորհրդային Միության թշնամիների գաղանային առելությունը դեպի բանվորների և գյուղացիների պետությունը։

Հենց խորհրդային իշխանության առաջին քայլերից մեզ վիճակից մեծագույն ջանքերի գնով պաշտպանել խաղաղությունը։ Մենք մեր յերկիրը պաշտպանեցինք ինտերվենտներից։ Մեր հայրենիքը միքանի անդամ մազից և կախված յեղել ուղարկան նոր

ընէհարման անմիջական սպառնալիքից։ Միայն խորհրդային իշխանության և կոմունիստական կուսակցության հետեւղական, իմաստուն և հեռատես քաղաքականության չնորհիվ, ընկեր Ստալինի չնորհիվ, վոր ամբողջովին տեսնում ե թշնամիների բոլոր մտադրությունները (բուռն ծափահարություններ), բոլոր վատի յեն կանգնում), վոր կարողանում է բանալ խորհրդային իշխանությանը թշնամի կապիտալիստական պետությունների ամենախորամանկ, ամենասրբամիտ կոմբինացիաների վոլորքը, կանխագուշակել նրանց հարավոր յելույթներն ու գործողությունները և իրեն հատուկ խորաթափանցությամբ և հեռատեսությամբ Խորհրդային պետությունից հետ և մզում կապիտալիստական պետությունների կողմից հնարավոր հարվածները, միայն դրա չնորհիվ մենք 16 տարվա ընթացքում հնարավորություն ենք ունեցել ազատվելու ռազմական ընդհարումներից և ազահովելու մեր խաղաղ աշխատանքը։

Մեր գլխավոր թշնամիներն են ռեակցիոն-Փաշխատական կապիտալիստական սիմառությունները։ Նրանք պատերազմ են պատրաստում ԽՍՀՄ ղեմ։ Նրանց ազենտները մեր յերկրում հանդիսանում են արցոցկիստ-բուլարինյան անարդ լրտեսները, դիվերսանտները, տեղորիսատները և հետախուռդները։ Նրանք դիմում են ամենազգրելի հանցագործությունների, վորպեսզի խախտեն ԽՍՀՄ հզորությունը և բանվորներին ու գյուղացիներին մի վատություն անեն։ Խորհրդային իշխանությունն արդեն խորտակիչ հարված հասցրել ե այդ ապականությանը։ Նրանց վերջնականապես կջնջենք խորհրդային հողի յերեսից։ (Ծափահարություններ)։

Յերեք հիմնական ուժ կա, վորոնք մեզ ապահովում են զրահ հարձակումներից։ Առաջին ուժը—զա մեր հզոր, ժողովրդին նվիրված խորհրդային հետախուռդությունն ե, մեր պատճիչ որդանները։ (Ծափահարություններ)։

Յերկրորդ ուժը—զա նոր տեխնիկայով հազեցված և լազ կազմակերպված, Խորհրդային պետության թշնամիների համար սարսափելի, մեր սիրելի և հարազատ Բանվորագյուղացիական Կարմիր Բանակն ե։ (Բուռն ծափահարություններ)։

Յերրորդ ուժը—զա Խորհրդային պետության իմաստուն, փորձական և հեռատես խաղաղասեր քաղաքականությունն ե։ Յեղիթ Փաշխատական սեակցիան պետությունները յերեկ համար գակլեն փորձել մեր հայրենիքի սահմանների ամրությունը, ապա

Նբանք խորհրդային ժողովրդի մոտ պայքարի այնպիսի միջոցների կհանդիպեն, վորապիսիք լիովին բավարար կլինեն Փաշխտական բանդաները բոլորովին ջախջախելու համար: (Բուռն ծավահարություններ):

Այսպես և ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրություններին կոմունիստաների և անկուսակցականների բլոկի խնդիրների բանը: Բոլցեկների կուսակցությունը հավատացած է, վոր լիակատար հաղթանակ են տանելու բլոկի թեկնածուները: (Ծափակարաւոյններ):

Յերկու որ հետո մեր յերկրի աշխատավորները կնրթան քվեատութերի մոտ: Մեր կուսակցության լոգունդն ե՝ բոլոր դեպի ընտրությունները: Յեթե ընտրություններին գան նաև թշնամիները, իսկ նրանք կղան, վորովհետեւ մենք ունենք ընդհանուր ուղղակի, հավասար ընտրական իրավունք գաղտնի քվեարկությամբ, ապա մեր խնդիրը, կոմունիստաների և անկուսակցականների բլոկի խնդիրը—նրանումն ե, վոր մեր կազմակերպվածությամբ թշնամիներին խղճուկ միայնակության մեջ, լիակատար մեկուսացման մեջ:

Ընկերներ: Աշխատավոր մարդու յուրաքանչյուր ձայնը ընտրություններին կարեոր է, վորովհետեւ յուրաքանչյուր ձայն ժողովրդական այն միասնության մի մասն է, վորը թշնամիների համար ահեղ ուժ և և խորհրդային իշխանության բոլոր բարեկամների համար հղոր մի պատվար:

Ստալինյան Սահմանադրությունը գործի յերկած: Ներկա ժողովը Ստալինյան Սահմանադրության կենդանի մարմնավորումըն է: Այստեղ հավաքվել են Վոլոգարսկի ոկրուգի ընտրողները: Այստեղ ներկա յեն տասնութամյա կոմյերիտականներ և կոմյերիտուհիներ, վորոնք, մեր ընտրական որենքի համաձայն, մեր յերկրի լիբրավ քաղաքացիներն են. այստեղ մենք տեսնում ենք զանազան ազգությունների ներկայացուցիչներ: այստեղ մենք տեսնում ենք ազատագրված լիբրավ կնոջը: Ստալինյան Սահմանադրությունն արդեն դարձել է աշխատավոր մասսաները Լենինի-Ստալինի կուսակցության շուրջը համախմբելու միջոց, վորը բանվորներին և գյուղացիներին վոգեռում և նոր հաղթանակներ տանելու:

Ընկերներ: Ամենքը գիտեն, թե մեր յերկրի համար ինչ և լենինդրագը՝ արդյունաբերական և կուտարական մի խոշորագույն կենտրոն, Խորհրդային Միության հյուսիս-արևմտյան

սահմանի առաջավոր Փորպոստը: Լենինդրագը աշխատավորները հատուկ պատասխանատվություն են կրում մեր հայրենիքի առջև: Համերաշխորեն, մեկ մարդու պես, դեկտեմբերի 12-ին դուրս գտնվ ընտրությունների և ցույց տանք, վոր լենինդրագը ու իր աշխատավորները լավ են գիտակցում իրենց խնդիրներն ու պատասխանատվությունը, ինչպես սոցիալիստական հայրենիքի և մեր բոլցեկիյան կուսակցության առաջավոր, անխորտակելի պատվարը: (Բուռն ծափահարություններ):

Թող Սերդեյ Միրոնովիչ Կիրովի լուսավոր պատկերը, վորն ընկալ անարդ դավաճանների, լրտեսների և հետախուզների, բանվոր դասակարգի խեղդիչների ստոր ձեռքով, թողայդ լուսավոր դեմքը վոգեշնչի լենինդրագը աշխատավորներին և մեր յերկրի բոլոր աշխատավորներին նոր հաղթանակների, նոր նվաճումների և միշտ լինի թշնամիներին անողոքաբար ջախջախելու, կոմունիզմի վերջնական հաղթանակի համար պայքարելու կոչ:

Կեցցե՛ մեր խորհրդային մեծ ժողովուրդը:

Կեցցե՛ն լենինդրագը աշխատավորները:

Կեցցե՛ կոմունիստաների և անկուսակցականների բլոկը Կերագույն Խորհրդի առաջիկա ընտրություններին:

Կեցցե՛ բոլցեկների կուսակցությունը:

Կեցցե՛ մեր մեծ Ստալինը: (Բուռն, յերկար ժամանակ չլուսափակարություններ, վորոնք վերածվում են ովացիայի):

ՃԱՌ ԼԵՆԻՆԻ ԱՆՎԱՆ ԿՈՒՆՑՈՒՐԱՅԻ ՏԱՆՅ
ԿԱՅԱՑԱԾ ՄԻՏԻՆԳՈՒԹՅՈՒՆ

1937 թ. գեկտեմբերի 10-ին

Ընկերներ, թույլ տվեք ինձ խորին չնորհակալություն հայտնել Վոլոգարսկի ընտրական ոկրուգի աշխատավորներին այն բարձր վստահության և պատմի համար, վոր նրանք ինձ ցույց տվին՝ իմ թեկնածությունն առաջադրելով ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի պատվամակոր լինելու համար: (Բուռն ծափահարություններ):

Յես առանձնապես հպարտանում եմ, վոր ինձ յերջանկություն վիճակվեց լենինի մեծ քաղաքում քվեարկվելու, նրա կողողարսկի առաջավոր ընտրական ոկրուգի կողմից, վորտեղ

քիչ ձեռնարկություններ չկան մարտական փառավոր տրադի-
ցիաներով, պիտերյան հեղափոխական պրոլետարիատի տրադի-
ցիաներով: (Բուռն ծափահարություններ):

Ընկերնե՛ր, այստեղ այնքան շատ գովասանական խոսքեր
ասվեցին իմ հասցեյին, վոր նույնիսկ յես ինձ չեմ ճանաչում: (Ծափահարություններ, ծիծառ): Այն, ինչ այստեղ խոսվեց իմ
ծառայությունների մասին, —վորոնք մեծ չեն, —և այն վստահու-
թյունը, վոր այստեղ արվեց ինձ իբրև Գերազույն Խորհրդի
պատգամագորության թեկնածուի, յես ամենից առաջ և ամենից
շուրջ վերադրում եմ աշխատավորների վստահությանը դեպի մեր
մեծ կուսակցությունը, վորի վորդին եմ յես, —Լենինի-Ստա-
լինի կուսակցությունը: (Բուռն ովացիաններ: Բացականչու-
թյուններ՝ «Ընկեր Ստալինին ուսում»):

Այն վստահությունը, վոր ինձ ցույց ե արված Գերազույն
Խորհրդի անդամության իմ թեկնածությունն առաջադրելով,
յես կաշխատեմ արդարացնել իմ հետագա աշխատանքի մեջ և
պարտավորվում եմ ե՛լ ավելի համառ և հաստատակամորեն
աշխատել իբրև մեր կուսակցության վորդի՝ ի շահ ժողովրդի:
(Բուռն ծափահարություններ):

Ընկերնե՛ր, վաղը չե մյուս որվա՝ Գերազույն Խորհրդի
ընտրությունները մեծ տոնի որ և ԽՍՀՄ բոլոր ժողովուրդների
աշխատավորների՝ բոլեսիկյան կուսակցության շուրջը միանա-
լու ցույց կլինեն:

Խորհրդային Միության ընտրական ոլորուղներում կոմու-
նիստների և անկուսակցականների բլոկի առաջադրած բոլոր
թեկնածուները, մեր կուսակցությանը և խորհրդային իշխանու-
թյանը նվիրված արժանավոր մարդիկ են հանդիսանում: Զայն
տալով կոմունիստների և անկուսակցականների բլոկի թեկնա-
ծուների ոգտին, ժողովուրդը նրանց ոգտին ձայն կտա ամենից
առաջ իբրև մեր կուսակցության քաղաքականությանը, խոր-
հրդային իշխանության քաղաքականությանը, մեր բազմամիլիոն
ժողովրդի քաղաքականությանը հավատարմորեն և հետեռ-
զարար կենսագործողների ոգտին:

Ընկերնե՛ր, մեր իրավակարդի առանձնահատկությունը,
ինչպես այդ մասին ասում ե մեր կուսակցության կենտրոնական
կոմիտեյի Դիմումը, նրանումն ե, վոր նա, խորհրդային իրա-
վակարդը, ապահովում ե մարդկանց, նրանց ընդունակություն-
ների, նրանց տաղանդների արագ աճումը: Դեռ յերեկ քիչ

հայտնի մարդիկ կարձ ժամանակի ընթացքում դառնում էն
ընդհանուր հարդանքի արժանի հանրածանոթ գործիչներ: Ահա
թե ինչու, աստիճաններից գուրս, դրությունից գուրս, գրաված
պոստից գուրս, Գերազույն Խորհրդի պատգամագորության մեր
բոլոր թեկնածուները վայելում են կոմունիստների և անկու-
սակցականների բլոկի պաշտպանությունը և արժանի յեն ժողո-
վրդի վստահությանը:

Խորհրդային իրավակարդը, ընկերնե՛ր, նրանով ե նշանա-
վոր, վոր նրանում «ավելորդ մարդիկ» չկան: Յես հիշում եմ
Գորկու յերկերը, վորը վարպետորեն նկարագրում եր հին կյան-
քը: Նրա հայտնի «Հատակում» պիեսում հերոսներից մեկը,
կապիտալիստական կարգերի կողմից հունից գուրս չպրաված
մեկը, դժբախտության իր ընկերուհուն ասում ե. «Դու ամեն
տեղ ավելորդ ես... և հենց աշխարհի բոլոր մարդիկ ավելորդ
են...»: Այդ անհծված անցյալը, վորեղ աշխատավոր մարդ-
կանց վիճակիում եր իրենց ավելորդ համարել, հավիտենակա-
նության գիրկն ե ընկել:

Խորհրդային իրավակարդի առանձնահատկությունն այն ե,
վոր նրանում ավելորդ մարդիկ չկան: ԽՍՀՄ մեջ յուրաքանչյուր
վոր սոցիալիստական կապիտալ ե, մեր սոցիալիստա-
կան հասարակության հիմնական արժեքը: Խորհրդային յերկերը
յուրաքանչյուր մարդու համար ապահովում ե աշխատանքի և
յերջանիկ, ուրախ կյանքի իրավունքը:

Խորհրդային յերկերը շահագրգռված ե, վոր իր մեջ տա-
րեցտարի բազմապատկերի բնակչության քանակը և վոր ԽՍՀՄ
մեջ ապրի վոչ թե 170 և վոչ ել 180 միլիոն մարդ, այլ, յենթա-
դրենք, մի 100 միլիոնով ավելի: (Բուռն ծափահարություններ
և ուրախ հավանություն ամբողջ դահլիճի կողմից): Խորհրդա-
յին հողի վրա, խորհրդային արեկի տակ տեղ կդանիլի յուրաքան-
չյուր աշխատավորի համար:

Ընկերնե՛ր, դեկտեմբերի 12-ին Խորհրդային Միության աշ-
խատավորները կտան մեր հաղթանակների հանրագումարը, բոլ-
շևիկյան կուսակցության քաղաքականության հանրագումարը:

Դեկտեմբերի 12-ին գործի կգցիլի ԽՍՀՄ Սահմանադրու-
թյան, սոցիալիստական դեմոկրատիզմի Սահմանադրության
սահմանած ընտրական սիստեմը:

ԽՍՀՄ Սահմանադրությունը մեր դարաշրջանի յերեկի դո-
կումենտն ե, վորի մեջ արտացոլված են սոցիալիզմի նվաճում-

ները, գրանցված են ծանր պայքարում աշխատավորների նվաճած իրավունքները:

Սահմանադրությունը կյանք և առել մեր յերկրում: Հենց այս ժողովը, վորտեղ ներկա յեն թե՛ յերիտասարդ ընտրողներ, թե՛ կանայք, ԽՍՀՄ լիիբավ ու ազատ քաղաքացուների մարդիկ, ցույց ե տալիս այդ: Իուրժուազիայի տիրապետության որով սրանք բոլորը դրկված կլինելին քաղաքցիական իրավունքներից:

Խորհրդային յերկիրը, հաղթանակած սոցիալիզմի յերկիրը, աշխարհում ամենազեմոկրատական Սահմանադրությունն ունի վորի մասին Խորհրդային Միության սահմաններից այն կողմն ապրող մարդիկ յերազել միայն կարող են: Կապիտալիստական յերկրներում գեմոկրատիան իրենից ներկայացնում ե թղթի մի կտոր—այնտեղ գեմոկրատիան հարուստների համար և, և այնտեղ բանվորների իրավունքը նրանումն ե, վոր չորս տարին մեկ անգամ նրանք կարող են ձայն տալ ֆարբեկանտների, գործարանատերերի, կալվածատերերի, միլիարդատերերի ոգտին. այնտեղ իշխանությունը կապիտալի ձեռքին ե գտնվում, այնտեղ հասարակական ամբողջ կյանքը փողի պարկն ե կառավարում,—հետեւաբար, այնտեղ չի կարող լինել խկական ազատություն, հավասարություն և յերեայրություն:

Միայն ԽՍՀՄ մեջ, սոցիալիզմի հաղթանակների հիմայ վրա, աշխատավորներն ոգտում են բոլոր իրավունքներից, նույն թվում ամենազեմոկրատական ընտրական իրավունքից, վորը մենք գեկտեմբերի 12-ին կերթանք իրականացնելու: (Բառը, յերկար ժամանակ չլուղ ծափահարություններ):

Բուրժուական կուսակցությունները, հանդես գալով ընտրություններին, աշխատավորներին կերպում են գեկարացիաներով և խոստումներով, գրոշի արժեք ունեցող դատարկ թղթերով, վորովհետեւ նրանք, այդ գեկարացիաներն ու խոստումները, հետ են վերցվում հենց նույն որը, յերբ բուրժուական այս կամ այն կուսակցությունը մեծամասնություն է ստանում ընտրություններին: Այդ ե խարեյության, ստի և կեղծավորության վրա հիմնված բուրժուական պառլամենտարիզմի եյտթյունը:

Խկակես ժողովրդական կուսակցություն հանդիսանում է միայն մեր կուսակցությունը, բոլցեկլյան կուսակցությունը, վոր իր մեջ ե ծծել բանվոր դասակարգի լավագույն մարդկանց,

պայքարի ու շինարարության յերկար տարիներով սերտորեն կապված ե բանվոր դասակարգի հետ, մի կուսակցություն, վորը մեր յերկրում աշխատավորների համար ապահովել ե սոցիալիստական յերշանիկ կյանք, խկական ժողովրդական կուսակցություն ե հանդիսանում:

Նա իր ամբողջ եյտթյամբ կապված է ժողովրդի, նրա կյանքի, նրա աշխատանքի հետ:

Բոլցեկլյան կուսակցությունը զինված է ամենաառաջավոր ուսմունքով՝ Մարքսի—Ենդելսի—Լենինի—Ստալինի ուսմունքով: Այդ ուսմունքը մարմնավորված ե մեր յերկրում, հաղթանակած սոցիալիզմի յերկրում:

Բոլցեկլիների խոսքը գործից յերբեք չի տարբերվում: Նրանք միշտ ել իրենց լողունգներն ու ծրագիրը խկական կյանք են դարձնում: Ահա՝ թե ինչումն ե լենինի—Ստալինի կուսակցության ուժը: (Ծափահարություններ: Բացականչություններ. «Ուռա», «Կեցցե՛ բոլցեկլյան կուսակցությունը», «Կեցցե՛ մեր առաջին թեկնածու իսկի վկասարիոնվիչ Ստալինը»):

Լենինի—Ստալինի կուսակցությունը միշտ ել պայքարել բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքն ամրապնդելու համար, կոմունիստների և անկուսակցական բանվորների, պատկանական գյուղացիների ու աշխատավոր ինտելիգենցիայի դաշինքն ամրապնդելու համար:

Գերազույն Խորհրդի ընտրություններին կոմունիստների և անկուսակցականների սերտ բլոկը մեր խորհրդային ժողովրդի միասնության արտահայտությունն է: Բարոյական և քաղաքական միասնության մեջ ե խորհրդային ժողովրդի հզորության գաղտնիքը: Իր հզորությունն ու վեհությունը, կուսակցությանը տածած իր վատահությունը խորհրդային ժողովրդը մարմնավորել ե մի անվան մեջ, վորը մի ջահ և ամբողջ աշխատավոր մարդկության համար, մեր առաջնորդ և ուսուցիչ ընկեր Ստալինի անվան մեջ: (Բառն ոլացիա: Բացականչություններ. «Ուռա», «Կեցցե՛ ընկեր Ստալինը»):

Ընկեր Ստալինը ստախանովականների համամիութենական խորհրդակցության արտասանած ճառում նշեց մեր հեղափոխության տարերիչ առանձնահատկությունը: Նա ասաց, վոր մեր հեղափոխությունը միակն ե, վորը շուշ միայն փշրել ե կապիտալիզմի կապանքները և ժողովրդին ազատություն տվել, այլ գեռ կարողացել ե ժողովրդին ունեսը կյանքի նյութական պայ-

մաներ տալ: Սրանումն և մեր հեղափոխության ուժն ու անպարտելիությունը:

Այդ բարիքներն աշխատավորները վայելում են և կվայելեն ավելի ու ավելի մեծ չափով, վորովհետև սոցիալիզմի հաղթանակը խորհրդային ժողովրդի նյութական և կուլտուրական պահանջմանըներն ավելի ու ավելի բավարարելու հնարավորություններ են տալիս:

Այդ ամենը մեզ ձրիաբար չի տրվել: Դրա համար պահանջվել և պաշտպանել ու ամրապնդել խորհրդային իշխանությունը, ջախչախիսել ինտերվենտների հրոսակախմբերը, ջարդուիչուր անել ժողովրդի բազմաթիվ թշնամիներին, վորոնք փորձել են մեզ հետ տանել դեպի կապիտալիզմը: Պահանջվել է ստալինյան կամքն ու վճռականությունը, վորպեսզի գրոհենք կապիտալիստական տարրերին և վոչչացնենք շահագործող դասակարգերը ԽՍՀՄ մեջ: Պահանջվել են ստալինյան յերկու հնդամյակ, բանվոր դասակարգի և բոլոր աշխատավորների լարված պայքարի տարբեր, վորպեսզի սոցիալիստական հզոր ինդուստրիա ստեղծենք, վորպեսզի սոցիալիստական ձևով վերաշխնենք անհատական գյուղացիական մանր տնտեսությունները, ստեղծենք ու ամրապնդենք կոլտնտեսային կարգերը, վորպեսզի մեր յերկրի բազմամիլիոն ժողովուրդներին համախմբենք Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների միասնական Միության մեջ, վորպեսզի մեր ազատությունն ու անկախությունը ապահովենք գործություններից:

Մեծ ջանքեր են պահանջվել սոցիալիստական շինարարության բոլոր տեղամասերում, վորպեսզի մեր յերկիրը 1937 թ. դեկտեմբերի 12-ին դա ինչպես սոցիալիստական հզոր մի տերություն, ինչպես մի յերկիր, վոր գորություն ունի ինչպիսի մեքնաներ և արտադրության գործիքներ առես արտադրելու, ինչպես մի յերկիր, վորտեղ կոլտնտեսային կարգերը հաղթանակել են ընդմիշտ և անվերագրած, ինչպես մի յերկիր, վորն աշխատավորների համար յերջանիկ, ուրախ կյանք և ապահովել:

Մենք ուժեղ ենք: Մենք ունենք քաջարի, փառապանծ Բանվորա-Գյուղացիական կարմիր Բանակ, աշխարհում լավագույն բանակը, վոր հիանալի հաղեցված և ուղղմական ամենաժամանակակից տեխնիկայով:

Այս և ստալինյան յերկու հնդամյակների հանրագումարը,

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխության 20 տարիների հանրագումարը:

Մենք այժմ սմեն ինչ ունենք, վորպեսզի ե'լ ավելի արագ առաջ շարժվենք, ե'լ ավելի վեր բարձրացնենք կուլտուրան, ունակությունը, արվեստը, ե'լ ավելի լրիվ բանանք սոցիալիստական նոր կարգերի հրաշալի հատկությունները:

Այժմ մեր գլխավոր թշնամիներ հանդիսանում են Փաշխտական կամ կապիտալիստական ուսակցիոն պետությունները, վորոնք մեր յերկիրն են ուղարկում և իբրև լրտեսներ ոգտագործում դարձելու հերկիրն սուղարկություններին, ոիկովականներին, բուխարինութիւն ու զգելի արոցկիստներին: Այդ անարդ այլասերվածները վաճառվել են կապիտականներին: Այդ անարդ այլասերվածների վաճառվել են դրեւ վերականգնել կապիտալիստական ստրկությունը մեր յերկրում:

Մենք պաշտպանել ենք խաղաղությունը և մեր յերկրում ահա արդեն 16 տարվա ընթացքում ապահովել խաղաղ աղառաշխատանքը, կիրառելով արտաքին խաղաղասեր քաղաքականություն: Մենք այսուհետև ել կապահանջմանք խաղաղության գործունեություն:

Ի՞նչ և հարկավոր գրա համար:

Դրա համար հարկավոր և ջարդել թշնամիներին ներսում, վորպեսզի մեր յերկրում չմնա վոչչացնենք մի լրտես, զիվերսանա և տեռորիստ, ճապոն-գերմանական Փաշխմի լրտես, վորպեսզի նրանց ջնջենք յերկրի յերեսից, վորպեսզի նրանք չապականեն նրանց ջնջենք յերկրի յերեսից, վորպեսզի նրանք չապականեն նրանց ջնջենք յերկրի յերեսից, վորպեսզի մեր յերկրի աշխատավոր մարդը կարողամիներին, վորպեսզի մեր յերկրի աշխատավոր մարդը կարողանալի կարուցել առանց հետ նայելու և յերկյուղ կրելու, թե թշնամիները կարող են դանակ խրել նրա թիկունքը: Այս և խորհրդացին իշխանության և կոմունիստական կուսակցության խոնդիրը: Յեզ այդ խոնդիրը խորհրդացին իշխանությունը և մեր կուսակցությունը հաջող կերպով լրտծում են և կլուծեն: և մեր կուսակցությունը հաջող կերպով լրտծում են և կլուծեն:

Յեզ յեթե Խորհրդացին Միության սահմաններից դուրս թշնամիների վուները այնպես յեռ են գալիս, վոր նրանք չեն համբերում և ուղում են շոշափել Խորհրդացին Միության սահմանները, ապա խորհրդացին ժողովուրդը ներկայումս բոլոր անհրաժեշտ միջոցներն ունի Փաշխտական բանդաները միովին ջախչախիելու համար: Յեթե թշնամին փորձի հարձակվել մեր հայրենիքի վրա, ապա շատ շուտով իր կաշու վրա կզգա մեր կարգերի ամբողջ ուժը, կոմունիստների և անկուսակցականների ամբողջ ուժը: Թշնամու բանը վա՛տ կլինի: (Բուռն ովարոկի ամբողջ ուժը:)

ցիաներ : «Ուոա» բացականչություններ : Տեղերից ճայներ . «Մեր գլարի հանձարին—ընկեր Ստալինին ուռա՛», «Ընկեր Յեժովին ուռա՛», «Ընկեր Վորոշիլովին ուռա՛») :

Ընկերնե՛ր, չե՞ վոր պատկերացնել և հարկավոր, թե ինչ եյին մտադրվում գավաճանները, խորհրդային ժողովրդի թշնամիները : Նրանք մտադրվում եյին մեր յերկրում վերականգնել կապիտալիստների և կալվածատերերի իշխանությունը, աշխատավորների վզին նորից դնել շահագործման լուծը, խլել մեր կողմից իրավունքները, մեր յերիտասարդությունից՝ իրավունքները, վերացնել կոլտնտեսությունները, և հետ տալ Փարբիկաները կապիտալիստներին, իսկ հողը՝ կալվածատերերին : Այդ յերբե՛ք չի լինի, ընկերնե՛ր : (Բուռն ովացիաներ) :

Թշնամիները քիչ վատություն չեն արել բանվորներին ու գյուղացիներին, վորտեղ վոր կարողացել են : Մենք այս տարիներին Լենինդրադում տեսել և ջարդել ենք ամեն գույնի թշնամիների :

Նրանք մեր ժողովրդին անփոխարինելի կորուստ պատճառցին՝ սպանելով Սերգեյ Միրոնովիչ Կիրովին :

Ուստի մեզ, լենինդրադցիներիս վրա, վորոնք կանգնած են ԽՍՀՄ առաջավոր Փորպատում, մեր հայրենիքի հյուսիսարևմտյան սահմանների մոտ, հսկայական պատասխանատվություն կա : Շարունակ դեպի Լենինդրադ են ձգվում թշնամիների, Փաշխոտական խոչըն գիշատիչների և նրանց փոքր գործակատարների կեղտոտ թաթերը : Շարունակ այստեղ, Լենինդրադ են սուզում լրտեսներ, դիվերսանտներ : Մենք, լենինդրադցիներս, վոչ մի վայրկյան չենք կարող մոռանալ այդ մասին և պետք է միշտ արթուն լինենք :

Վոլոդարցիները, Վոլոդարսկի ընտրական ոկրուգի աշխատավորները, Վոլոդարսկի ուայոնի Փարբիկանների ու գործարանների բանվորները մեծ դեր են խաղում մեր Խորհրդային Միության պաշտպանությունն ամբապնդելու գործում : Յես կարծում եմ, վոր վոլոդարցի ընկերներն իրենց հայրենիքի առջև պարտական չեն մնա և կանեն ամեն ինչ, ինչ իրենցից և կախված Խորհրդային Միության խաղաղ աշխատանքն ու պաշտպանությունը ամբապնդելու համար : (Բուռն ծափահարություններ) :

Ընկերնե՛ր, ճայն տալով կոմունիստների և անկուսակցականների ըլոկի թեկնածուների ոգտին, խորհրդային ժողովուրդը ճայն կտա սոցիալիստական ինդուստրիայի հետագա վերելքի ոգտին, կոլտնտեսությունների հետագա ամբապնդման ոգտին,

ունեոր և կուլտուրական կյանքի հետագա ծաղկման ոգտին, մեր հայրենիքի ազատության և անկախության ոգտին : Ընտրությունների որը մոտենում է : Բոլո՞ր դեպի ընտրությունների ժողովության ընկերներ : Թո՛ղ ընտրությունները գառնան բոլցելեցիան կուսակցության շուրջը մեր ժողովրդի միասնության հզոր կեմոնստրացիա : Թող ընտրությունները դառնան ահեղ նախադունությունը իրավունքների համար : Թո՛ղ այս ընտրությունները զգուշացում թշնամիների համար ամբողջ աշխարհի մեր բարեկամներին ցույց տան խորհրդային ժողովրդի ուժն ու համախմբվածությունը : Թող այս ընտրությունները Խորհրդային Միության սահմաններից այն կողմը յեթյունները Խորհրդային Միության վողեռքներն կասմիտալի դեմ ինքնազոհ զայքարը շարունակելու :

Բոլո՞ր դեպի ընտրությունները : Հանուն սոցիալիզմի նոր նվաճումների : Հանուն կուլտուրայի ծաղկման մեր յերկուում : Հանուն այն բանի, վոր խորհրդային մեծ, բազմամիլիոն ժողովուրդը գնա միշտ առաջ ու առաջ, նախապատրաստելով կոմունիզմի հաղթանակը :

Կեցցե՛ Խորհրդային Միության մեծ ժողովուրդը :

Կեցցե՛ մեր խորհրդային հայրենիքը :

Կեցցե՛ կոմունիստների և անկուսակցականների գաշինքը ԽՍՀ Միության Գերազույն Խորհրդի ընտրություններին :

Կեցցե՛ մեր կուսակցությունը և մեր մեծ, սիրելի Ստալինը : (Բուռն, յերկար ժամանակ չլուզ ովացիա : Բոլորը վոտի յեն կանգնում և «հնտերնացիոնալ» յերգում) :



Վ. Ի. ՅԵԺՈՎ

ՀԱՐԻ ԳՈՐԿԻ, ՔԱՂԱՔԻ ԳՈՐԿԻ-ԼԵՆԻՆՑԱՆ
ԸՆՏՐԱԿԱՆ ՈԿՐՈՒԳԻ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԺՈՂՈՎՈՒՄ
1937 թ. դեկտեմբերի 9-ին

Ընկերներ, հանդես յեկող հռետորներից հետո, վորոնք ձեր առաջ ամեն կերպ գովարանեցին իմ թեկնածությունը և վորոնք Ներքգործողկոմատի աշխատանքին այնպիսի բարձր զնահատական առին, ինձ համար հանդես գալը մի փոքր դժվար է: Ուստի թույլ տվեք ամենից առաջ այդ բարձր զնահատականն ընդունել վո՛չ թե իմ անձնական հատկությունների և անձնապես իմ մասուցած ծառայությունների հաշվին, այլ լենինի-Ստալինի կուսակցության հաշվին (փոքրկալի, յերկար ժամանակ

շլոող ծափահարություններ), այն կուսակցության հաշվին, վորը դաստիարակել են ինձ, ամեցրել, առաջ քաշել և կանգնեցրել այն տեղամասում, վորտեղ յես այսոր աշխատում եմ: (Փոքրկալի ծափահարություններ):

Ներքգործողկոմատի որդանների աշխատանքի այլպիսի բարձր զնահատականը մենք ամենից առաջ պարտական ենք մեր կուսակցությանը: Իսկ յես, իմ ուժերի և ընդունակությունների համեմատ, ջանում եմ ազնվարար և բոլշևիկորեն կատարել այն խնդիրները, վորոնք ինձ վրա դրել ե կուսակցությունը և մեր խորհրդային կառավարությունը: Իսկ մեր կուսակցությունն ամբողջ խորհրդային ժողովրդի շահերն ե արտացոլում: Հետեաբար, այդ խնդիրներն իրադորձելը բոլշևիկի համար հեշտ, պատվավոր և հաճելի բան է: (Փոքրկալի ծափահարություններ):

Ընկերներ, այստեղ հանդես յեկող հռետորներից մեկն իր ճառում բերեց մի բանաստեղծական համեմատություն. ինձ ևս թույլ տվեք բանաստեղծաբար տրամադրվել ու մի վորոշ բանաստեղծական ներածականից սկսել:

Յերբ մեռավ Վլադիմիր Իլյիչ Լենինը, յերբ մեռավ մեր կուսակցության ստեղծողը, ամբողջ մարդկության աշխատավորների առաջնորդ և ուսուցիչ Վլադիմիր Իլյիչ Լենինը, բանաստեղծներից մեկը հետեւյալը գրեց.

«Портретов Ленина не видно:

Похожих не было и нет.

Века уж дорисуют, видно,

Недорисованный портрет».

(Լենինի պատկերներ չեն յերևում—

Նմանները չեն յեղել և չկան:

Դարերը կավարտեն, յերևի,

Անավարտ մնացած պորտրեն):

Դուք, իհարկե, հասկանում եք, վոր բանաստեղծը նկատի յեւ ունեցել Վլադիմիր Իլյիչի վո՛չ թե լուսանկարչական պորտրենները, այլ նրա ամբողջ դեմքը, նրա բոլոր գործերը, և այնպես ե համարել, վոր դարձրջանի այդ մեծագույն մարդու պատկերը միայն դարերը կարող են ավարտել: Բանաստեղծը սիսալվեց ու իր հաշիվների մեջ խիստ սիսարված դուրս յեկավ: Յերեի նա մեր կուսակցությունը բավականաչափ լավ չեր ճանաչում: Գտնվեց հեղափոխության այնպիսի արվեստագետ, մեր սոցիստիստական շինարարության այնպիսի ճարտարապետ, վորը վո՛չ

թե դարերի, վո՞չ թե հարյուրավոր և նույնիսկ վո՞չ թե տասնյակ տարիների ընթացքում կարողացավ մեր խորհրդային յերկիրը չտեսնված բարձրության հանել և դրանով իսկ նկարել վլադիմիր իլյիչի պատկերը, վորի մասին բանաստեղծը գրել եր իր բանաստեղծության մեջ։ Լենինյան դարաշրջանի այդ մեծագույն, հանճարեղ արվեստագետը, սոցիալիստական շինարարության այդ ճարտարապետը, վորն իրականում նկարեց Լենինի պատկերն, ինչպիսին այն պետք է լինի, մեր առաջնորդ և ուսուցիչը ընկեր Ստալինն է։ (Փոքորկալի, յերկարատև ծափահարություններ՝ «ուռա»), ամբողջ դահլիճը վոտքի յե կանգնում)։

Ընկերներ, վլադիմիր իլյիչի պատկերը, վոր բանաստեղծը նկատի ուներ, —այդ սոցիալիզմն է, իսկ սոցիալիզմը—այդ արդեն վերացական յերազ չե, այլ ուեալությունն, այդ այն է, ինչ նվաճված և գրանցված է մեր Ստալինյան Սահմանադրության մեջ։ (Փոքորկալի, յերկարատև ծափահարություններ)։

Այդ մեծագույն հաղթանակը մենք ամենից առաջ պարագական ենք կուսակցությանը և մեր առաջնորդ ընկեր Ստալինին։ Այդ մի մարդ է, վորը կարողացել է իր մեջ ներծծել մեր ժողովրդի ամբողջ իմաստությունը։ Այդ մի մարդ է, վորը կարողացել է իր մեջ ներծծել մեր ժողովրդի բոլոր լավագույն ակնկալությունները։ Այդ մի մարդ է, վորն ամեն որ զգում է մեր ժողովրդի կարիքները և, որպորին զեկավարելով նրան, հաղթանակից հաղթանակ է առաջնորդում մեզ։ (Փոքորկալի ծափահարություններ)։

Ընկերներ, այդ մի մարդ է, վորը, լենինյան ավանդներից վո՞չ մի քայլ չնահանջելով, բոլոր գժվարությունները հաղթահարելով, մեր կուսակցությունը զեկավարելով, մեր յերկրի ժողովուրդներին զեկավարելով, կարողացավ լենինյան ժառանգությունը վո՞չ միայն պահպանել, այլև շատու շատ անդամ այդ ժառանգությունը բազմապատկել։ (Փոքորկալի, յերկարատև ծափահարություններ)։

Ընկերներ, ահա արդեն քսանմեկերորդ տարին է յեկել, ինչ ապրում ու վողջ-առողջ է մեր Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը, վոր աշխարհում առաջինն է։

Ահա՝ արդեն քսան տարի Խորհրդային Միությունը կանգնած է, ինչպես գրանիտե ժայռ, ինչպես անձմատչելի բերդ, և ամեն որ ամրանում, աճում ու ավելացնում է իր հզորությունը՝ ի սար-

սափի թշնամիների և հուրախություն ամբողջ մարդկության աշխատավորության։

Այն, ինչի մասին մարդկության լավագույն մտքերը շատ դարեր են յերազել, այն, ինչի մասին գրվել է հաղարավոր գլուխում, —այդ ամենը, ընկերնե՛ր, մի ինչվոր՝ ինչպես գիտնականներն են արտահայտվում, արսորակու, վերացական բանից ուեալ այսորվա որի յե վերածվել։ Սոցիալիզմը—այդ արդեն մարդկության մեջ յեղած լավագույն մարդկանց յերազը չե։ Սոցիալիզմը—այդ ուեալությունն է, այդ այն է, ինչ մենք գրանցել ենք մեր Ստալինյան Սահմանադրության մեջ։

Ինչպես հայտնի յե, Ստալինյան Սահմանադրությունը վո՞չ մի բառ չասաց մեր ծրագրային մերձավորագույն իննդիբների մասնին։ Նա գրանցեց միայն այն, ինչ կա իրականության մեջ։ (Փոքորկալի ծափահարություններ)։

Ընկերնե՛ր, յեթե համառոտակի ամփոփենք այն բանի արդյունքները, ինչ մենք կյանքում այսոր տեսնում և զգում ենք, ապա դրանք կարելի յե նշել շատ սահմանափակ կետերից բաղկացած ցուցակում։

Առաջին. Մեր յերկրում կապիտալիստական հարաբերություններն ընդմիշտ լիկվիդացիայի յեն յենթարկված, լիկվիդացիայի յե յենթարկված արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը, այսինքն մարդու կողմից մարդուն շահագործելու հարաբերությունները։ Այդ, ընկերնե՛ր, վո՞չ միայն նվաճված է, այլև մեր Ստալինյան Սահմանադրության մեջ գրանցված է վորպես ուեալություն։ Վերադարձ դեպի անցյալ կապիտալիստական հարաբերությունները չկա՝ և յերեք չե՛ լինի։ (Ծափահարություններ)։

Վորքան ել կապիտալիստական բանակի պարոնները ջանք թափեն, վորքան ել նրանց գործակատարները՝ արոցկիստական-բուխարինական, ոլիկովյան և ամեն տեսակ ուրիշ լրտեսները ջանք թափեն մեր յերկիրը, մեր ժողովուրդը դեպի հետ դարձնելու, այդ նրանց յերեք չե՛ հաջողվի։ (Փոքորկալի ծափահարություններ)։

Այդ, ընկերնե՛ր, նվաճված և գրանցված է Ստալինյան Սահմանադրության մեջ, և 170-միլիոնանոց ժողովուրդը մեկ մարդու պես կպաշտպանի այդ իր սեփական արյունով։ (Ծափահարություններ)։ Իսկ յերբ 170-միլիոնանոց աշխատավոր ժողովուրդը մեկ մարդու պես պաշտպանում է իր իրավունքները—այդ շատ բան է, այդ՝ ամեն ինչ է։ Զկա՝ այնպիսի ուժ, վորն այդ ժողո-

վըրդի կամքը կարողանար կոտրել և նրան նորից քշել-մտցնել կապիտալիստական լծի տակ : (Փոքորկալի ծափահարություններ) :

Դա լավագույն յերաշխիքն է հանդիսանում ա'յն բանի, վոր յերբեք վոչ-վոքի չի՝ հաջողվի մեր յերկիրը դեպի հետ դարձնել : (Փոքորկալի ծափահարություններ) :

Այս ե, ընկերնե՛ր, մեր քսանամյա տիրապետության առաջին արդյունքը : Յես ասում եմ մեր—նշանակում ե՝ բանվորների և դյուլացիների տիրապետության :

Յերկրորդ . Յերկրորդ արդյունքը, այն ևս նվաճված և գրանցված և մեր Ստալինյան Սահմանադրության մեջ : Խորհրդային կարգերի նույնիսկ ամենաթունդ թշնամին այժմ այս արդյունքը չի՝ կարող ժխտել :

Այս արդյունքն արտահայտվում է նրանով, վոր մեր յերկիրն արդքատ, հետամնաց, անկուլտուրական, ծեծկված յերկրից, մի յերկրից, վորն, ըստ եյության, կիսագաղութ եր հանդիսանում, մի յերկրից, վորին ոտարերկրյա կապիտալը շահագործում եր և նրա հարստությունների հաշվին իր զրապանն եր լցնում, —բոլոր տեսակետներից առաջավոր յերկրի վերածվեց : Նա առաջավոր գարձավ ամենից առաջ մեր արդյունաբերության ծաղկման ու դարդացման տեսակետից :

Չտեսնված կարճ ժամկետներում, այնպիսի տեմպերով, վորպիսիք աշխարհում վո՛չ մի կապիտալիստական յերկիր չգիտե, մենք կառուցեցինք մեր առաջավոր ծանր ու մեքենաշինական արդյունաբերությունը, վորը հագեցած և ժամանակակից տեխնիկայով : Իրոք վոր, ընկերնե՛ր, հանա՞ք բան ե, մեր Խորհրդային Միության հետ համեմատնեք վորեւ յերկիր, ա՛յ, թեկուղ լեռաստանը : Միմիայն մեր Մագնիսոգորսկի գործարանը 1936 թվին յերկու և կես անգամ ավելի թուշ է ձուլել, քան Լեհաստանի բոլոր մետաղագործական գործարանները՝ միասին վեցցրած :

Մեր Մագնիսոգորսկի և Կունեցկի գործարանները 1936 թվին յերեսուն տոկոսով ավելի թուշ են ձուլել, քան ձապոնիայի բոլոր գործարանները : (Փոքորկալի ծափահարություններ) :

Բայց այստեղ ի՞նչ խոսես : Դուք, գորկեցիներդ, այդ ավելի շատ եք տեսնում ձեր սեփական մարզի փորձով, քան վորեւ ուրիշը : Բավական ե հայացք գցել Գորկու ավտոգործարանի և Գորկիում նոր կառուցված ևս մի զույգ գործարանների վրա, վոր

մեկ անդամից պարզ դառնա մեր սոցիալիստական շինարարության ամբողջ վիթխարի թափը :

Յերրորդ . Մեր ամբողջ յերկրի աճման տեսակետից ե՛լ ավելի լուրջ նվաճում է հանդիսանում դյուլատնտեսության կոլեկտիվացումը : Այս ամենից ավելի դժվարին խնդիրը նույնպես հաջողությամբ լուծվեց հարաբերականորեն կարճ ժամկետում : Մեր դյուլատնտեսությունն ամենահետամնաց, բաժան-բաժան, դաճաճացին, անհատական տնտեսություննից վերածվեց աշխարհիս ամենախոշոր կոլեկտիվ տնտեսության, վորը հագեցած և աշխարհում չտեսնված առաջավոր տեխնիկայով : Հարցուր-հազարավոր տրակտորներ և կոմբայններ հետացըրել են դյուլացու տաժանակիր աշխատանքի արտադրողականությունը բարձրացրել են չտեսնված չափերով :

Դրանով մենք, մեկ կողմից, վերջնականապես խախտել ենք և լիկվիդացիայի յենթարկել կապիտալիստական հարաբերությունների աճման, այսինքն կապիտալիզմի աճման ամեն մի հնարավորություն, լիկվիդացիայի յենք յենթարկել արտադրության միջոցների ամեն մի մասնավոր սեփականություն և, մյուս կողմից, լուծել ենք աշխատանքի արտադրողականությունը դյուլատնտեսության մեջ բարձրացնելու մեծագույն խնդիրը : Վերցնենք թեկուղ այսպիսի որինակ : Դուք գիտեք, վոր 1936 թվականը յերաշտային տարի յեր : Իր յերաշտայնությամբ նա, թերևս, հավասար եր 1921 թվին, այսինքն այնպիսի տարու, յերբ ամբողջ Պոլոժյան և Խորհրդային Միության միքանի ուրիշ մասեր բռնըված եյին հոկայական անբերբիությամբ ու վորպես դրա հետեւանք՝ սովոր : Իսկ ա՛յ, 1936 թվին, չորրէիլ այն բանի, վոր մեղնում դյուլատնտեսությունը կոլեկտիվացված եր, մենք, ընկերնե՛ր, վո՛չ միայն սովոր չկրցեցինք, այլև, ընդհակառակը, մեր կոլտնտեսությունները շարունակեցին ամբանալ : Այս հաջողություններն, ընկերնե՛ր, նույնպես նվաճված են և գրանցված Ստալինյան Սահմանադրության մեջ : Յեկ այժմ վորքան ել իրենց միխթարեն պարոնայք կապիտալիստներն ու նրանց գործակատարները՝ արցոցիստները և բուժարինյան-ոլիկովյան սրբիկաներն, իրենց հույսը կուլակի, անհատական տնտեսության վրա դնելով, նրանց չի՝ հաջողվի մեզ հետ դարձնել : (Ծափահարություններ) :

Մենք վոչ-վոքի թուղլ չենք տա մեր կոլտնտեսային անտեսությունը դարձնելու դեպքի հետ դեպի առաջված, կապիտալիստական

Հարաբերությունները։ Կալվածատիրական և կուլակային լծից ազատվելով, մեր կողմնտեսային՝ գյուղացիությունը կկարողանա պաշտպանել իր կողմնտեսային աշխատանքի շահերը, վորը նրան տալիս և անչափելիորեն ավելի մեծ ողուաներ, քան մուրացկանային, կուլակից կախված, յեղանակից, աստծուց, սատանայից, ումից կուղեք՝ կախված, բաժան-բաժան անհատական տնտեսությունը։

Մեր գյուղացիությունն այդ կախումից ընդմիշտ հեռացել է, և վոչ-վոքի չի՛ հաջողվի նրան հետ դարձնել դեպի բաժան-բաժան, մանր տնտեսությունը։ (Ծափակարություններ)։

Չորրորդ. Չորրորդ նվաճված ու գրանցված արդյունքը—դա՝ գործազրկության լիկվիդացիան է։

Զեր մեջ, ընկերներ, այսուեղ շատ կան հին բանվորներ, վորոնք գիտեն, թե առանց աշխատանքի մնալու ահն ինչ պատուհաս եր, ինչ սպառնալիք, ինչ մշտական լարում եր առաջացնում։

Իսկ մենք ձեզ հետ մեկտեղ արդեն յոթ տարի յե, վոր նույնիսկ չդիտենք, թե գործազրկությունն ինչ է։ Գործազրկությունը, առանց աշխատանքի մնալու ահը մեզ համար ավանդության աշխարհն և անցել։ Յեվ այդ—սոցիալիստական հեղափոխության գլխավորներից մեկն է։

Գործազրկության լիկվիդացիան ինքնին արդեն չտեսնված բարձրության և հասցրել մեր յերկրի բանվոր գասակարգի կենսական մակարդակը։ Սակայն դրա հետ մեկտեղ տարեցտարի մեր բանվոր դասակարգի նյութական բարեկեցությունը անընդհատ աճում և ավելանում է։

Տարեցտարի աճում և աշխատավարձի Փոնդը, աճում են կառավարության կողմից բնակարանային շինարարության համար արվող հատկացումները, աճում են ապահովագրական Փոնդերը, աճում և բուժական և սանատորական ողնությունը և այլն և այլն։

Ճիշտ է, ընկերներ, արոցկիստական-բուխարինական բանակին պատկանող վորոշ «խելոքներ» յերբեմն անտրամադիր չեն խոցելու մեզ այն բանով, թե Արևմտյան Յեվրոպայում առանձին բանվորները մեր առանձին բանվորներից բարձր աշխատավարձ են ստանում։

Առաջին, մեր ստախանովականները ևս պակաս չեն վաստակում, այլ նույնիսկ ավելի, իսկ յերկրորդ՝ գլխավորն այդ չե։ Գլխավորն այն է, վոր ամբողջությամբ վերցրած ամբողջ բանվոր

դասակարգի կենսական մակարդակը գտնվում է Արևմտյան Յեվրոպայի և Ամերիկայի համար չտեսնված բարձրության վրա։

Մեր արտասահմանյան ընկեր-բանվորներն առայժմ կարող են միայն յերազել բանվոր դասակարգի այն կենսական մակարդակի մասին, վոր մենք ունենք իշխան հԵՀՄ մեջ։

Այդ, ընկերներ, նվաճված և գրանցված և մեր Ստալինյան Սահմանադրության մեջ վորպես ռեալություն, և այդ նվաճումը վոչ-վոք չի կարող խլել մեզանից։ (Փոքորկալի ծափահարություններ)։

Հինգերորդ. Հինգերորդ նվաճված ու գրանցված արդյունքը—այդ ընդհանուր պարտադիր ուսումն է, այդ անվճար կըրթության իրավունքն է։ Մեր յերիտասարդությունը դրան այնքան և սովորել, վոր հակառակի մասին վո՛չ մի պատկերացում չունի։ Հաճախ մեր յերիտասարդությունն այսպես և զատում՝ յեթե յետ ցանկանում եմ սովորել և կրթություն ունենալ, ապա պետությունը պարտավոր և ինձ անվճար սովորեցնել և նույնիսկ ապրուստ տալ։ Մեզանում դրան վարժվել են։ Իսկ ասցեք, մի՞թե առաջ այդպես եր։ Ուսման իրավունքի համար, մանավանդ միջնակարգ և բարձրագույն ուսումնական հիմնարկներում, սահմանված ու աճում են, մեզանում ամեն մի բանվոր, ամեն մի կոլանտեսական անվճար կրթություն և ստանում գոյություն ունեցող սոցիալական սահմանափակումների մասին, բանվորներն ու գյուղացիները, հազվագյուտ առանձին դեպքերի բացառությամբ, համարյա չեյին կարող հարկավոր կրթությունն ստանալ, վորքան ել նրանք տաղանդավոր լինելին։ Իսկ մեղանում ուսումն անվճար է, մեզանում ամեն մի բանվոր, ամեն մի կոլանտեսական անվճար կրթություն և ստանում, սկսած տարրականից և վերջացրած բարձրագույնով։ Այդ գեռ քիչ է։ միջնակարգ կամ բարձրագույն ուսումնական հիմնարկ գալով, նա պետությունից դեռ թոշակ ել և ստանում։ Այժմ մեր յերիտասարդության համար վայրենի բան կթվար, յեթե մի գեղեցիկ ժամանակ նրանց ասելին, թե նրանց արդել վում և սովորել և յեթե նրանք ցանկանում են սովորել, ապա ուսման իրավունքի համար բարձր դրույք պետք և վճարեն։ Յեթե դա ծառանար մեր յերիտասարդության առաջ վորպես ռեալ բան, նրանք վրովի ծոցը կըսկին այդպիսի իշխանությունը և ճիշտ վարված կլինելին, վորովհետև այդ կարող և անել միայն կապիտալիստների իշխանությունը։

Մեր աշխատավոր ժողովությը, մեր յերիտասարդությունն այդ մեծագույն նվաճումը յերեք և վոչ-վոքի չե՛ն տա: (Փոքրորկալի ծափահարություններ):

Վեցերորդ. Ընկերնե՛ր, ցարիզմի և առհասարակ կապիտալիստական յերկրների ամենամռայլ եջերից մեկն և հանդիսանում ազգային հարցի լուծված չլինելը—ազգերի անհավասարության հարցը: Մեզ մոտ այժմ ազգերի անհավասարության իմաստով ազգային հարց առանձին ժողովուրդների միջև գոյություն չունի: Խորհրդային յերկիրը՝ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը—իրենից ներկայացնում և շատ ազգերի միություն, ազգերի բարեկամակցություն, վորոնք միասնաբար են կառուցում մեծ խորհրդային սոցիալիստական պետությունը: Այդ, ընկերնե՛ր, նվաճված և դրանցված և Ստալինյան Սահմանադրության մեջ: Այդ, ընկերնե՛ր, վոչ-վոքի կարող խլել մեղանից: (Փոքրորկալի ծափահարություններ):

Այն հույսը, վոր կապիտալիստները դրել եյին ազգային յերկապառակության վրա, իդերև և հանված: Մեր խորհրդային ժողովուրդները մեկ մարզու տիս կողաշտպաննեն իրենց սոցիալիստական հայրենիքը: (Ծափահարություններ):

Յորերորդ. Յեկ, վերջապես, վերջին արդյունքը — այդ՝ կանաց հավասարության հարցն ե:

Ցարիզմի որով կանաց ունեցած մռայլ, սորկական անցյալն ընդմիջուած անցել և ավանդության աշխարհը:

Հոկտեմբերյան Հեղափոխության հաղթանակի հետևանքով, մեր հաղթական սոցիալիստական շինարարության հետևանքով մեր կանայք նվաճել և ոգտվում են նույն իրավունքներով, ինչ և տղամարդիկ:

ԽՍՀՄ մեջ կոչը տրվում է տղամարդկանց հետ հավասար իրավունքներ անտեսական, պետական, կուլտուրական և հասարակական-քաղաքական կյանքի բոլոր բնագավառներում:

Այդ նվաճված ու զբանցված է մեր Ստալինյան Սահմանադրության մեջ, և այդ նվաճումը վոչ-վոք չի' կարող խլել մեղանից: (Ծափահարություններ):

Մեր կանայք իրենց այդ իրավունքները կողաշտպաննեն բոլոր ուժերով: (Ծափահարություններ):

Ահա՛, ընկերնե՛ր, համառոտակի տածած, այն հիմնական արդյունքները, վորոնք մեղանում նվաճված և դրանցված են

Ստալինյան Սահմանադրության մեջ: Այդ ուշալություն ե, այդ այն ե, ինչ վոր այժմ կա:

Սակայն, ընկերնե՛ր, այդ վիթխարի նվաճումները մենք հեշտությամբ ձեռք չենք բերել: Նրանք նվաճված են բանվոր դաստիարակի և աշխատավոր գյուղացիության քրտինքով և արյունով: Նախքան այդ հաջողությունները ձեռք բերելը, հարկ յեղական հաջողությունները գուշակությունների հաղթահարման համար մենք քիչ զուհեր չափինք: Բանվոր դաստիարակի գործի համար, սոցիալիզմի գործի համար մեր հայրենիքի քիչ լավագույն վորդիներ չգուցիլին իրենց կյանքը:

Ձեզնից շատերն են հիշում քաղաքացիական պատերազմի տարիները, յերբ աղքատ Ռուսաստանը, վորին, բացի գրանից, միայն կապահանգամ պատերազմն ուժասպառ եր արել, բոլորու կմարդիկալիստական պատերազմից ավելացած, առանց հացի, առանց տրանսպորտի, առանց մեքենաների, մերկ, բորիկ, տառացիորեն ատամներով կովում եր ամենաառաջավոր տեխնիկայով զինված ինտերվենտների և ապիտակ-գվարդիական վոհմակի դեմ:

Քաղաքացիական պատերազմից հետո ել մենք քիչ զոհեր ու զրկանքներ չկրցինք՝ ձեռք բերելու համար այն հաջողությունները, վորոնց արդյունքներն այժմ, Խորհրդային պետության գոյության քսան տարուց հետո, հանրագումարի յինք բերում:

Այժմ դուք տեսնում եք, ընկերնե՛ր, վոր այդ գոհերը հարյուրապատիկ արդյունքով հատուցվեցին: Բայց մենք այդ զոհերի մասին յերեք չենք մոռանա, մենք նրանց միշտ կհշենք: (Ծափահարություններ):

Արդյուք մենք կարո՞ղ եյինք առանց զոհերի յոլա գնալ: Իսարկե, վո՞չ, ընկերնե՛ր: Սոցիալիզմը յերկնքից չի ընկնում, այն հարկավոր և նվաճել պայքարում: Առանց կապիտալիստների և կալվածատերերի, կուլտակների և առեւրականների կատաղի շիմաղը ության հաղթահարման՝ բանվորների և դյուղացիների պետությունն ամբացնել չի' կարելի և սոցիալիզմ չե՛ս նվաճել:

Հենց այժմ ել, ընկերնե՛ր, պայքարը դեռ վերջացած չե: Մեր ձանապարհին դեռ քիչ դժվարություններ չե՛ն պատահ: Զպետք ե մոռանալ, վոր մեր յերկիրը թշնամական կապիտալիստական շրջապատման մեջ և գտնվում, իսկ կապիտալիստաներն, ընկերնե՛ր, մեզ յերեկ չե՛ն ների մեր հաղթանակները: Դեռ

ավելին. վորքան մենք ավելի ուժեղ ենք դառնում, վորքան մենք ավելի հարուստ ենք դառնում, այնքան ավելի շատ զայրույթ ենք առաջ բերում ֆաշիստացող բուրժուալիստի լակիրչ վոհմակի մեջ, վորը պատրաստվում ե պատերազմելու մեր դեմ և վորն առայժմ խմբերով լրտեսներ, դեկերսանտներ ու վնասարարներ և ուղարկում մեղ մոտ: Նա կապիտալիստական դասակարգերի դեռ վերջնականապես չվոչնչացրած մնացորդներին վոգենչում և պայքարելու խորհրդային յերկրի աշխատավոր ժողովրդի դեմ, իր ֆաշիստական դրոշների տակ զորահավաքելով կուլակների, քրեական հանցավորների և տրոցկիստական-բուխարինական վիժվածքները: Տրոցկիստական-բուխարինական վիժվածքների այդ ամրող նողկալի վոհմակը մեր դեմ մղած պայքարում կիրառում ե ամենակեղոտա, ամենամութ, ամենահեշավոր ստորություններ, վորպեսզի վորեւ կերպ դադարեցնի մեր ժողովրդի հաղթական առաջնութացը դեպի կոմունիզմ:

Դասակարգային թշնամու կողմից մեր դեմ մղած պայքարի այդ նույր մեթոդները ճանաչելու մեր հմտությունից, խորհրդային հողն այդ բոլոր գարշելիներից վերջնականապես մաքրելու մեր կամքից փոքր չափով կախված չեն լինի մեր հետազահղողությունները: Յեւ այդ դեռ քիչ ե, ընկերներ, զոհերն ել ավելի քիչ կլինեն: Քիչ հաջողություններ կախված չեն լինի մեր հեղափոխական բոլցեկիյան զգոնության բարձրացումից: Դրա համար մենք ունենք ավելի քան բավականաչափ դասեր: Ընկերներ, մենք, իհարկե, զբաղված եյինք մեր խաղաղ աշխատանքով, մենք զբաղված եյինք մեր մեծ շինարարությամբ: Մենք յերբեմն չափազանց շատ եյինք հափշտակվում մեր հաջողություններով, մեր շինարարության ստվերու կողմը չտեսնելով, և, վոր ամենից կարեռն ե, չտեսնելով դասակարգային թշնամուն, վորն ոգտագործեց մեր հափշտակվելը հաջողություններով և դադարաբար վնասեց մեղ վորտեղ վոր կարող եր ու ինչով վոր կարող եր:

Ընկերներ, յես ցանկանում եմ հիշեցնել ձեզ մի դաժան դաս: Յերեք տարի սրանից առաջ մենք զոհ տվինք մեր կուսակցության լավագույն զավակին, լավագույն ստալինականին, բյուրեղի մաքրություն ունեցող մարդուն, բոլցեկի-հեղափոխականին, մեր կուսակցության ղեկավարներից մեկին՝ Մերդեյ Միքոնովիչ Կիրովին:

Այդ դասը մենք յերբեք չենք մոռանա:

Այդ զոհը մենք յերբեք չենք ների: Կիրովի դլիս համար

տրոցկիստական-բուխարինական լրտեսական վոհմակը մեզ թանգ կվճարի: (Փոքորկալի ծափահարություններ):

(Այնուհետև ընկ. Յեժովը, բնության առնելով տրոցկիստական-զինովյավական-բուխարինական բանդայի դեմ կուսակցության մղած պայքարի պատմությունը, տալիս ե բուրժուազիայի ծառայության մեջ գտնվող տրոցկիստական-բուխարինական վոհմակի խոր բնութագիրը: Նա խոսում ե այն ատելության մասին, վոր խորհրդային ժողովուրդները տածում են դեպի ստարերկրյա ենտախուզությունների սոոր ֆաշիստական-բուխարինական գործակալները: Տրոցկիստական-զինովյավական և բուխարինական-ֆաշիստական բանդայի դեմ մղած պայքարի վերլուծության վերջում ընկ. Յեժովը բացականչում ե «Մեր խորհրդային ժողովուրդը կլոչնչացնի պարոնայք կապիտալիստների այդ բոլոր արգահատելի գործակատարներին, բանվոր դասակարգի և բոլոր աշխատավորների այդ սոոր թշնամիներին, առաջնոց մնացորդի»):

Ընկերներ, յես հարաբենանում եմ, վոր իմ թեկնածություն գերազույն լորհրդի համար առաջադրված ե Գորկու մարզի խոշորագույն դործարանների բանվորների կողմից: Յես հասկանում եմ, վոր իմ թեկնածությունը դուք միայն իմ անձնական հատկությունների համար չեն, վոր դրեւ եք: Ինչպես յերեւում, յես, վորպես մեր կուսակցության զավակ, վորին դաստիարակել ե Լենինի-Ստալինի կուսակցությունը, արժանացել եմ ձեր վստահությանը, արժանացել եմ ժողովրդի վստահությանը: Դե՛, իսկ աշխատավոր ժողովրդի վստահությունը—բոլցեկի համար այդ ամեն ինչ ե: Առանց ժողովրդի վստահության մեղ համար կյանք ել չկա: (Ծափահարություններ):


Ընկերներ, յես կաշխատեմ ձեր այդ վստահությունն արդարացնել: (Ծափահարություններ): Քանի իմ ուժերը կրավականացնեն, քանի իմ առաջնությունը կրավականացնի, ձեզ հետմասին յես վայր չեմ գցի Լենինի-Ստալինի մեր կոմունիստական կուսակցության մեծ գրոշը: (Փոքորկալի, յերկար ժամանակ շլուզ ծափահարություններ):

Խորհրդային ժողովրդի շահերը իմ կենսական շահերն են: Այդ ժողովրդի շահերը յես պատրաստ եմ իմ արյունով պաշտպանել: (Ծափահարություններ): Կուսակցությունն ինձ այդպիս ե դաստիարակել, ընկերներ, յես այդպիս եմ մտածում, որը ուրին մեզ այդպիս ե սովորեցնում ընկեր Ստալինը: (Փոքորկալի, յերկարատև ծափահարություններ):

Կեցցե՛ մեր հզոր խորհրդային հայրենիքը։ Թող' նա ծաղկի ու ամրանա ի սարսափ թշնամիների և ի փառս աշխատավորների։ (Փոք-որկալի, յերկարանի ծափահարություններ)։

Կեցցե՛ լենինի—Ստալինի մեր մեծ և անհաղթելի կուսակցությունը։ (Ծափահարություններ)։

Կեցցե՛ այն մարդը, վորի անունը մեզ բոլորիս համար առանձնապես թանգ է, կեցցե՛ մեր կուսակցության ղեկավար, մեր ժողովրդի ղեկավար ընկեր Ստալինը։ (Վորոտընդոստ ծափահարություններ, ամբողջ դահլիճը վոտքի յե կանգնում, բացականչյություններ՝ «Ուռա՛ ընկեր Ստալինին»։ Նվազախումբն «ինտերնացիոնալ» է նվազում)։



Վ. Ա. ԽՐՈՒՇՉՉՈՎ

ՃԱՌ Ա.ԲՏԱՍԱՆԱՌ ՄՈՍԿՎԱՑԻ
ԿԱՐՄԻՐ ՊՐԵՍՆՅԱ ՌԱՅՈՆԻ
ՆԱԽԾԵՏՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՈՒՄ
1937 թ. նոյեմբերի 15-ին

Ընկերնե՛ր, Գերադույն Խորհրդի պատգամավորներից վո-
մանք, վորոնք ինձնից սուած են յեղել ույսոնական նախընտրական
խորհրդակցություններում՝ ինձ սասում ելին։ «Յերբ դալիս ես այս
ուայոնական խորհրդակցությունը՝ քեզ այնպես են դովում», վոր
մարդ իրեն զգում է, ինչպես շիկացած կրակի վրա նստած։ (Ծա-
փահարություններ)։ Այժմ յես ինքս այդ բանն զգացի։ Յեւ, իս-
կապես վոր, մարդ իրեն մի տեսակ անհարմար ե զգում, յերբ

այնքան ծառայություններ են վերագրում առանձին մարդկանց, վորոնք հանդիսանում են Լենինի—Ստալինի մեր կուսակցության սոսկ հավատարիմ զինվորները։ (Ծափահարություններ)։

Ինձ թույլ տվեք շնորհակալություն հայտնել այն գործարանների, Փարբիկաների, հիմնարկների աշխատավորներին, վորոնք իմ թեկնածությունն են դրել ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի պատգամավոր լինելու համար։ Թույլ տվեք, ընկե՛ր ընտրողներ, շնորհակալություն հայտնել ձեզ և հավաստիացնել, թե բոլոր ուժերս կտամ այն բանին, վորակեազի արդարացնեմ ձեր վստահությունը։ Իսկ ձեր վստահությունը, ընկերնե՛ր, յես այնպես եմ հասկանում, վոր պետք ե առաջիկայում ևս պայքարել Լենինի—Ստալինի մեր կուսակցության շարքերի միասնության համար (ծափահարություններ), պայքարել կուսակցության գործի համար, ջարդութչուր անել Փաշիզմի ստոր գործականներին—տրոցկիստական-բուխարինական վնասարարներին, դիվերսանտներին ու լրտեսներին,—պայքարել մարդու կողմից մարդուն շահագործելն ամբողջ յերկրագնդի վրա վոչնչացնելու համար։ (Ծափահարություններ)։

Նախընտրական ժողովներում բանվորները, բանվորուհիները, ծառայողները, ինժեներները, տեխնիկները, գիտնականները, կոլտնտեսականները, կոլտնտեսուհիները և բոլոր աշխատավորները,—բոլոր նրանք, ում համար թանդ ե մեր չքնաղ հայրենիքը, բոլոր նրանք, քննարկելով ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի անդամության թեկնածուներին՝ տալիս են սոցիալիզմի հաղթությունների հանրագումարները։ Մեր հաջողությունները հսկայական են։ Յեկ այդ հաջողությունների համար մենք պարտական ենք մեր բոլշևիկյան կուսակցությանը, Լենինի—Ստալինի կուսակցությանը, և առաջին հերթին պարտական ենք մեր մեծ Ստալինին։ (Բուռն ծափահարություններ, բացականչություններ՝ «ուռա»)։

Մեր կուսակցությունը Լենինի ու Ստալինի գլխավորությամբ կոչեց բանվոր դասակարգին և առաց նրան։ դու պետք ե լինես յերկրի տերը։ Այս ամենը, ինչ ստեղծված ե յերկրի վրա, արված ե բանվոր դասակարգի ձեռքերով, աշխատավոր դյուզացիության ձեռքերով։ Ուստի և դուք, բանվոր դասակարգի և աշխատավոր դյուզացիությունդ, պետք ե վոչնչացնեք շահագործողներին, ձեր ձեռքը վերցնեք իշխանությունը և մի այնպիսի յերկիր կառուցեք, վորի նմանը աշխարհը չի տեսել, կառուցեք սոցիալիզմ։ (Ծափահարություններ)։

Ընկերնե՛ր, մենք այժմ կարող ենք ասել, վոր Լենինի խոսքերը, Ստալինի խոսքերը արդարացել են։ (Ծափահարություններ)։ Բանվոր դասակարգը մեր յերկրում կառուցել ե սոցիալիստական տնտեսություն։ Մեր յերկրում ամեն ինչ պատկանում է աշխատավոր ժողովրդին։ Մեզանում տեղ չունի մարդու կողմից մարդուն շահագործելը։

Բայց, ընկերնե՛ր, այս բանը հեշտությամբ չի հաջողվել։ Մենք հաղթեցինք քաղաքացիական պատերազմում, ջախջախեցինք թշնամիներին, վոնդեցինք ինտերվենտներին և ամրացրինք խորհուրդների իշխանությունը։ Բայց կուսակցությունն իմացել ե, —և այս բանը տեսել ե ընկեր Ստալինը, ինչպես վոչայլոք, —վոր մենք ապրում ենք կապիտալիստական ընջապատում, վոր բանվոր դասակարգի թշնամիները—կապիտալիստները, Փաշիստները—ուժեր են հավաքելու մեր գեմ, հարված են պատրաստելու Խորհրդային յերկրի գեմ, և պետք ե արագորեն բարձրացնել յերկրի պաշտպանունակությունը, բարձրացնել նրա նյութական ու կուտարական մակարդակը։ Յեկ ընկեր Ստալինը առաջիկացրեց մեր տնտեսության դարրացման խիզախ, ստալինյան պլանը—առաջին հնդամյակի պլանը։ Մենք չենք ունեցել մեր կագրերը, մենք չենք ունեցել բանվոր դասակարգից դուրս յեկածիագրերը, մենք չենք ունեցել փող։ Կապիտալիստական մեր ինժեներները, մենք չենք ունեցել փող։ Եյլուր յերկրները դարձացել են ի հաշիվ փոխառությունների, բոլոր յերկրների կողովածման։ Մենք մեր հույսը միայն մեր վրա կարող ենք գնել։

Տրոցկիստները, զինովյեկականները, աջ դավաճանները վոտքի կանգնեցին կուսակցության դիմավոր գծի գեմ։ Նրանք ուղարկել ենին մեր յերկրի գարգացումը կասեցնել, նրանք ուղղում ենին զինաթափ անել մեր յերկիրը դասակարգային թշնամիների հանդեպ։ Յեկ այստեղ մենք պետք ե ուղղակի ասենք, յեթե մեր զանում հեղափոխությունը զարդարում ե և հսկայական հաջողությունների յի հասել՝ մենք այդ բանը պարտական ենք մեր մեծ Ստալինին (ծափահարություններ), վորի զեկավարությամբ մենք անցկացրինք ամրող պայքարը թշնամիների գեմ (ծափահարություններ, բացականչություններ՝ «ուռա»), ջարդութչուր արինք տրոցկիստներին, զինովյեկականներին, աջերին և այլ բոլոր գարշելիներին։

Մենք հաջողությամբ անցկացրինք թե առաջին և թե յերկրորդ հնդամյակերը։ Դա հեշտ ինդիր չեր։ Յեթե մենք ձեզ հետ

միասին չիրագործելինք ստալինյան յերկու հնդամյակները՝
պլանները, մենք ձեզ հետ միասին տկլոր, տկլոր կլինելինք այժմ։
Այժմ, յերբ թշնամին վուաքից գլուխ զինվում ե, յերբ Փաշիստնե-
րը թափառում են մեր սահմանների չորս բոլորը, յեթե վոր մենք
չունենայինք արդյունաբերություն, յեթե վոր, հետևաբար,
մենք չունենայինք սպասազենք մեր կարմիր Բանակի համար,
մենք կհետապնդինք թշնամու պայմանները սոցիալիզմի դեմ
կովելու համար, բանվոր գասակարգի դեմ կովելու համար։

Մենք մեր ինդուստրիան ստեղծեցինք, մենք ստեղծեցինք մի
անխօրտակելի բանակ, վորը ահավոր ե սոցիալիզմի թշնամի-
ների համար։ Յեզ մենք այս բանին հասանք Լենինի—Մտալինի
կուսակցության զեկավարությամբ։

Վաղեկմիք իլլիչ Լենինը յերազում եր հարյուր հազար
տրակտորների մասին։ Յեթե մենք այդքան տրակտորներ ունե-
նայինք, ասում եր Լենինը, գյուղացին կասեր, վոր նա «կոմու-
նիայի» կողմն ե։ Լենինի ավանդները մեր կուսակցությունը կա-
տարեց մեծ Ստալինի զեկավարությամբ։ (Ծափահարու-
թյուններ)։ Մեր խորհրդային դաշտերում բանում են 400 հազա-
րից ավելի տրակտորներ, մեր խորհրդային դաշտերում բանում
են կոմբայններ, ամենակատարելազորժած մեքենաներ։ Մեր
գյուղատնտեսությունը՝ աշխարհում ամենախոշոր գյուղատնտե-
սությունն ե։ Կոլտնտեսությունների ու բարձր տեխնիկայի հի-
մունքով մենք կարողացել ենք բարձրացնել գյուղացուն—չքայլո-
րին, միջակին այն մակարդակին, վորի վրա նաև գտնվում ե
այժմ, դուրս բերել նրան աղքատությունից, խափարից, հետա-
մացությունից։

Մեր յերկիրն անճանաչելի յէ դարձել։ Այժմ հարցրեք միջակ
տարիքի մարդկանց, այսպես կոչված հասակավոր մարդկանց, —
թե անցած ժամանակներում քանի՞ կին յերեխաներ եյին ծնուն-
ծննդատներում։ Հասակավոր կինը կապտասիաներ։ ի՞նչ ե,
դժվել ես։ Լուշա տատմերը—այ քեզ բժիշկ, այ քեզ բուժակ, այ
քեզ մանկաբարձուհի, այ քեզ ամեն ինչ։ Իսկ մի որ անց, հենց
վոր ծնեցի, վոտքի յելա—դրազիիր վառարանով կամ դաշտ
գնա, իսկ յերեխին չոռ չի դիպչի, իսկ յեթե դիպչի ել—մի ուրիշը
կծնի։ Այսպես ե յեղել այն պատճառով, վոր աղքատություն ե
յեղել, վայրենություն ե յեղել։ Իսկ ա՞յլմ։ Այժմ այդ տատմեր
լուշային գլխից ուղղ կանի կոլտնտեսուհին կամ բանվորուհին։
Նրանք ողտում են բժշկից, մանկամատրներից։

Մի աեսեք, թե մենք այժմ քանի դպրոց ենք կառուցում։
Այս տարի 71 դպրոց կառուցեցինք, անցյալ տարի 152 դպրոց
կառուցեցինք։ նախանցյալ տարի 72 դպրոց։ Մյուս տարի ծրագ-
րում ենք կառուցել 60 դպրոց։ Յեզ այս ամենը դեռ քիչ ե։ Շատ
դպրոցներում սովորեցնում են դեռ յերկու հերթի։ ինչո՞ւ յե-
այսպես։ Այսպես ե, ընկերներ, նրա համար, վոր այժմ բոլորն
են սովորում։ Առաջներում, վորպեսզի սովորես, պետք եր փող
ունենալ։ Հարուստ տխմարի գլուխը զոռով եյին դիտելիքներ
մացնում, իսկ նա դպրոցում նստում եր, վորպէսին փող ուներ։
Քանի տաղանդավոր, ընդունակ մարդիկ, վոր կարող եյին մարդ-
կությունը հարստացնել գիտելիքներով՝ կորել են, չունենալով
փող, չտեսնելով լույս։ Իսկ այժմ թող մեկը վեր կենա և ասի.
վորտեղի կամի ուրիշ այսպիսի յերկիր, ինչպիսին մերն ե, վորը
վորտեղի կամի ուրիշ այսպիսի յերկիր, կոլտնտեսային գյուղացիությա-
նը, բանվոր աշխատավորներին կրթության իրավունքը, վոր վայե-
նը, բանվոր աշխատավորներին կրթության իրավունքը։ Այսպիսի յերկիր չկա։ (Ծափահա-
րություններ)։

Ընկերներ, չին ժողովրդական առածն առում ե։ տաքացրու-
ովին քո ծոցում՝ նա քեզ կկծի և դու կմենես։ Ոճին սատկացրու-
ովին ծոցում՝ նա քեզ կկծի և դու կմենես։ Ոճին սատկացրու-
ովին ծոցում՝ վորտեղ դու նրանց յերեան բերիր։ (Ծափա-
հարություններ)։ Մենք պետք ե սրիկաններին, դավաճաններին
հարություններ։ Մենք պետք ել վոր մենք նրանց ցուցաբերենք։ Յեթե
վոչնչացնենք, վորտեղ ել վոր մենք նրանց ցուցաբերենք։ Յեթե
կաղման կաղման կուսակցության շուրջը։ Թշնամին դի-
շարքերը մեր բոլշեիկյան կուսակցության մեջ ե, իսկ բոլշեիկյան կուսակ-
ցության կուսակցության մեջ ե, իսկ բոլշեիկյան կուսակցության ուժը՝
բանվոր գասակարգի, աշխատավոր մողովրդի ցության ուժը՝
հետ սերտ կապ ունենալու մեջ ե։

Մեր ոքինակը վոգեչնչում ե բոլոր յերկրների բանվոր-
ներին։ Երանք մեր յերկրի որինակից տեսնում են, թէ ի՞նչ հա-
ջողությունների կարող ե հանել բանվոր գասակարգը, յեթե նա
վոչնչացնի իր շահագործողներին։ Ֆաշիստները՝ խելացնորված
մի թշնամի յեն, վորը կարող ե նտեկել յեր վրա, վորպես վիրա-
տի թշնամի յեն, վորը կարող ե նտեկել յեր վրա, վորպես վիրա-

վորիված գաղան: Ուստի և մենք պետք եւ պատրաստ լինենք հակածարված տալու, յեթե մեր վրա հարձակվեն: Մենք պետք եւ սիրենք և պահպանենք մեր կարմիր Բանակը: Լավագույն սեր, ըսլագույն հոգաստարություն մեր կարմիր Բանակի մասին, իսկ, հետեւաբար, և հոգաստարություն մեր հայրենիքի մասին.—դա նշանակում եւ տալ կարմիր Բանակին լավագույն թնդանոթներ, լավագույն ինքնաթիռներ, լավագույն տանկեր, վորպեսզի մեր մարտիկները, յեթե դա ժամանակը, կարողանան վոչնչացնել թշնամուն նրա տերիտորիայի վրա:

Ընկերնե՛ր, ահա այն ամենի համար, ինչ ստեղծել եւ մեր կուսակցությունը, ժողովուրդը սիրում է մեր կուսակցությունը, սիրում է մեր ընկեր Ստալինին: Ուստի և մեր յերկրի յուրաքանչյուր աշխատավոր հպարտությամբ եւ քվեարկելու ընկեր Ստալինի ոգտին: (Ծափահարություններ):

Հստ մեր ընտրական որենքի՝ յուրաքանչյուր թեկնածու կարող եւ քվեարկվել միայն մի ընտրական ոկրուգում: Ուստի և վոչ բոլոր աշխատավորներն են, վոր բախտ են ունենալու ուղղակի բյուլետեն տալու ընկեր Ստալինի ոգտին: Բայց, քվեարկելով ամեն մի թեկնածուի ոգտին, վորտեղ եւ վոր նա լինի տրված, յուրաքանչյուրը, ոգելով իր բյուլետենը քվեատուի, մտածելու յեւ մի բանի մասին, իր յերկրի մասին, մեր կուսակցության մասին, մեր մեծ Ստալինի մասին: (Բուռն ծափահարություններ):

Ընկերնե՛ր, յես անսահման հպարտանում եմ նրանով, վոր մեր բոլշևիկյան կուսակցության զավակն եմ հանդիսանում: (Ծափահարություններ): Յես հպարտանում եմ և ինձ համար մեծ յերջանկություն եմ համարում, վոր ինձ հարկ եւ լինում աշխատանք վարել Լենինի—Ստալինի մեր կուսակցության ղեկավարությամբ, մեր մեծ առաջնորդ—ընկեր Ստալինի ղեկավարությամբ: (Ծափահարություններ): Ընկերնե՛ր, յես իմ ուժերը չեմ ինայել, չեմ ինայում և չեմ ինայելու, ամեն ինչ մինչև վերջը կտամ նրա համար, վորպեսզի ե՛լ ավելի ամրացնենք նրա հեղինակությունը մասսաներում, ավելի ամուր շաղկապենք նրան մասսաների հետ: Ընկեր Ստալինի ղեկավարությամբ մենք ջարդուիչուր արինք թշնամիներին և կառուցեցինք սոցիալիզմ: Լենինի—Ստալինի մեր կուսակցության ղեկավարությամբ, մեր մեծ Ստալինի ղեկավարությամբ մենք

կկառուցենք կոմունիստական հասարակություն: (Ծափահարություններ):

Կեցցե՛մ մեր Խորհրդային յերկրի մեծ ժողովուրդը, վորը ցուցաբերեց արիություն, իմաստություն, վորը ցույց տվեց համայն աշխարհին, թե ինչի՞ յեւ ընդունակ ազատազրված ժողովուրդը, յեթե նա իրեն ղեկավար ունի Լենինի—Ստալինի կուսակցությունը: (Ծափահարություններ):

Կեցցե՛նա, ով համարձակ ու վստահ կերպով տանում եւ բանվոր դասակարգը, աշխատավոր գյուղացիությունը, ամբողջ յերկրի աշխատավոր ժողովուրդը ղեակի յերջանիկ կյանք,—կեցցե՛մ մեծ մեծ Ստալինը: (Բուռն ծափահարություններ, բացականչություններ՝ «ուռա»):

ՃԱԹ ԱՐՏԱՍՏԱՆԾ ԿԻԵՎՅԱՆ ՌԱՅՈՆԻ
ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՄԻՏԻՆԳՈՒՄ
1937 թ. նոյեմբերի 30-ին

Ընկերնե՛ր, ինձ թույլ տվեք չնորհակալություն հայտնել կարմիր Պրեսնյայի ընտրական ոկրուելի բանվորներին, բանվորուհիներին, ինժեներներին, տեխնիկներին, ծառայողներին, տանալիրուհիներին և բոլոր աշխատավորներին, վորոնք իմ թեկնածությունն են դրել Միության Խորհրդի պատղամավորի համար: (Բուռն ծափահարություններ):

Ընկերնե՛ր, յես բանվոր դասակարգի դավակ եմ, աշխատավոր ժողովրդի զավակ, վորին դաստիարակել եւ մեր լենինյան կուսակցությունը, վորին, ինչպես և ամբողջ կուսակցությունը, դաստիարակել եւ մեր մեծ առաջնորդ ընկեր Ստալինը: (Բուռն ծափահարություններ): Կուսակցության շարքերում յես միշտ պայքարել եմ, պայքարում եմ և պայքարելու յեմ բանվոր դասակարգի բոլոր թշնամիների դեմ, գյուղացիության բոլոր թշնամիների դեմ, մեր աշխատավոր ժողովրդի, Խորհրդակաների մեծ, չքնաղ յերկրի, սոցիալիզմի յերկրի բոլոր թշնամիների դեմ: (Ծափահարություններ): Յես յերդվում եմ, վոր վոչ մի քայլ չեմ նահանջի այն գծից, վորն անց եւ կացնում մեր լենինյան-ստալինյան կուսակցությունը, մեր մեծ Ստալինը: (Բուռն ծափահարություններ):

Բնկերնե՛ր, մեր յերկիրն այժմ գնում է դեպի Գեղագույն Խորհրդի ընտրությունները։ Քաղաքների բոլոր հրապարակներում, բոլոր գյուղերում, կոլտնտեսություններում, ձեռնարկություններում ու հիմնարկներում հավաքվում են բանվորներ, ծառայողներ, կոլտնտեսականներ, քննարկում են իրենց թեկնածուներին։ Ամբողջ ժողովուրդը բանկված է մի ավյունով, սիրո ավյունով դեպի մեր հայրենիքը, սիրով դեպի մեր լենինյանստալինյան մեծ կուսակցությունը, վորը Խորհրդային յերկիրը հասցրեց մեծ հաղթությունների։ (Ծափահարություններ)։

Ընկերնե՛ր, մենք ձեզ հետ միասին հպարտությամբ դիտում ենք բանվոր դասակարգի բոլոր թշնամիների դեմ ունեցած 20-ամյա պայքարի անցած ուղին։ Բայց, ընկեր Ստալինը մեզ անդադրում սովորեցնում է, վոր մենք չմեծամտենք։ Շատ բան է արդեն արված, բայց մենք դեռ շատ աշխատանք ունենք առաջիկայում։ Ընտրությունների նախապատրաստման այս որերին, ընտրություններ, վորոնք զուգագիպում են խորհրդային իշխանության 20-ամյա գոյությանը, մենք այնուամենայիլ մեզ թույլ ենք տալիս ասել այն մասին, թե ինչ է արված և ինչ է նվաճված, բացահայտորեն ասենք և մեր թերությունների մասին, ինչպես այդ բանը կարողանում են անել բոլշևիկները իրենց քննադատության ու ինքնաքննադատության մեջ։

